

Գլխավոր խմբագիր՝
ԳՈՂԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Խմբագրակազմ
Խմբագիր՝
ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Լրագրող՝
ՌՈՒԶԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
Լուսանկարիչ՝
ՈԱԶՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լրատվական
գործունեություն
իրականացնող՝
«Հայաստանի պետական
տնտեսագիտական
համալսարան»
պետական ոչ առևտրային
կազմակերպություն:

Վկայական N 03Ա054452:
Տրված է՝ 06.06.2002թ.:

Խմբագրության հասցեն՝
0025, Երևան,
Նալբանդյան փողոց 128,
կենտրոնական
մասնաշենք, 1-ին հարկ:
Հեռախոս՝ 58 93 65, 2 60

Համակարգչային
ձևավորումը՝
ՆԱԻՐԱ ԽՉԵՅԱՆԻ
Շապիկի ձևավորումը՝
ԷԴՈՒԱՐԴ ՔԱՆՔԱՆՅԱՆԻ

Գրանցման վկայական՝ 269:
Պատվեր՝ 52:
Տպաքանակ՝ 500:
Ծավալը՝ 3 տպ. մասով:

Խմբագրությանը
տրամադրված հեղինակների
նյութերում տեղ
գտած փաստական
ամճշտությունների
համար խմբագրությունը
պատասխանատվություն
չի կրում:
Ամսագրի նյութերն
օգտագործելիս հղումը
պարտադիր է:

Ստորագրված է
տպագրության՝
23. 04. 2012թ.:

Տպագրված է
«Ոսկան Երևանցի»
տպագրատանը:
Հասցեն՝ ք. Երևան, Նոր Նորքի
1-ին գ., Սաֆարյան 11/1-ա:

Հրատարակիչ՝ ՀՊՏՀ:
Տարածվում է անվճար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԽՈՍՔԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻՆ.....	4
ՀՊՏՀ ՌԵԿՏՈՐ ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆՆ ԱՄՓՈՓՈՒՄ Է	
ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՄԵԿ ՏԱՐԻՆ.....	5
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ 20 ՏԱՐԵԿԱՆ Է.....	7
	<i>ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ</i>
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ.....	13
ՍԱՅՐՈՒԹՅԱՆ, ՍԻՐՈ ՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐ.....	16
ԳՈՐԾԱՐԱՐ ԱՌԱԾԱՆԻ.....	19
	<i>ԱՍՏԴԻԿ ԱՔՐԱՀԱՍՅԱՆ</i>
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲՐԵՆԴ.....	21
	<i>ՎԱԼԵՐԻ ՄԻՐՁՈՅԱՆ</i>
ՀԱՅԵՐԵՆԸ՝ ՎՏԱՆԳՎԱԾ.....	24
ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....	28
	<i>ՅՈՒՐԻ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ</i>
ՀԱՄԱԿՐԵԼԻ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՐՎԵՍԸ.....	30
ԼՈՒՍԱՆԿԱՐԱՅԻՆ ԼՐԱՇԱՐՔ.....	32
ԳՈՐԾԱՐԱՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ.....	36
	<i>ՍՈՍ ԽԱՉԻԿՅԱՆ</i>
ԴԻՏԱՐԿՈՒՄ-ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.....	38
ՄԵՐ ՇՆՈՐՀԱԼԻՆԵՐԸ.....	40
	<i>ԼԻԼԻԹ ԴԱԴԱՅԱՆ</i>
ԷՄԻԼ ԳԱԶԱԶ.....	42
ՄԱՐԶԱԿԱՆ.....	45



Սիրելի՛ ընթերցող,

Ուրախ եմ, որ կրկին հանդիպելու առիթ ունենք և կարող ենք Ձեզ ներկայացնել «Տնտեսագետի» հերթական համարը՝ լի նոր և հետաքրքրաշարժ նյութերով: Անցած շրջանը մեզ համար բուռն աշխատանքային էր, որի ընթացքում լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինն իր ամբողջ ներուժով, ի թիվս այլ պարտականությունների, լծվել էր ամսագրի նոր համարի լույսընծայման աշխատանքներին:


Փոխելով ամսագրի ձևավորումը, ինչպես նաև որոշակի նորամուտություններ կատարելով բովանդակության մեջ՝ մենք մեզ համար բարձր նշածող ենք սահմանել՝ «Տնտեսագետը» դարձնել ավելի բարձրորակ, հետաքրքիր և սպասված: Այսօր մենք մտածում ենք որակյալ արտադրանք տալու մասին՝ միաժամանակ փորձելով շարունակել մեր ամսագրի հեղինակների հետ աշխատանքը, մեր շուրջը համախմբել թարմ մոտեցումներով և լավ գաղափարներով մարդկանց, զնահատել ու չանտեսել և ոչ մի արժեքավոր առաջարկություն:

«Տնտեսագետի» այս համարում ներկայացնում ենք առանցքային մի քանի թեմաներ: Այս տարի լրանում է Հայոց բանակի կազմավորման 20-ամյակը, ինչին նվիրել ենք ծավալուն հրապարակում՝ ներառելով նաև ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի այցը մեր համալսարան: Կանանց միամսյակը ևս չենք անտեսել, ինչին նվիրված հրապարակման մեջ ներկայացրել ենք տոնը մեր գործընկերների աչքերով՝ միաժամանակ փորձելով պարզել կանանց տոների տնտեսական արժեքը: Հռչակավոր բրենդերի պատմությունները, որոնք սկսել էինք ներկայացնել մեր ամբողջովին վերափոխված ամսագրի նախորդ համարից, այս համարում շարունակում ենք «Virgin» բրենդի պատմությամբ: Ապրիլի 26-ին լրացավ ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի պաշտոնավարման մեկ տարին, որին ևս անդրադարձել ենք՝ ամփոփելով ՀՊՏՀ ղեկավարի մեկամյա գործունեությունը: Արվեստի բաժնում այս անգամ, սիրելի ընթերցող, Ձեզ ենք ներկայացնում բացառիկ հարցազրույց ԱՄՆ-ում բնակվող հայազգի հռչակավոր քանդակագործ և նկարիչ Էմիլ Գազազի կնոջ՝ Սանե Հայրյանի հետ:

Այս հիմնական առանցքային նյութերից բացի, տեղ ենք հատկացրել մեր հանդեսի հեղինակներին՝ Վալերի Միրզոյանին, ով այս անգամ «Հայերենը՝ վտանգված» խորագրի ներքո ներկայացնում է լեզվական խորհրդատվություն ասպիրանտներին, Յուրի Հովականյանին «Համակրելի դառնալու արվեստը» և Սամվել Գրիգորյանին «Տնտեսական խճանկար» խորագրերի հերթական նյութերով: Ամսագրում տեղ է գտել նաև գիտահետազոտական թեմային նվիրված հրապարակում, ներկայացնում ենք մեր բուհի շնորհալիներին, Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրեն Սոս Խաչիկյանն անդրադառնում է կրթության և գիտության առաջխաղացմանը՝ որպես մարզերում տարածքների համաչափ զարգացման գրավական: Այս համարում ներկայացնում ենք ուշագրավ մեկ այլ հրապարակում ևս, այն է՝ տարվա լավագույն գործարար նախագծերը:

Այնպես որ, հաճելի ընթերցում եմ մաղթում՝ ևս մեկ անգամ հիշեցնելով, որ մենք բաց ենք համագործակցության համար և պատրաստ ենք քննարկել ու կյանքի կոչել բոլոր արժեքավոր նախագծերը:

**Գլխավոր խմբագիր՝
ԳՈՂԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**



**«Մեր ուսանողի ստացած գիտելիքները պետք է համապատասխանեն աշխատաշուկայի պահանջներին»
ՀՀՏՀՅ ղեկավարը ամփոփում է պաշտոնավարման մեկ տարին**

«Իմ պաշտոնավարման այս մեկ տարում բազմակողմանիորեն ուսումնասիրվել է բուհում առկա իրավիճակը, վեր են հանվել թերությունները, գնահատվել են նյութատեխնիկական բազայի կարողությունները, գիտական ներուժը, և նախանշվել են ապագա բարեփոխումների ուղղությունները», – «Տնտեսագետ» ամսագրի հետ զրույցում ասաց ՀՀՏՀՅ ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանը՝ մեր խնդրանքով անդրադառնալով իր պաշտոնավարման մեկ տարում կատարված աշխատանքներին:

Նշենք, որ 2011 թ. մարտի 9–ից Կորյուն Աթոյանը նշանակվել է ՀՀՏՀՅ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, ապրիլի 26–ին ՀՀՏՀՅ խորհրդի կողմից ընտրվել է ղեկավար, իսկ մայիսի 13–ին ՀՀ Կառավարության նիստում գործադիրը հաստատել է Կորյուն Աթոյանի ընտրությունը ՀՀՏՀՅ ղեկավարի պաշտոնում:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը, ևս մեկ անգամ ընդգծելով, որ անցնող տարին վերլուծությունների, առկա խնդիրները վերհանելու և անելիքները նախանշելու տարի էր, նաև մասնավորեցրեց, թե հատկապես որ ուղղություններով են աշխատանքներ կատարվել: Նրա խոսքով՝ իրավիճակի վերլուծություն է կատարվել բոլոր ուղղություններով, այդ թվում՝ կրթական-ուսումնական, գիտահետազոտական, արտաքին կապերի: Ռեկտորը շեշտեց՝ քանի որ բարեփոխումների հիմնական նպատակը կրթության ոլորտում որակյալ ծանայություն մատուցելն է, ուստի կրթական խնդիրներին ուղղված քայլերը գերակշիռ են:

Կրթական-ուսումնական հատվածում, մասնավորապես, Կորյուն Աթոյանի ներկայացմամբ՝ ընդունվել և ամրագրվել են որոշումներ, որոնց մեծ մասն արդեն գործնական կիրառություն է ստացել: Կարևորելով այդ փոփոխությունների մասին ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի տեղեկացվածությունը՝ ղեկավարը հարկ համարեց անդրադառնալ դրանց հանգամանորեն, առանձին-առանձին: Խմբավորելով արդեն գործողության մեջ դրված փոփոխությունները՝ ղեկավարը ասաց.

«Հեռակա ուսուցման մագիստրատուրայի ուսումնական պլանները վերակազմվել են կրեդիտային հենքով, հաստատվել են այդ պլանների նոր

նորմատիվներ և դրանով համալսարանի կրթական բոլոր մակարդակներում և ուսուցման բոլոր ձևերում ավարտվել է անցումը կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման համակարգին: 2011-2012 ուսումնական տարվա առաջին կիսամյակից վերացվել է կրեդիտային համակարգով հեռակա ուսուցման բակալավրիատում ուսանողի անհատական աշխատանք գրելու պարտադիր պայմանը:

Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատում «Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն» գնահատման գործոնի փոխարեն կիրառվում է «Ընթացիկ ակտիվություն» գործոնը, ինչի հետ կապված՝ վերացվել է առկա ուսուցման բակալավրիատում բացակայած դասաժամերի լրացման կարգը և համապատասխան պարզեցում է կատարվել բոլոր տեսակի քննական ձևաթերթերում:

Վերացվել է տվյալ մոդուլից կիսամյակի ընթացքում ամփոփիչ քննաշրջանից հետո վերջնական հաշվարկված գնահատականի՝ 10 միավորից փոքր լինելու դեպքում ուսանողի համալսարանից հեռացման պայմանը:

Առանձնակի շեշտադրելով լուծարքի արդյունքի հաշվարկման կարգի փոփոխությունը՝ Կորյուն Աթոյանը պարզաբանեց.

«Եթե նախկին կարգով նախատեսվում էր վերջնական հաշվարկային գնահատականին զումարել լուծարքի ժամանակ ստացած միավորները և 40-ին հավասար կամ ավելի միավոր հավաքելու դեպքում լուծարքը համարել հանձնված (օրինակ՝ վերջնական հաշվարկային գնահատականի 38 միավորի դեպքում բավարար կլիներ լուծարքի արդյունքում վաստակել ընդամենը 2 միավոր), ապա նոր կարգով, անկախ վերջնական հաշվարկային գնահատականի մեծությունից, լուծարքը համարվում է հանձնված, եթե լուծարքի գնահատականը, առանց կլորացման, հավասար է կամ մեծ է 16-ից (լուծարքի գնահատականի առավելագույն 40 միավորի դեպքում): Պարապմունքներից բացակայությունների համար նախատեսվել են վարչական պատժամիջոցներ, այդ թվում՝ համալսարանից հեռացում:

Ընթացիկ կիսամյակից թողարկող ամբիոններին և

մագիստրատուրայում մասնագիտացման մոդուլներ դասավանդող դասախոսներին ակադեմիական ազատություն տալու նպատակով թույլատրվել է ինքնուրույն որոշել յուրաքանչյուր մոդուլի գնահատման բաղադրիչները, դրանց կշիռները, դասավանդման և գնահատման մեթոդները»:

Ռեկտորը տեղեկացրեց նաև, որ փոփոխությունների մի ամբողջ զինանոց էլ կկիրառվի նոր ուսումնական տարվանից.

«Գալիք՝ 2012-2013 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից ուսումնական պլաններում փոփոխություններ են կատարվելու ուսումնական կիսամյակը 17+3 շաբաթով (ամփոփիչ քննաշրջանն առանձնացվում է դասապրոցեսից) կազմակերպելու պատճառով, իսկ բակալավրիատի ավարտական կուրսում ավարտական աշխատանք շարադրելու իրավունք են ստանալու միայն բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները (կուրսի ուսանողների 30-35%-ը), ստուգարքով ավարտվող բոլոր մոդուլներից այլևս միջանկյալ ստուգումներ չեն անցկացվելու»: Նա հավելեց նաև, որ վերանայվել և հաջորդ ուսումնական տարվանից գործելու են մագիստրոսական ատենախոսությունների ղեկավարման, մագիստրոսական ատենախոսությունների և բակալավրիական ավարտական աշխատանքների գրախոսման, մագիստրոսների գիտահետազոտական փորձառության ղեկավարման, գրավոր աշխատանքների ստուգման ժամային նորմատիվները:

Անդրադառնալով աշխատաշուկայի ուսումնասիրության, մասնավոր հատվածի հետ համագործակցության հիմնահարցին՝ «Տնտեսագետի» հետ զրույցում ՀՊՏՀ ռեկտորն ընդգծեց, որ մեր ուսանողների ստացած գիտելիքները պետք է համապատասխանեն աշխատաշուկայի պահանջներին՝ մատնանշելով, որ անցած մեկ տարում բավական աշխատանք է կատարվել աշխատաշուկայի պահանջները ուսումնասիրելու, ինչպես նաև մասնավոր հատվածի հետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ: Հիշեցնենք, որ արդեն մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնելուն ուղղված համագործակցության պայմանագրեր են կնքվել ՀՀ Կառավարության ամենամեծ պետական եկամուտների կոմիտեի, Յայաստանի բանկերի միության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ պետական գույքի կառավարման վարչության, ինչպես նաև ՀՀ բնապահպանության նախարարության հետ: Այս պայմանագրերի արդյունքում բուհում կրթական գործընթացը կվարեն բուհը և տվյալ կառույցը միասին, որպեսզի պատրաստվեն այնպիսի մասնագետներ, որոնք ապագայում աշխատանք կունենան տվյալ կառույցում: Սա ուսանողներին աշխատանքով ապահովելուն ուղղված առանցքային քայլերից է: Այս կառույցների հետ համագործակցության արդյունքում ՀՊՏՀ-ին նաև համակարգչային լսարաններ են նվիրվել: ՀՀ ԿՎ պետեկամուտների կոմիտեն համալսարանում հարկային և մաքսային երեք մասնագիտացված լսարան է հիմնանորոգել և կահավորել նորագույն տեխնոլոգիաներով, իսկ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամը բուհին համակարգչային լսարան է նվիրել:

Այս կառույցների նվիրած լսարանների բացումը մեծ շուքով կայացավ վերջերս:

«Որոշակի աշխատանքներ են կատարվում նաև գիտական, գիտահետազոտական կյանքն ակտիվացնելու, դրան նոր թափ ու բովանդակություն հաղորդելու ուղղությամբ: Մենք նպատակադրվել ենք բուհը նաև գիտահետազոտական կենտրոն դարձնել», – որպես նպատակների կարևորագույն ուղղություն մատնանշեց ռեկտոր Կորյուն Աթոյանը:

Մեկ տարի առաջ ուղենիշ դարձնելով «Մենք փոխվում ենք» կարգախոսը, որի ներքո պետք է իրականացվեին բարեփոխումները՝ սկսեց ուրվագծվել բարձրագույն ուսումնական հաստատության նորացման ու բարենորոգման տեսլականը: Պաշտոնավարման այս ընթացքը կատարվող քայլերի մի հանրագումար է, որը դեռ սկիզբն է, սկիզբ, որը խոստումնաշատ է, հուսադրող, ոգևորող:

Կորյուն Աթոյանի պաշտոնավարումից ի վեր բազմաթիվ քայլեր են իրականացվել բուհի վարկանիշը նաև արտաքին բաղադրիչներով ամրապնդելու ու զարգացնելու ուղղությամբ: Մասնավորապես, տնտեսագիտական համալսարանի շենքին փակցված են նոր ցուցանակներ, ստեղծվել են «ՀՊՏՀ» անվամբ դրոշմեր, կրծքանշաններ, գրիչներ: Նույն դիզայնով ձևավորվել են նաև բուհի մատյանների կազմերը, պաշտոնական ձևաթղթերը. այս ամենը ՀՊՏՀ կերպարի ձևավորման ու զարգացման ճանապարհին:

Հասարակության, ինչպես նաև լրատվամիջոցների հետ աշխատանքը համակարգելու համար մեր համալսարանում ստեղծվել է լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժին: Ունենք նաև բուլլոթին նոր կայք, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում պաշտոնական էջ, նոր որակով և մոտեցումներով են իրենց աշխատանքն իրականացնում բուհի «Տնտեսագետ» պաշտոնական ամսագիրը (տպագրվում է ամբողջությամբ գունավոր) և «Բանբեր ՀՊՏՀ-ի» գիտական հանդեսը: Ուսանողների հետ ռեկտոր Կորյուն Աթոյանի հանդիպումները կրում են պարբերական բնույթ, աշխուժացել է ներհամալսարանական, ուսանողական անցուդարձը, ռեկտորի նախաձեռնությամբ համալսարանում պարբերաբար հյուրընկալվում են մեր երկրում հայտնի տարբեր ոլորտների ներկայացուցիչներ:

Բարձրագույն ուսումնական հաստատության արտաքին աշխարհին ուղղված գործունեությունը չի կարող չկարևորվել ու չդիտարկվել ընթացիկ աշխատանքներում:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը նշեց նաև, որ արտաքին կապերի հաստատման և ամրապնդման ուղղությամբ ևս բավական քայլեր են իրականացվում: Ռեկտորի խոսքով՝ ուսումնասիրություններ են կատարվում և այս պահին իսկ տարբեր ծրագրերով մեր համալսարանը փորձում է կապեր հաստատել աշխարհի մի շարք առաջատար բուհերի հետ:

Ամփոփելով՝ ՀՊՏՀ ռեկտորը հավաստիացրեց, որ փոփոխությունները կրելու են շարունակական բնույթ՝ մինչև արձանագրվեն բաղձալի արդյունքներ:

ԳՈՂԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ



«20 տարի առաջ մենք շրջեցինք մեր պատմության անիվը».

ՀՀ Նախագահ, ՀՀ ՁՈՒ գերագույն գլխավոր հրամանատար ՍԵՐՃ ՍԱՐԳՍՅԱՆ

«Անկախ պետականության կորըստից ի վեր հայ ժողովուրդը բազմաթիվ զինվորներ է ծնել, սակայն իր բանակն ունենալու բախտը չի ունեցել: Հայ մարտիկները, սպաներն ու զեներալներն իրենց անձնական սխրանքով ու նվիրումով փառք են բերել տարբեր երկրներից, բայց մեր ժողովրդի քաջարի զավակները զրկված են եղել իրենց հայրենիքի շահերը և հայրենակիցների իրավունքները միասնաբար պաշտպանելու հնարավորությունից:

Քսան տարի առաջ մենք շրջեցինք պատմության անիվը: Այդ առանցքային ժամանակահատվածում մեր ժողովուրդը վերստեղծեց իր անկախ պետականությունը՝ ամբողջությամբ ստանձնելով պատասխանատվությունն իր իրավունքների ու ազգային շահերի պաշտպանության համար: Վերելքի այդ պատմական պահին կարևորագույն նվաճումներից մեկը հայոց բանակն էր:

Հայ ժողովրդի և մանավանդ արցախահայության գլխին կախված ցեղասպանության վերահաս վտանգը կանխելու անհրաժեշտություն կար: Բանակաստեղծման այդ բեկումնային իրադարձությունը ժամանակի պահանջն էր»:

Հատված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստեղծման 20-ամյակի կապակցությամբ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձից 2012 թվականի հունվարի 28



«Մեր բանակն այլևս կայացած է».

ՀՀ պաշտպանության նախարար ՍԵՅՐԱՆ ՕՂԱՆՅԱՆ

«Այսօր մեր մեծ ժամանակակից՝ Հայոց նոր բանակն տոնն է: Համաշխարհային պատմության էջերը երկար թերթելու դեպքում էլ թերևս չենք գտնի դեպքեր, երբ ազգային բանակը ստեղծվում է պետական-քաղաքական համակարգի փոփոխության, դաժան պատերազմի, աղետալի երկրաշարժի հետևանքների վերացման ու շրջափակման պայմաններում: Մեր զինված ուժերը, տակավին նորածին, ստիպված եղավ հաղթահարել ծանրագույն փորձություններ, սակայն իր նվիրյալ զավակների շնորհիվ դժվարին քննությանը դիմանալով, այսօր իր գոյության 3-րդ տասնամյակ է ոտք դնում մեր նախնիների և պատմության հանդեպ պարտքը մասամբ մարած, պատմական անարդարությունը վերականգնած:

Իսկապես: Հինավուրց հայ ազգին մոռացած աշխարհը մեր բանակի փայլուն, թվում էր, թե անհնարին հաղթանակից հետո էր, որ նորից հարգանքով մեզ նայեց: Բոլորի քննարկման առարկան ժամանակի հերոսն էր՝ Հայոց բանակը:

Մեզ պարտադրված պատերազմը սկսեցինք որսորդական իրացաններով, նախկին խորհրդային բանակից մեր հանրապետությանը ժառանգաբար փոխանցված և հակառակորդից մեզ անցած սպառազինությամբ: Այսօր արդեն ունենք հայրենական զարգացող ռազմարդյունաբերական համալիր, որը հնարավորություն է տալիս կազմակերպել զինատեսակների սեփական արտադրություն:

Այո, մեր բանակն այլևս կայացած է, և հիմա արդեն հեշտությամբ են լուծվում բազմաթիվ այնպիսի խնդիրներ, որոնք առաջ վիթխարի դժվարություն էին ներկայացնում: Մեր ժողովուրդն էր, որ կարողացավ այսպիսի բանակ ստեղծել, և փառք Աստծո, որ ունեցավ այդ կամքը, ուժն ու իմաստությունը, և փառք Աստծո, որ հայը տեսակով այդպիսին է»:

Հատված ՀՀ զինված ուժերի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթից 2012 թվականի հունվարի 27

1992 թ. հունվարի 28-ի ՀՀ Կառավարության ընդունած «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշմամբ ազդարարվեց Հայոց ազգային բանակի ստեղծումը

2012 թվականը Հայոց ազգային բանակի ստեղծման 20-ամյա հոբելյանի տարին է: 1992 թ. հունվարի 28-ին ՀՀ Կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշում՝ դրանով իսկ իրավականորեն ազդարարելով Հայոց ազգային բանակի ստեղծումը: Սիրելի ընթերցող, տոնական այս առիթով «Տնտեսագետի» ծավալուն անդրադարձը բանակաշինության ու հայրենասիրության թեմային՝ ուղղված նախևառաջ երիտասարդությանը, ձեռքբերումների ճանաչման, գնահատման, պահպանման ու զարգացման կոչ է:

Երկու տասնամյակ առաջ ստեղծվեց հայոց անկախ պետականության կայացման ամենազորեղ կռվաններից մեկը, որը քայլ առ քայլ պետք է ապահովեր ազգային անվտանգությունը, պետության կենսունակ գոյությունը:

Հայ երիտասարդն այսօր ապրում է մի երկրում, որի գլխավոր ձեռքբերումները՝ Անկախության հռչակում, Ազգային բանակի ստեղծում, գրեթե հասակակից են իրեն: Եվ նա, կերտելով իր կենսագրությունը, կարող է մասնակիցը դառնալ այդ կարևոր ձեռքբերումների ամրապնդման ու կայացման՝ որպես հայրենասեր ու խիզախ զինվոր համալրելով խաղաղապահ ու մարտունակ Հայոց ազգային բանակի շարքերը:

Սիրելի ընթերցող, Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Հայոց բանակի ստեղծման պատմությունը, որը շաղկապված է մեր ժողովրդի պատմության նորագույն շրջանի հերոսական էջերին: Այն քաղված է ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքից (մասնակի կրճատումներով): Հավատում ենք, որ ընթերցելով Դուք վերստին կգնահատեք, թե ինչ հերոսականությամբ ու կամքով կյանքի կոչվեց մեր բոլորիս հպարտություն Հայոց ազգային բանակը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունն անքակտելիորեն կապված են հայոց պետականության ստեղծման պատմական իրողության հետ, քանզի պետություն և բանակ հասկացությունները միմյանց պայմանավորող են, և դժվար է, եթե չասենք անկարելի, պատկերացնել մեկն առանց մյուսի: Ե՛վ մեկի, և՛ մյուսի համար ամեն ինչի սկիզբը եղավ 1988 թ. փետրվարը՝ սկիզբը Ղարաբաղի համար պայքարի, պետականության վերականգնման ու Ազգային բանակի ստեղծման: Հայոց բանակն իր կայացման ճանապարհին (ինչպեսև հայոց պետականությունն ինքը) անցավ մի քանի դժվարին ու առանցքային փուլ: Հիմնարար գործընթացների ու իր առջև դրված խնդիրների տեսանկյունից մեր բանակի անցած ուղին կարելի է բաժանել երեք փուլի:

Առաջին. 1988-ի փետրվար-1992 թվականի մայիս, երբ ղարաբաղյան շարժման ակտիվացման և հայ-ադրբեջանական հարաբերությունների ծայրաստիճան սրման պայմաններում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության ռազմական անվտանգության ապահովումը դարձավ ավելի քան հրատապ:

Երկրորդ. 1992 թվականի հունիս-1994 թվականի մայիս, երբ արդեն անկախ Հայաստանի Հանրապետությունը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ միասին, գտնվելով չհայտարարված, բայց փաստացի պատերազմի մեջ Ադրբեջանի Հանրապետության հետ, միաժամանակ ձեռնամուխ եղավ նաև Ազգային բանակի ստեղծմանը:

Երրորդ. 1994 թվականի հունիսից մինչ օրս: Այս փուլը, կարելի է անվանել բանակաշինության, կայուն զարգացման, զորքերի մարտունակության բարձրացման, կարգապահության ամրապնդման, միջին և բարձր սպայական անձնակազմի պատրաստման ու վերապատրաստման, ինչպես նաև բանակ-հասարակություն հարաբերություններում առկա անջրպետի տարեցտարի վերացման փուլ, երբ հաստատված իրադրությունը հետո երկրի իշխանություններն ու բանակի ղեկավարությունը հնարավորություն ստացան արդեն խաղաղ պայմաններում ջանքերը կենտրոնացնել բանակի, որպես ռազմապաշտպանական համակարգի, վերջնական ձևավորման, բոլոր անհրաժեշտ ստորաբաժանումներն ստեղծելու ու գործադրելու ուղղությամբ:

Այս փուլերից յուրաքանչյուրը, լինելով մեր բանակային պատմության շրջայի կարևորագույն օղակ, առանձնանում է իր յուրահատկություններով, զարգացման տրամաբանությամբ, տվյալ ժամանակում գոյություն ունեցող



իրողություններով և մինչև իսկ հոգեբանությամբ:

1988-ից մինչև 1992 թվականի մայիս ընկած ժամանակահատվածի հիմնական առանձնահատկությունն ու բնորոշիչը ինքնաբերական հայրենասիրությունն էր, ավելի խիստ, թերևս՝ տարերայնությունը: Առհասարակ, «բանակ» ասելիս, առաջին միտքը, որ կծագի ցանկացած բանական մարդու գլխում կլինեն համազգեստով զինվորը, զորանոցն ու զորախաղերը, պատվո պահակախումբը, շքերթն ու երդման արարողությունը:

Այդ շրջանի «բանակը» հայ քաղաքական նորելուկ միտքն էր և նրա ջղաձիգ (բայցև հաջող) ջանքերը՝ լուծելու պատմական այս ժամանակաշրջանում իր առջև դրված գերագույն խնդիրները. անկախ պետականության վերականգնում և Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության արդար դատի պաշտպանում:

Կամավորականները, որոնք որոշ ժամանակ անց արդեն սահուն կերպով իրենց տեղը պետք է զիջեին կանոնավոր զորամիավորումներին, փայլուն կերպով կատարեցին իրենց առջև, իրենց իսկ կողմից դրված խնդիրները: Սրանց մի մասը նահատակվեց սխրալի մարտերում. Մովսես Գորգիսյան, Թաթուլ Կրպեյան, Ջիվան Աբրահամյան... շատ ու շատ այլոք, իսկ մյուսները, արդեն 1992-ից սկսած, մասնակցելով նաև պատերազմական լայնածավալ գործողություններին, նորաստեղծ կանոնավոր բանակի հետ միասին կռեցին մեր առաջին ռազմական հաղթանակը: Ցավոք, շատերն իրենց կյանքի գնով:

1990-ի Անկախության հռչակագիրը, որով ազդարարվեց Հայաստանի փաստացի անկախությունը, նոր իրավական և գործնական հեռանկարներ բացեց ազգային բանակի ստեղծման հարցում: Նույն տարվա սեպտեմբերին կազմավորվեց Երևանի հատուկ գունդը, իսկ Արարատում, Գորիսում, Վարդենիսում, Իջևանում, Մեղրիում ձևավորվեցին հինգ վաշտեր: 1991 թվականին Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ ստեղծվեց Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտե: Նմանատիպ կառույց արդեն գործում էր Լեռնային Ղարաբաղում: Սրանով զգալիորեն հեշտացվեց բարդագույն պայմաններում Հայաստանի, Արցախի և Շահումյանի պաշտպանական գործողությունների համակարգման խնդիրը՝ միաժամանակ դառնալով այն հիմքը, որի վրա քիչ ավելի ուշ պետք է ստեղծվեր Պաշտպանության նախարարությունը:

1991 թ. դեկտեմբերի 5-ին, հանրապետության նախագահի հրամանագրով առաջին պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը, որն արդեն լինելով խորհրդարանի պաշտպանության հանձնաժողովի նախագահ՝ կամավորականների մեծ մասի սիրված հրամանատարն էր:

1992 թ. հունվարի 28-ին Կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշում՝ դրանով իսկ իրավականորեն ազդարարելով Հայոց Ազգային

բանակի ստեղծումը: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին Ներքին գործերի նախարարության միլիցիայի պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինվորական կոմիսարիատը: Քիչ ավելի ուշ հիմնվեց Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ Գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները: 1992-ի մայիսին պաշտպանության նախարարությունը սկսեց առաջին զորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին:

Այս պահից, ահա, սկիզբ է առնում մեր բանակի պատմության երկրորդ փուլը:

Բանակն այս տարիներին, եթե կարելի է այսպես ասել, ապրում էր երկու կյանքով: Մի կողմից ինտենսիվորեն ընթանում էր բանակային կառուցվածքի ձևավորում, նրա իրավական ամրագրում, իսկ մյուս կողմից՝ նորաստեղծ բանակային կազմավորումները փաստացի պատերազմի մեջ էին հարևանի հետ: «Ամեն ինչ ռազմաճակատի համար» տրամաբանությանը զուգահեռ փորձ էր արվում հնարավորինս պաշարներ ուղղել կառուցվածքային խնդիրների լուծմանը:

Բանակաստեղծման առումով 1992-ը բացառիկ արդյունավետ եղավ. ամրագրվեց անհրաժեշտ իրավական դաշտը, ձևավորվեցին ղեկավարման օղակները, առաջին հերթին՝ Գլխավոր Շտաբը, ստեղծվեցին թիկունքի և սպառազինության ծառայությունները, հիմնադրվեցին զորատեսակներն ու մասնագիտացված զորամասերը, մշակվեցին խմբավորումների, զորամասերի մարտական կազմերը և կառուցվածքները, դրվեց զորատեսակների և ծառայությունների ձևավորման սկիզբը, անցկացվեց առաջին զորակոչը, կազմավորվեցին առաջին սահմանապահ զորամասերը՝ մոտոհրաձգայինների վերափոխման հեռանկարով, ծավալվեցին զորամասերի ստորաբաժանումները՝ դասակները, վաշտերը, գումարտակները, սկսվեց անձնակազմի մարտական ներդաշնակման ու մարտական պատրաստության գործընթացը:

1992-ի հունիսից սկիզբ է առնում մեր բանակի պատմության երկրորդ փուլը, երբ ադրբեջանցիները, ոգևորված խորհրդային բանակի՝ Ադրբեջանի տարածքում տեղաբաշխված ստորաբաժանումների մեծաքանակ սպառազինության անարգել բռնագրավումով, վարձկանների՝ նույն բանակի անգործ ու հետևապես առանց գոյության միջոցների մնացած սպաների առատությունից և մեր հապաղումով, անցան լայնածավալ հարձակման: Ընկավ Շահումյանը, սկիզբ առավ հակառակորդի ժամանակավոր հաջողությունների շրջանը: Մեր ջոկատները ստիպված էին նահանջել Սարտակերտի տարածքի մի զգալի մասից՝ իրենց հետ տանելով նաև բնակչությանը:

Բայց այլ կերպ էր մտածում հայ հավաքական զինվորը: Նա մաքառեց, կանգնեցրեց հակառակորդին և ի վերջո



հաղթող դուրս եկավ մեզ պարտադրված անհավասար պատերազմում:

Արդեն 1993 թ. մարտի վերջին իրակա- նացվեց Քելբաջարի օպերացիան՝ գրավ- վեց Հայաստանն ու Ղարաբաղը սեպի պես զատող այս կարևոր հատվածը: Հունիսին հակառակորդը ծանր մարտերից հետո, չկարողանալով դիմադրել հայկական ինք- նապաշտպանական ուժերի շեշտակի գրոհ- ներին, ստիպված էր թողնել Մարտակեր- տը՝ հարող բնակավայրերով, հուլիսին՝ Աղդամը, օգոստոս-հոկտեմբերին՝ Ֆիզուլին, Ջաբրայիլը, Կուբաթլուն և Ջանգելանը, ինչը թույլ տվեց պաշտպանական բանակին երկրի երկայնքով ձևավորել անվտանգության գո- տի՝ զերծ պահելու համար Լեռնային Ղա- րաբաղի տարածքի մեծ մասը հնարավոր նմբահարումներից:

Թվում էր, այս պարտությունը պետք է բավարար լիներ հակառակորդին՝ զիտակ- ցելու իր նկրտումների ու տածած հույսերի բացահայտ սնանկությունը: Բայց ադրբեջա- նական բանակը, չխրատվելով այս ջարդից ևս, 1993 թ. դեկտեմբերին անցավ նախա- դեպը չունեցող հարձակման: Այս ճակա- տամարտը, որը տևեց ուղիղ հինգ ամիս, ավարտվեց հայկական պաշտպանական ուժերի լիակատար հաղթանակով: Այնպի- սի հաղթանակով, որ պարտված հակառա- կորդը, որ մինչ այդ լսել անգամ չէր ուզում հրադադարի մասին, գլխիկոր համաձայնեց ստորագրել այն:

1994 թ. մայիսի 16-ին Հայաստանի, Ղա- րաբաղի և Ադրբեջանի պաշտպանության նախարարները Մոսկվայում ստորագրե- ցին հրադադարի մասին համաձայնագիր: Պատերազմը գոնե առժամանակ դադա- րեց՝ դրանով իսկ նախանշելով մեր բանակի պատմության երկրորդ փուլի ավարտը:

Արդեն խաղաղ պայմաններում նորա- ստեղծ բանակի հրամանատարական կազ- մը հնարավորություն ստացավ լծվելու բա- նակաշինության գործին՝ ուշադրություն դարձնելով առավելապես բանակի ներքին խնդիրներին: Բանակաշինության գործըն- թացն ընդգրկեց ռազմական համակարգի, առանց բացառության, բոլոր ոլորտները՝ սկսած բանակային ենթակառուցվածքների ստեղծումից մինչև անհրաժեշտ օրենսդրա- կան հիմքի ապահովում:

ՍԵՅՐԱՆ ՕՐԱՆՅԱՆԸ՝ ՀՊՏՀ-ՈՒՄ

ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԵՎ ԴԱՍԱԺԱՄ

Մարտի 2-ին մեր համալսարանի պրոֆեսորադասախոսա- կան կազմը, ուսանողությունը, աշխատակիցները հպարտու- թյան և ոգեկոչի ժամեր ապրեցին՝ իրենց հարկի տակ, լեվի- լեցուն դահլիճում հյուրընկալելով ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Սեյրան Օհանյանին: ՀՊՏՀ ղեկավար Կորյուն Աթոյանի և ուսանողական խորհրդի նախա- ձեռնությամբ կայացած միջոցառումը ծառայեց իր նպատա- կին՝ որպես բանակաշինությանը նվիրված մեկ դասաժամ, որպես հզոր կամքի տեր անհատականության հետ հաղոր- դակցվելու հնարավորություն: Մասնակիցներն ունկնդրեցին նախարարի ընդգրկուն անդրադարձը ՀՀ զինված ուժերի կազմավորման ու կայացման 20-ամյա պատմությանը: Սեյ- րան Օհանյանը հիշատակեց ՀՊՏՀ-ում ուսանած ազատա- մարտիկների՝ Արցախյան պատերազմում ցուցաբերած խի- զախությունը, սխրանքները, հանուն հայրենիքի մինչ ի մահ կռվելու կամքը՝ նշելով, որ այդ անվեհեր հայորդիների օրի- նակները պետք է միշտ հիշատակվեն և ոգեշնչեն ապրող- ներիս: Նա կարևորեց երիտասարդության ռազմահայրե- նասիրական դաս- տիարակու- թյունը, ինչ- պես նաև զին- ված ուժերում կրթո յ յ ա ն կ ա զ մ ա կ եր - պումը:



Նախարա- րը սիրով պա- տ ա ս խ ա ն ե ց դ ա ս ա խ ո ս ն ե- րին և ուսանող- ներին՝ հուզող ու հետաքրքրող բազմաթիվ հարցերի:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նա- խարարի այցը ՀՊՏՀ նշանավորվեց հաճելի մի արարողու- թյամբ: ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Վարդան Ավետիսյանը ազդարարեց պետական բարձր պարգևի արժանացած ՀՊՏՀ-ականների անունները: Ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ունեցած ավանդի համար նախարարը «ՀՀ զինված ուժեր. 20 տարի» հրեյանական մեդալով պարգևատրեց ՀՊՏՀ փիլիսոփայության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Սարգսյանին և ՀՊՏՀ կարիերայի և մարքեթինգի բաժնի խորհրդատու Ալեք- սանդր Հարությունյանին: Ամբասիր ծառայության համար ՀՊՏՀ ուսանողներից այս բարձր պարգևին արժանացան մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի մար- քեթինգ մասնագիտության հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Արայիկ Մարտիրոսյանը և հաշվապահական հաշ- վառման և աուդիտի ֆակուլտետի հաշվապահական հաշ- վառումն ըստ ճյուղերի մասնագիտության առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանող Վիգեն Թաթխանյանը:

Վերջում պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը և ղեկավար Կորյուն Աթոյանը միմյանց հանձնեցին խորհրդա- նշական նվերներ:

ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՆՐԱՆՔ ԱՆՄԱՅ ԵՆ

Մեր համալսարանում ուսանած, ՀՀ և ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված (1988-1994 թթ.) տասնչորս ազատամարտիկների անվեհեր սխրանքներով, ինքնանվիրումով ու քաջությամբ նաև կայացավ մեր այսօրվա 20-ամյա բանակը: Ազգային բանակի ստեղծման 20-ամյա տարեդարձին տեղին ենք համարում և ս մեկ անգամ ներկայացնել նրանց՝ անուն առ անուն:

Դերենիկ Գարիկի Աբրահամյան.

զոհվել է 1990 թ. մայիսյան դեպքերի ժամանակ (ֆինանսահաշվային ֆակուլտետ):

Վոլոդյա Սարգսի Դարբինյան.

զոհվել է 1990 թ. Արծվաշենի ինքնապաշտպանության ժամանակ (վիճակագրության և ինֆորմացիայի մշակման ֆակուլտետ):

Գագիկ Գրիգորի Գրիգորյան.

զոհվել է 1991 թ. դեկտեմբերի 17-ին Հասանաբաղի դիրքերում (ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետ):

Արթուր Միքայելի Կարապետյան.

զոհվել է 1991 թ. ապրիլին Գետաշենի ինքնապաշտպանական մարտերում (ապրանքագիտության ֆակուլտետ):

Կարեն Անդրուշի Իսկանդարյան.

զոհվել է 1992 թ. Հաթերքի մարտերում (հեռակա ուսուցման ֆակուլտետ):

Արմեն Հրաչիկի Բաբլունյան.

զոհվել է 1992 թ. հունիսի 6-ին Սևքարում (պլանատնտեսագիտական ֆակուլտետ):

Աշոտ Արելի Միքայելյան.

զոհվել է 1992 թ. օգոստոսի 22-ին Դրմբոնում (ֆինանսահաշվային ֆակուլտետ (հեռակա)):

Կարեն Բախշիի Մանվելյան.

զոհվել է 1992 թ. նոյեմբերի 5-ին Լաչինի գյուղերից մեկում (ապրանքագիտության ֆակուլտետ):

Արմեն Փարավոնի Աղամյան.

զոհվել է 1992 թ. նոյեմբերի 22-ին Շուշիում (պլանատնտեսագիտական ֆակուլտետ):

Արթուր Մելիսիկի Ասրյան.

զոհվել է 1993 թ. Մարտակերտում (պլանատնտեսագիտական ֆակուլտետ):

Վահրամ Լենսերի Բաբայան.

զոհվել է 1993 թ. Քելբաջարում (շուկայավարության ֆակուլտետ):

Հրաչիկ Վաչագանի Գասպարյան.

զոհվել է 1994թ. փետրվարի 27-ին Օմարի լեռնանցքում (պլանատնտեսագիտական ֆակուլտետ):

Արմեն Իլյայի Հակոբյան.

զոհվել է 1994 թ. հունվարի 20-ին Մարտակերտում (պլանատնտեսագիտական ֆակուլտետ):

Արմեն Հակոբյան.

զոհվել է 1994 թ. հունվարի 15-ին Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում (ֆինանսահաշվային ֆակուլտետ):



ՆԱՄԱԿ ԶՈՐԱՍԱՍԻՑ

ՀՊՏՀ ուսանողները, անցնելով ծառայության Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, իրենց սրբազան պարտքը հայրենիքի առաջ կատարում են պատասխանատվության բարձր զգացումով, սիրով ու նվիրումով: Նրանցից մեկը ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի հակաձգնաժամային կառավարում մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Լևոն Կուրդիյանն է, որի ծառայությունը գնահատող շնորհակալական նամակ է ստացել բուհի ռեկտոր Կորյուն Աթոյանը:

Մեր ուսանողի մասին ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանին ուղղված՝ թիվ N զորամասի հրամանատար, գեներալ-մայոր Լ. Երանոսյանի շնորհակալական նամակում մասնավորապես ասվում է. «Ձեր բուհի ուսանող Լևոն Կուրդիյանը, ծառայելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, պատվով է կատարում իր սրբազան պարտքը, զինվորական երդման պահանջներն ու ծնողական պատգամը՝ անմնացորդ նվիրվել Հայրենիքի պաշտպանության գործին:

Ձեր ուսանողն աչքի է ընկնում ազնվությամբ, բացառիկ բարեխղճությամբ, կամքի ուժով: Նա բարձր է պահում Հայ ռազմիկի պատիվը՝ միշտ պատրաստ հայրենիքի սահմանների պաշտպանությանը: Դուք իրավամբ կարող եք հպարտանալ Ձեր սանով: Երախտապարտ եմ Ձեզ՝ նման հայրենասեր քաղաքացի-քաջարի ռազմիկ դաստիարակելու համար»:

Հուզմունքով և հպարտության զգացումով ընդունվեց մեր բուհի զինվորի մասին այս բարձր գնահատականը...

Բարի ծառայություն և խաղաղ երկինք ենք մաղթում Հայոց բանակի բոլոր զինվորներին:

ԳՎՐԵԳԻՆ ՆՕԴԵՀ

Քիչ խօսք, շատ օրինակ՝ ժողովրդասիրության, պարտաճանաչության, անձնուիրության: Առանց վեհ եւ հրահանգիչ օրինակների՝ չկայ դաստիարակութիւն:

Պատերազմի՛ր այնպէս, որ չամաչես տարածո՛ յաղթանակից:

Սպանւում է և՛ առիւծը, առիւծութիւնը՝ երբէք:

Ոյժը չի պակասում քեզ, այլ՝ ուժեղ լինելու կամքը:

Չկայ՝ անկարելին, երբ կայ զօրեղ ու վճռական կամքը:

Յաղթում է այն կողմը, որը վստահ է ո՛չ թէ իր սպառազէն բռունցքի, այլ՝ ներազէն գերազանցութեան:

Ամեն ժողովուրդը իր նորահաս սերունդի միջոցով է յաղթահարում իր ներքին տկարութիւնները, ցաւերը, յոռետեսութիւնը:

**ԿԱԼԵՐԻ ՄԻՐՁՈՅԱՆԻ
«Առաջնորդման մեթոդաբանությունը՝
ըստ Գարեգին ՆՕԴԵՀԻ» գրքից**

Հայ եմ:

Ես աւանդապահն եմ Հայոց ազնիւ արիւնին:

Ես ժառանգորդն եմ ու տէրը Հայաստանի:

Ես պահակն եմ Ցեղիս հոգևոր հարստութեանց ու դրօշակիրն անոր պատմական կոչումին:

Ես կը լսեմ կանչը իմ վտանգուած Ցեղիս:

Արիւնիս մէջ կը զգամ պայքարի կրակը և հոգիիս մէջ՝ արևը հաւատքի:

Ցեղիս ու Հայրենիքիս համար պատրաստ եմ գործելու և մեռնելու:

Որոշումս անդարձ է, կամքս՝ անընկճելի:

Ահա կ' ուխտեմ ես Մամիկոնեան զօրավարներու մեռնելու ուխտով. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս մեր և մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից պղծալից լեալ զսրբարանս մեր»:

Ուխտեցի՛:

Հետևեցե՛ք ինձ:

**ԿԱՐԴԱՆ ԱՅՈՅԱՆԻ
«Գարեգին ՆՕԴԵՀԻ ռուսումնը. հավիտենաբժեք դասեր» գրքից**

ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ

Ի հարկէ սրտանց կը փափաքէի, որ օր մը, եւ այն մօտաւոր ապագայի մէջ, զիտապէս, մասնագիտական կրթութեամբ օժտուած երիտասարդներ յաջողդէին մեզի և աւելի յաջողութեամբ, աւելի ձեռնհասութեամբ վարէին մարտական բանակը:

Ամեն օր երեւան եկած դէպքերն ու անոնց յայտնութիւնը՝ մեզի բացարձակօրէն կը սորվեցնեն թէ հայը, ըլլայ Տաճկաստան, ըլլայ Կովկաս, Պարսկաստան կամ ուրիշ տեղ, իր կեանքը պահպանելու մէկ միջոց մը միայն ունի, մէկ պաշտպան մը, այն ալ զէնքն ու զինավարժութիւնն է:

Մարդ ո՛չ հերոս, ո՛չ ալ կռուող կը ծնի. զէնքն է որ մարդուն կռուելու ընդունակութիւն կու տայ եւ դիմադրութեան ոգի կը ստեղծէ անոր մէջ:

**ԱՆԴՐԱՆԻԿ ՉԵԼԵՊՅԱՆԻ
«Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը» գրքից**

Ինչպես միշտ, խորագիրն անդրադառնում է տնտեսական կյանքի բազմաբնույթ հիմնախնդիրներին: Այս անգամ առավել կարևորվել են «սոցիալական բնակարանի», Իրանի տնտեսական վիճակի, Եվրամիության կազմավորման և ներկա իրադրության, ուսանողական վարկերի արևմտյան և ամերիկյան փորձի, աշխարհի թերուս միլիարդատերերի մասին հակիրճ, բայց բովանդակալից նյութերը: Դրանք, մեր կարծիքով, հետաքրքրական տեղեկատվություն են և խորհրդածելու հրավեր՝ ուսանողների և բոլոր ընթերցողների համար:



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Ո՞ՐՆ Է «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ» ԷՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Կառավարության 2011 թվականին հաստատած նոր հայեցակարգի համաձայն՝ Հայաստանում ձևավորվելու է սոցիալական բնակարանային ֆոնդ, որի սեփականատերը լինելու է պետությունը, և որն այլևս սեփականաշնորհման ենթակա չի լինելու:

Սոցիալական բնակարանի ինստիտուտի էությունն այն է, որ միջին եկամուտ ունեցող ընտանիքները, բնակարան ձեռք բերելու և հիպոթեքային վարկ ստանալու հնարավորություն չունենալով, կարողանում են մատչելի գնով երկարաժամկետ բնակարաններ վարձակալել շուկայականից ցածր գներով: Այս կառույցի նպատակը բնակչության բնակարանային անհավասարությունը մեղմացնելն է:

Ներկայումս աշխարհի մի շարք երկրներում գործում է, այսպես կոչված, «սոցիալական բնակարանի» (social housing) ինստիտուտը: Սոցիալական բնակարանի սեփականատերը լինում է կա՛մ պետությունը, կա՛մ շահույթ չհետապնդող որևէ կազմակերպություն: Նիդեռլանդներում սոցիալական բնակարաններում ապրում է բնակչության 90%-ը, Հունկ Կոնգոն՝ 50%-ից ավելին: ԱՄՆ-ում սոցիալական բնակարանի ինստիտուտի գաղափարը տարբերվում է՝ բնակարանը ոչ թե վարձակալության է տրվում, այլ մատչելի գնով վաճառվում է: Սոցիալական բնակարանի ինստիտուտը ներդրվում է նաև Հայաստանում, որի մեկնարկը տրվել է Դիլիջանում՝ «Սոցիալական բնակարանային հիմնադրամ» կազմակերպության կողմից:

Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ առավել նպատակահարմար է համարվել արմատավորել սոցիալական բնակարանի ինստիտուտի հոլանդական մոդելը: Ըստ նախնական հաշվարկների՝ ամեն ինչով կահավորված բնակարանի ամսական վարձը կլինի 30-40 հազար դրամի սահմաններում: Բնակարանը կարող է վաճառվել շուկայականից բավական ցածր գնով, սակայն կարգելվի դրա վերավաճառքը:

ԿՈՇՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՍՐԻ ՆԱԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Իրանի շուրջ քաղաքական իրավիճակի լարվածությունը և իրանական նավթի բոյկոտը ի վերջո կարող են հանգեցնել նրան, որ Իրանը կյանքի կոչի իր սպառնալիքը, այն է՝ փակի Հորմուզի նեղուցը, որտեղով տեղափոխվում է միջազգային շուկա արտահանվող նավթի մոտավորապես 40%-ը: Առավել ևս, որ Իրանի արժույթային մուտքերի շուրջ 70%-ը ստացվում է նավթի արտահանումից:

Այս համատեքստում ստորև ներկայացնում ենք Իրանից նավթ գնող երկրների ծավալները, որն ավելի հասկանալի կդարձնի այդ երկրի շուրջ ստեղծված վիճակն ու հնարավոր զարգացումները:

Իրանից նավթ գնող երկրներ	Իրանից արտահանվող նավթի բաժնեմասը (%)
Չինաստան	22 %
Եվրամիություն	18 %
Ճապոնիա	14 %
Հնդկաստան	13 %
Հարավային Կորեա	10 %
Թուրքիա	7 %
ՀԱՀ	4 %
Շրի Լանկա	2 %
Թայվան	1 %
Այլ երկրներ	9 %

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ (ԵՄ) 20 ՏԱՐԵԿԱՆ Է, սակայն ներկայում ունի խնդիրներ

Եվրամիության ստեղծման համար հիմք հանդիսացավ 1992 թ. փետրվարին Հոլանդիայի Մասստրիխտ քաղաքում Եվրոպայի 12 պետությունների ստորագրած համաձայնագիրը, որը էական ազդեցություն ունեցավ ոչ միայն Եվրոպայի, այլև աշխարհի քաղաքական ու տնտեսական նոր կերպարի, դիմագծի ձևավորման վրա: Ներկայիս Եվրամիությունը (ԵՄ) մինչ այդ հանդես է եկել Եվրոպական համագործակցություն (ԵՀ) անվամբ, որը ներառել է երեք համագործակցություններ՝ Եվրոպական տնտեսական համագործակցությունը (ԵՏՀ), որը ձևավորվել է 1957 թ. և կոչվել է նաև «Ընդհանուր շուկա», Ատոմային էներգիայի Եվրոպական համագործակցությունը (Եվրատոմ), Քարածխի և պողպատի Եվրոպական միավորումը:

Եվրոպական միության (ԵՄ) 12 պետությունների (Բելգիա, Նիդեռլանդներ, Լյուքսեմբուրգ, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Դանիա, Իսպանիա, Հունաստան, Իռլանդիա, Պորտուգալիա, Մեծ Բրիտանիա) քաղաքական և տնտեսական ինտեգրումը հատկապես կարևոր նշանակություն ուներ այն իրողության հետևանքատկերի վրա, որ դրանից առաջ փլուզվել էր աշխարհի գերիզոր տերություններից մեկը՝ Խորհրդային Միությունը, և միմյանցից տարանջատվել էին նախկինում քաղաքական ու տնտեսական օրգանական միասնություն կազմող 15 պետություններ:

Եվրամիության անդամ երկրների թիվը ներկայում 27 է, որից 17-ը ընդգրկված է Եվրոգոտու մեջ և Եվրոն ընդունել է որպես միասնական արժույթ: Եվրամիությունը միջազգային միասնական կառույց է, որը բնութագրվում է անդամ երկրների ազատ առևտրով և մաքսային միությանը, աշխատուժի և կապիտալի ազատ միգրացիայով, միասնական արժույթի կիրառմամբ: Եվրամիությունն ունի իր որոշակի պահանջներն անդամ երկրների նկատմամբ: Մասնավորապես, անդամակցող երկրների պետությունների պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը, իսկ պետարտքը՝ ՀՆԱ-ի 60%-ը: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը պետք է լինի 1,25-2%-ի շրջանակներում, իսկ գնաճը մինչև 3%:

Ներկայում Եվրամիությունում ամեն ինչ չէ, որ հարթ է ընթանում. ճգնաժամային իրավիճակում են մի շարք երկրներ, որն արտահայտվում է առանձին երկրների պետական պարտքերի հսկայական չափերով և սպառնում է հանգեցնել դրանց դեֆոլտին կամ անվճարունակությանը:

Ստորև ներկայացնում ենք Եվրոգոտու առավել հիմնախնդրային երկրների պետարտքի ցուցանիշները 2011 թ. վերջի դրությամբ:

Երկիրը	Պետարտքը (մլրդ Եվրո)	Պետարտքը ՀՆԱ-ի ներսում (%)	Հիմնական վարկատուներ
Հունաստան	328,6	157,7	Ֆրանսիա, Գերմանիա
Իտալիա	184,3	120,3	Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ճապոնիա
Իռլանդիա	148,1	112,0	Մեծ Բրիտանիա, Գերմանիա, ԱՄՆ, Ֆրանսիա
Պորտուգալիա	160,5	101,7	Իսպանիա, Գերմանիա
Միջինը Եվրոգոտում	7800	87,7	—

Այնուհանդերձ, Գերմանիան և Ֆրանսիան լավատեսորեն են տրամադրված, որ իրենք էլ կարող են Եվրոպայում արմատավորել ԱՄՆ-ի նման կայացած համադաշնություն:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐ. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին ժամանակաշրջանում Հայաստանում առանձին առևտրային բանկեր սկսել են տրամադրել ուսանողական վարկեր: Այս կապակցությամբ հետաքրքրական է իմանալ, թե ինչպիսին է ուսանողական վարկերի տրամադրման արտասահմանյան փորձը:

Արևմուտքի զարգացած երկրներում կրթության ֆինանսավորման ձևերից մեկը ուսանողական վարկերն են, որոնք ուսանողներին են տրամադրվում պայմանով, որ պետք է մարվեն ուսումն ավարտելուց հետո որոշակի ժամանակ անց: Առավել ևս, հատկանշական է այն, որ այդ վարկերը տրամադրվում են շատ ցածր՝ առավելագույնը 5% տոկոսադրույքով:

Ուսանողական վարկերը հիմնված են այն պարզ տրամաբանության վրա, որ շրջանավարտը ապագայում կունենա այնպիսի եկամուտ, որն էապես կգերազանցի վարկի սպասարկման գումարը, և վարկի մարումը

այնքան էլ մեծ ռիսկայնություն չի ունենա: Այնուհանդերձ, ներկայում ուսանողական վարկերի ռիսկայնությունը մեծացել է այն առումով, որ բարձր գործազրկության պայմաններում մտավախություն կա, որ ուսանողներն ի վիճակի չեն լինի վերադարձնել վարկերը: Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության երկրներում 2010 թ. բուհերի շրջանավարտների 4,4 %-ը գործազուրկ է եղել: Միայն ԱՄՆ-ում ուսանողների վարկային պարտքը կազմել է ավելի քան 1 տրլն դոլար, որի վերադարձելիության հետ կապված՝ երկրի տնտեսության մեջ բարդ հիմնախնդիրներ կարող են առաջանալ:

Արևմուտքում վարկերը տրամադրվում են ոչ միայն ցածր տոկոսադրույքով, այլև արտոնյալ ժամանակահատվածով՝ 4-5 տարի, վարկառուն ուսանողն է, ոչ թե ծնողը կամ խնամակալը, և վարկի մարումն իրականացվում է ուսանողի ապագա եկամուտների հաշվին:

ԱՄՆ-ում ուսանողական վարկերը տրամադրվում են ոչ միայն ուսման, այլև այդ ընթացքում ուսանողի գոյապրուստի համար: Շվեդիայում բարձրագույն կրթությունն անվճար է, սակայն ուսանողը կարող է վարկ ստանալ, որպեսզի վճարի ուսման հետ կապված ապրուստի ծախսերը: Գերմանիայում ուսանողական վարկ կարող են ստանալ 18-30 տարեկան ուսանողները, որը պարզապես անտոկոս փոխառություն է: Նիդեռլանդներում ուսանողական վարկ ստանալու իրավունք ունեն միայն առկա ուսուցմամբ սովորող մինչև 30 տարեկան ուսանողները: Վարկի մարումն սկսվում է ուսումն ավարտելուց երկու տարի հետո, իսկ վարկն ամբողջությամբ մարվում է 15 տարվա ընթացքում, և տոկոսադրույքը չի անցնում 4-ից:

Լատվիայում պետությունն ուսանողներին վարկ է տալիս 10 տարի ժամկետով: Սովորելու ընթացքում վարկն անտոկոս է, իսկ ուսումն ավարտելուց հետո 12 ամիս անց այն սահմանվում է տարեկան 5%-ի չափով:

Ինչպես նկատում ենք, ուսանողական վարկերը բարձրագույն կրթությունը ֆինանսավորելու և ուսանողին աջակցելու նպատակ են հետապնդում, որն ինքնին երկրում մարդկային կապիտալի մեծացման և նրա հնարավորությունների ընդլայնման կարևոր ֆինանսական նախադրյալ է:

ՃԱՆԱԶԵՆՔ ԱՇԽԱՐՀԻ ՄԻԼԻԱՐԴԱՏԵՐ ԹԵՐՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՆ

Բարձրագույն կրթություն ստանալը, ինչ խոսք, կյանքում իր տեղը գտնելու և ապագայում լավ վաստակելու, բարձր եկամուտ ապահովելու կարևոր նախադրյալներից է: Բարձրագույն կրթությունը մարդկային կապիտալի ձևավորման հիմնական գործոնն է: Վերջինիս մեջ ներդրումները ավելի բարձր եկամտաբերություն են ապահովում, քան ֆիզիկական կապիտալում ներդրումները: Սակայն իրականում աշխարհում բազմաթիվ միլիարդատերեր կան, որոնք նույնիսկ մասնագիտական քոլեջ չեն ավարտել և ուսուցման տարիները զոհաբերելով իրենց բիզնես-գաղափարներին՝ մեծ կարողությունների և հարստության տեր են դարձել: «Business Pundit» հանդեսը ներկայացրել է աշխարհի 10 ամենահարուստ թերուս գործարարների վարկանիշային ցուցակը, որը, ներկայացնում ենք ստորև և կարծում ենք՝ կհետաքրքրի մեր ընթերցողներին: Սակայն, իմացեք, որ մասնագիտական կրթությունը շահավետ բիզնեսի նախադրյալն է:

Տեղը վարկանիշային ցուցակում	Երկիրը	Հարստությունը (մլրդ դոլար)	Տեղը աշխարհի մեծահարուստների մեջ
1. Բիլ Գեյթս	ԱՄՆ	56,0	1
2. Լոուրենս Էլիսոն	ԱՄՆ	39,5	5
3. Էյթ Բատիստա	Բրազիլիա	30,0	8
4. Մուկել Ամբանի	Հնդկաստան	27,0	10
5. Շելդոն Ադելսոն	ԱՄՆ	22,3	16
6. Ազիմ Պրեմձի	Հնդկաստան	16,8	36
7. Մայքլ Դել	ԱՄՆ	15,5	45
8. Սթիվ Բալմեր	ԱՄՆ	14,5	49
9. Մարկ Ցուկերբերգ	ԱՄՆ	13,5	52
10. Ռոման Աբրամովիչ	Ռուսաստան	13,4	53

*ՍԱՍՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ,
կառավարման ֆակուլտետի փոխդեկան*

ՆՎԵՐՆԵՐՆ ՈՒ ԱՆԱԿՆԿԱՂՆԵՐՈՂ՝

ԱՆԱՎՇՏԱՆ ԱՄԻՐՈՒ ՈՒ ՆՎԻՐՈՒՄԻ ԱՊՇՏՎԱՏՉՅԱ

Հայոց պետական տոնացույցի երկու տոները՝ Մարտի 8-ը և Ապրիլի 7-ը, ճիշտ է, ծագումնաբանությամբ շատ տարբեր են, սակայն միահյուսվելով՝ ամփոփում են մայրություն ու սեր, գեղեցկություն ու հավատարմություն:

Մարտի 8-ի տոնն ունի հարյուրամյա, Ապրիլի 7-ը՝ հազարամյակների պատմություն: Հին Հայաստանում վերջինս նվիրվել է Անահիտ դիցուհուն և նշվել է որպես զարնանային զարթոնքի, նոր կյանքի սկզբնավորման, պտղաբերության ու մայրության տոն: Հետագայում նոր իմաստ է ձեռք բերել հայ եկեղեցու տոնակարգում ու ծիսակարգում: Պատահական չէ, որ հենց ապրիլի 7-ին է Գաբրիել հրեշտակը Մարիամին հայտնում, որ հղիանալու է և լույս աշխարհի է բերելու որդուն՝ համայն մարդկության փրկչին: Ավետման այս տոնն այնքան է արմատավորվել հայ ժողովրդի ազգային հոգեբանության մեջ, որ 1921 թվականի հունվարի 16-ի որոշմամբ ներառված է եղել անգամ բոլշևիկյան Հայաստանի պետական տոնացույցում: Հետագայում, խորհրդային ռեժիմի ճնշմամբ, ավետման օրը նշվել է միայն եկեղեցիներում: Այսօր Մայրության տոնը, ժառանգելով քրիստոնեական տոնի գաղափարը, խորհրդանշում է կյանքի սկիզբը՝ իր բոլոր դրսևորումներով և առաջին հերթին՝ մայրության խորհրդով:

Մարտի 8-ի ակունքները հասնում են 1910-ական թվականները, երբ սոցիալիստ կանանց Կոպենհագենի 2-րդ միջազգային կոնգրեսում Կլարա Ցետկինի առաջարկությամբ որոշվեց հռչակել սոցիալական, տնտեսական, քաղաքական իրավահավասարության պայքարի կանանց միջազգային համերաշխության տոն: Մարտյան այս տոնը առաջին անգամ նշվել է Գերմանիայում, Շվեյցարիայում, Դանիայում, Ավստրիայում, 1913թ.՝ Ռուսաստանում և 1921թ.՝ Խորհրդային Հայաստանում: Տարիները ձևափոխեցին Մարտի 8-ի արժեքը՝ միանգամայն ուրիշ, ավելի վեհ ու գեղեցիկ խորհուրդ հաղորդելով և դարձնելով կանացիության ու գեղեցկության փառաբանման օր:

Հայաստանում Մարտի 8-ը նշվել է ինչպես խորհրդային, այնպես էլ անկախության առաջին տարիներին: 1996 թվականին ՀՀ Ազգային ժողովն այս օրը հանեց տոնացույցից՝ համարելով այն խորհրդային հասարակարգի մնացուկ, փոխարենը՝ ընդունվեց ապրիլի 7-ը՝ որպես Մայրության և գեղեցկության տոն: Ավելի ուշ՝ 2002 թ., մարտի 8-ը վերականգնվեց, և հենց այդ օրվանից Հայաստանում նշվում է և՛ մարտի 8-ը՝ Կանանց միջազգային օրը, և՛ ապրիլի 7-ը՝ Մայրության և գեղեցկության օրը, իսկ այս տոների միջև ընկած ժամանակահատվածը

համարվում է կանանց նվիրված միամսյակ:

Այսպիսով, Հայաստանում կանանց նվիրված երկու տոն կա, և մի ամբողջ ամիս շնորհավորանքներ ու մեծարումներ, կանանց ու աղջիկներին ձոնված գեղեցիկ ու քնքնուշ խոսքեր են հնչում: Գարնան, զարթոնքի այս միամսյակում կանայք կրկին ու կրկին հայտնվում են իրադարձությունների կիզակետում:

Ի՞նչ խորհուրդ ունեն զարնանային այս տոները տղամարդկանց համար, ի՞նչ անակնկալներ են մատուցում նրանք իրենց սիրելիներին, և, վերջապես, որքանո՞վ է այս գեղեցիկ ու լուսավոր տոնն ազդում տղամարդկանց՝ զրպանի «պարունակության» վրա: Խոստովանենք՝ իրականում մեզ չհաջողվեց ստանալ մեր վերջին հարցի պատասխանը, քանի որ, ինչպես նշեցին մեր զրուցակիցները, տոնական նվերները գնում են անսահման նվիրումով, սիրելիներին երջանկացնելու, սեր ու ջերմություն պարգևելու ցանկությամբ: Այսինքն՝ «ներդրումների» արդյունքում նրանց համար էականը սեփական «հոգևոր կապիտալում» տեղաշարժերն են դեպի վեհ ու գեղեցիկը:

Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկան Թաթուլ Մկրտչյանն ուրախ է, որ տոնացույցում հայտնված ապրիլի 7-ը դուրս չնդեց մարտի 8-ը, այլ եկավ հաստատելու, թե որքան կնամենձար է հայ տղամարդը և կարող է կնոջը տարվա մեջ նվիրել երկու տոնական օր, նույնիսկ մի ամբողջ ամիս: «Ապրիլի 7-ին առաջին շնորհավորանքը մորս են ուղղում՝ ամփոփելով դրա մեջ երախտագիտություն, սեր, քնքշանք ու մեծարում», - մեզ հետ զրույցում ասաց նա և ավելացրեց, որ սիրում է անակնկալներ մատուցել, քանի որ դրանք միշտ էլ ուրախացնում են կանանց ու աղջիկներին: Դեկանն ինքն էլ է փորձում փոքրիկ, անսպասելի անակնկալներով ռոմանտիկ տրամադրություն հաղորդել սիրելիին: Այս առիթով նա վերհիշեց մի անմոռաց դիպված երիտասարդական տարիներից:

«Երբ դեռ ամուսնացած չէի, ընկերուհուս հրավիրեցի մի գողտրիկ սրճարան: Մարտի 8-ն էր, իսկ ես անգամ չշնորհավորեցի նրան. իբր մոռացել էն տոնի մասին: Ջրույցն ուղղորդում էի բոլորովին այլ թեմաների շուրջ: Ջգում էի՝ ընկերուհիս փոքր-ինչ ցրված է. ինձ վաճառ անտեղյակությունը մտահոգում էր՝ չէ՞ որ Մարտի 8-ն էր: Ու մեկ էլ... մեզ է մոտենում ուսանողներիցս մեկը և անսպասելիորեն նրան նվիրում զարնանային գեղեցիկ մի ծաղկեփունջ՝ սիրո ու նվիրվածության ջերմ խոսքերով լի բացիկով», - հուզմունքով պատմեց նա և ավելացրեց, որ երբեք չի մոռանա սպասումից արդեն հոգնած, փոքր-ինչ հիասթափված, այնուհետև իր անսպասելի արար-

ԱՆՎԱՆԻ ՀԱՅՈՒՅԻՆԵՐԸ

քից զարմացած ու երջանկացած ընկերուհու դեմքը: «Հիմա նա իմ կինն է, և նրան դեռ շատ անակնկալներ են սպասվում...»,- խոստացավ Թաթուլ Սկրտչյանը:

Անդրադառնալով մեր «տնտեսագիտական» հարցին՝ դեկանը նշեց, որ սիրելի մարդկանց երջանկացնելու և ուրախացնելու համար ֆինանսական միջոցներ ծախսելը կորուստ չէ, քանի որ դրանք մարդուն անմոռաց պահեր են պարգևում:

«Ինձ համար կանանց տոնը սկսվում է մարտի 1-ից, զարնան առաջին օրվանից: Ամեն տարի այդ օրը կնոջս ու դստրիկիս շնորհավորում եմ՝ նվիրելով զարնանային նորաբաց մանուշակներ»,-ասաց հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան Աշոտ Մաթևոսյանը: Նրա պատմեց, որ զարնան տոնը հիշեցնում է իր մանկությունը. «*Դեռ փոքր տարիքից սրտի թրթիռով էի սպասում զարնան գալստյանը, որպեսզի շնորհավորեմ մայրիկիս Մարտի 8-ը, որպեսզի փոքր-ինչ ջերմացնեմ նրան, որ հետո այդ ջերմությունն ու գորովանքը տասնապատկվեն ու փոխանցվեն մեզ՝ զավակներին: Մայրական այդ ջերմությունն է, որ բարություն է ծնում, ստիպում բարի գործեր անել ու առաջ շարժվել:*»:

Աշոտ Մաթևոսյանն ամեն տարի Մարտի 8-ին տիկնոջը վարդեր է նվիրում՝ որպես սիրո և հավատարմության խորհրդանիշ: Նա նշեց, որ կանանց ու աղջիկներին նվիրված օրը տոնում են նաև ընկերներով. մեկնում են Ծաղկածոր, որտեղ սիրելի կանանց ու դստրիկներին գեղեցիկ անակնկալներ են մատուցում՝ օրը դարձնելով պատմական: Իսկ, ընդհանրապես, ինչպես ասաց դեկանը, կանանց միաձայնի յուրաքանչյուր օրն է փորձում է տոնի վերածել: Ամենակարևորը՝ Աշոտ Մաթևոսյանն էլ է տոնական ծախսեր հաճույքով կատարում, դրովիետև դրանով ուրախացնում է իր սիրելիներին և տեսնելով նրանց երջանկությունը՝ ինքն էլ երջանկանում:

Կառավարման ֆակուլտետի դեկան Էդգար Ղազարյանի համար կանանց նվիրված զարնանային տոներն ամփոփվում են միայն մարտի 8-ի և ապրիլի 7-ի մեջ: Նրա հիմնավորմամբ՝ մեկ ամիս շարունակվող տոն լինել չի կարող, քանի որ տոնի խորհուրդը եզակիությունն է, և ամեն օր նշվող տոնն իմաստազրկվում է: Դեկանի կարծիքով՝ մարտի 8-ը բոլոր կանանց տոնն է, և ինքը սիրով է շնորհավորում մայրիկին, երեք քույրերին, գործընկեր կանանց: Իսկ Ապրիլի 7-ը միմիայն մայրիկի տոնն է: Այդ է պատճառը, որ այդ օրը նա շնորհավորում է միայն իր մայրիկին, իսկ կնոջը կես կատակ, կես լուրջ ասում. «*Քո տոնն էլ թող զավակներդ շնորհավորեն:*»:

Էդգար Ղազարյանը հիշեց, որ դեռ փոքր տարիքից միշտ ցանկացել է զարմացնել մայրիկին՝ չդիմելով մեծերի օգնությանը. «*Մի տարի էլ նրան իմ ձեռքով պատրաստած գեղեցիկ խճանկար-բացիկ նվիրեցի: Մայրս այն խնամքով պահել էր, և որքա~ն մեծ էր հիացմունքս ու զարմանքս, երբ անցյալ տարի իր զավակի ձեռքով պատրաստած բացիկը նվիրեց իմ որդուն, իսկ վերջինս էլ՝ իր մայրիկին: Դա բոլորիս համար մեծ անակնկալ էր...*», - պատմեց նա:

Վերջում Էդգար Ղազարյանը նշեց, որ ծախսեր, իհարկե, կատարում է, ինչն էլ, անկասկած, ազդում է գրպանի պարունակության վրա: Սակայն մի ուրախալի իրողություն փարատում է բոլոր մտահոգությունները. տոները յուրաքանչյուր ամսվա սկզբին են, և հաճելի է, որ տոնական ծախսերի համար գումարը բավականացնում է:



Սոնե ՄԱՅՐԻԿ



Սրբուհի ՏՅՈՒՍԱԲ



ՍԻՐԱՆՈՒՅՑ



ՀԱՍՄԻԿ



Մարիետա ՇԱՀԻՆՅԱՆ



Լյուսի ԱՄԱՐԱ



Սիլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ



Մետաքայա ՍԻՄՈՆՅԱՆ

Ո՞րն է այն միակ խոսքը, անակնկալը, անկրկնելի ու անփոխարինելի նվերը.

անկեղծանուն են ՀՊՏՀ կանայք

Գարնանային ջերմացնող ու լույս սփռող տոների ընթացքում կանանց ու աղջիկներին են ձոնվում գեղեցիկ խոսքեր, բարենադրանքներ, նրանց են մատուցվում թանկ ու անմոռաց նվերներ ու անակնկալներ: Դրանք թափանցում են կանանց հոգու խորքերը, ջերմություն ու սեր պարգևում: Այս օրերին հաճախ հնչում է այն միակ խոսքը, ընծայվում այն միակ ու անկրկնելի նվերը, որն առանձնահատուկ է և երբեք չի ջնջվում մտքից ու սրտից: Մենք գրուցեցինք նաև համալսարանի կանանցից մի քանիսի հետ և այն, ինչ հաջողվեց պարզել, կարծում ենք, կհուզի նաև մեր ընթերցողներին:

Կառավարչական հաշվառման ամբիոնի վարիչ Լիանա Գրիգորյանն ասաց, որ գարունը տարվա իր եղանակն է, որովհետև ծննդյան օրն էլ է գարնանը՝ մարտի 10-ին: Այնպես, որ նրա ընտանիքում գարնանային մի տոն էլ է ավելացել, և գարունն անվերջանալի տոն է դարձել: Նա չթաքցրեց, որ այդ օրերին բազմաթիվ շնորհավորանքներ ու ջերմ խոսքեր է լսում, նվերներ ստանում: Բայց նրա համար ամենաթանկը, սիրելին ու անմոռացը միշտ էլ եղել են զավակների՝ դստեր ու որդու պատրաստած նվերները: **«Այնքան նվիրում, սեր ու քնքշանք կա դրանց մեջ: Երբեք չեն մոռանա անցած տարի նրանց մատուցած մարտյան մեծ անակնկալը: Աշխատանքից հոգնած տուն էի վերադառնում, մտքերիս հետ էի՝ տանն էլ շատ գործեր ունեի անելու: Դուռը բացելուն պես ինձ դիմավորեցին զավակներս՝ իմ սիրած ծաղիկների՝ կակաչների մի մեծ փունջ ձեռքներին: Սենյակը տոնական տեսք ուներ, ամենուր ծաղիկներ էին, բացիկներ, փուչիկներ: Իսկ սենյակում բացված էր տոնական գեղեցիկ սեղան՝ հատուկ ինձ համար ու իմ ծաշակով ձևավորված»**, - հուզմունքով հիշեց նա և ավելացրեց, որ այդ ամենի մեջ անքան սեր կար ու այնքան խանդավառություն, որն իրեն դեռ մի ողջ կյանք կբավականացնի:

«Մարտի 8-ը որպես տոն չեն ընկալում. մի տեսակ խորհրդային ու սոցիալիստական շունչ կա մեջը: Բայց բանի որ այն ընդունված է և նշվում է, ինքս էլ շնորհավորում եմ բոլորին և ընդունում շնորհավորանքներ», - անկեղծացավ օտար լեզուների ամբիոնի վարիչ Սուսաննա Չալաբյանը և ավելացրեց, որ փոխարենը, իր համար թանկ է Ապրիլի 7-ը, որն ունի մեծ ու լուսավոր խորհուրդ: **«21-ը մայրությունն իր մեջ ամփոփում է մեր կյանքի ու գոյության իմաստը»**, - ասաց նա:

Ներկայացնելով իր համար շատ թանկ ու սիրելի նվերները՝ նա ասաց. **«Երբեք չեն մոռանա այդ օրը. տարիներ առաջ էր, աշխատասենյակիս դուռը բացեց մայրանալու սպասող իմ ուսանողուհին և գարնանային տոների առթիվ ինձ նվիրեց ձեռագործ անձեռոցիկ՝ փոքր-ինչ երկչոտ տոնով ասելով, որ այն ինքը գործել է հատուկ ինձ համար»**: Սուսաննա Չալաբյանը ժպիտով ու առանձնահատուկ ջերմությամբ հիշեց նաև 4-ամյա թոռնիկի նվեր-անակնկալն ու մաղթանքը. **«Ինձ նվիրեց փոքրիկ մի տիկնիկ, որը թևատակին մի գիրք ուներ պահած. «Տատիկ, շնորհավորում եմ, այս տիկնիկի ձեռքին քո գրած «Economics»-ն էլ»**, - ասաց նա և մաղթեց, որ շատ-շատ գրքեր գրեն»:

Փիլիսոփայության ամբիոնի դոցենտ Սոֆյա Օհանյանը, դպրոցական տարիներին վստահ էր, թե մարտի 8-ը մայրիկների տոնն է, քանի որ տոնից երկու շաբաթ առաջ ամբողջ դասարանով պատրաստվում էին՝ գործի դնելով մանկական հնարամտություններ: Իբրև թե «խորամանկությամբ» «միամիտ» մայրիկներից փող էին կորզում, որպեսզի հետո նրանց համար բացիկ գնեն: Պատմում է, որ տոնն իր համար խորապես իմաստավորվել է, երբ արդեն ուսանող էր: **«Յիշում եմ՝ մի անգամ շնորհավորելու ինքնատիպ եղանակ էին հորինել մեր կուրսի տղաները: Գնել էին տարբեր նվերներ ու բացիկներ և համարակալել դրանք: Աղջիկներից յուրաքանչյուրը որևէ թիվ էր ատում և ստանում այդ թվին համապատասխան նվերն ու բացիկը: Յետաբերթի տ, տպավորիչ, մի քիչ էլ խորհրդավոր, ու մեզ դուր եկավ այդ անակնկալը»**, - ասաց նա և ավելացրեց, որ, առհասարակ, սիրում է մարտի 8-ը, որովհետև դա և մի առիթ է՝ հարազատներին ու մտերիմներին շնորհավորելու, մաղթելու գարնանային ջերմություն, եթերային թարմություն և արևոտ տրամադրություն:



Արաքս ԴԱՎԹԱՅԱՆ



Գոհար ԳԱՍՊՄՐՅԱՆ



Ավետյանա ՆԱՎԱՍՏՐՅԱՆ



ԱՏՏԱՔՍԵ



Լուսինե ԶԱՔՄՐՅԱՆ



Արսենուհի ԿԱԼԵՆՑ



Ալիս ԿԻՐԱԿՈՍՅԱՆ



Վարդուհի ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

ԱՂԵԿ ԿԻՆ, ՉՈՒՆԻ ԳԻՆ

Հայոց առածանու մարգարիտներից մեկն է սա, կնոջ հանրային դերին, ընտանիքին, ամուսնական հարաբերություններին վերաբերող լավագույն վարքականոնը:

Տակավին **Յոնեթոս** է «Ողիսականում» ձևակերպել իդեալական ընտանիքի ըմբռնումը.

Եվ արդարև՝ չկա ոչինչ ավելի լավ, ազնվագույն ու պանծալի,

Քան այն, երբ միշտ մարդ ու կինն են համաբարո և սիրով լի մի հարկի տակ՝

Ի բերկություն բարեկամի և ի հեծուկս նախանձաբեկ չար թշնամու:

Իհարկե, տարբեր ժողովուրդների, տարբեր մշակույթների շրջանակներում այդ «համաբարո և սիրով լի» համակեցությունը տարբեր մասնավորեցում ունի: Հին հույն հեղինակները, գրեթե միաբերան, խիստ ցածր են գնահատել ամուսնացած կնոջ հանրային դերը, մտավոր կարողությունները, բարոյական հատկությունները, փոխարենը՝ հետերաներին «սիրո քրոնիկներին» օժտել են ամենայն բարեմասնություններով:

«Առաքինի կնոջ» կարևորագույն հատկություններն են թվարկված **Աստվածաշնչում**՝ նա օրնիբուն աշխատում է, նրա ճրագը գիշերը չի հանգչում, ընտանիքի բոլոր անդամներին հագցնում, կերակրում է, նա բերանը բացում է իմաստությամբ, նրա ամուսինն ու որդիները չեն դադարում գովաբանել նրան և այլն (Առակաց, ԼԱ, 10–31):

Այսինքն՝ «աղեկ կինը» անգին է, բայց որպես ի՞նչ, ո՞ր դերում՝ մո՞ր, սիրուհո՞ւ, խոհարարուհո՞ւ, ընկերուհո՞ւ, խորհրդատու՞ի, զրուցակցի՞, աշխատավորուհո՞ւ, աղախնի՞, ստրկուհո՞ւ...

Գերմաներեն հայտնի ասացվածք կա (հեղինակությունը վերագրվում է **Վիլհելմ Բ կայսրին**)՝ «Կ»-ով սկսվող չորս բառերից կազմված՝ **«Kinder, Kitchen, Kleider, Kirche»**, այսինքն՝ կնոջ բաժինն են երեխաները, խոհանոցը, զգեստները, եկեղեցին: Որպես հակակշիռ՝ սրա կողքին դնենք գերմաներեն մեկ այլ ասացվածք, որ բառացի համընկնում է **«Այր ու կին՝ մի մարմին»** հայերեն ասացվածքին (**«Mann and Weib sind ein Leib»**):

Փոխարենը՝ անգլերեն մի ասացվածք, որ իր ոգով մոտ է հայոց առածանուն, նրբորեն խաղարկում է «տուն» բառը՝ դրա «բնակարան» և «տանիք» իմաստներով, թե՛ տղամարդիկ տուն են շինում, կանայք՝ շենացնում (**«Men make houses, women make homes»**):

Խելացի կինը տան զարդն է՝ ֆրանսերեն ասացվածքի միտքն է (**«Femme prudente et bien sage est l'ornement du ménage»**):

Ըստ ռուսերենի՝ լավ կնոջ հետ դժբախտությունը կես դժբախտություն է, իսկ ուրախությունը՝ կրկնակի (**«С доброй женой горе – полгоре, а радость –**

вдвойне»): Մեկ ուրիշը հուշում է կողմերի կապակցվածությունը, թե առանց ամուսնու՝ կարծեք առանց գլխի, իսկ առանց կնոջ՝ առանց խելքի (**«Без мужа – что без головы; без жены – что без ума»**):

Վերնագրի ասացվածքը ստույգ բնորոշում է հայոց ընտանեվարության ուղնուծուծը, հայ կնոջ հարգն ու վարկը, ընտանեկան և հանրային կյանքում նրա տեղի և դերի բարձր գնահատականը:

Դժվար է երևի **գուսան Զիվանուց** ավելի լավ ասել.

Հայ կանանց ենք պարտական, թե որ հայ ենք մնացել,

Եթե ոչ կորել էինք, անդունդ էինք գնացել,

Մեր հավատը, մեր լեզուն նրանցով է զարգացել.

Հայ կնոջ սրբությունը ողջ ազգերն են իմացել:

Հայ ընտանիքը ավանդաբար ամուր է եղել: Այժմ էլ հայ ընտանիքի վիճակը վատ չէ՝ ֆրանսիացիների, էստոնացիների, ռուսների, ամերիկացիների համեմատ: Սակայն գոհանալու քիչ բան ունենք, քանի որ անհանգստացնող է հայ ընտանիքի ներկայի և անցյալի համեմատությունը, մասնավորապես՝ ամուսնավուծությունների աճի միտումը:

Հայ ընտանիքի բազում խնդիրները առանձին և հանգամանալից քննարկման են կարոտ, բայց չենք կարծում, թե դրանց լուծմանը կարող են նպաստել Արևմուտքից փչող ֆեմինիստական հովերը: Իսկ բուն Հայաստանում շուրջ քառասունի հասնող կանանց կազմակերպությունները օգտակար գործ արած կլինեն, եթե օտարոտի գաղափարները ծամծմելու փոխարեն, փորձեն ձևակերպել ու զարգացնել հայոց ընտանեվարության սկզբունքները, գործածելով, ի թիվս ազգամշակութային այլ միջոցների, հայ ժողովրդական առածներն ու ասացվածքները:

Խնդիրը ժամանակին մտահոգել է **Հովհաննես Թումանյանին**: Ժողովրդի բարոյական և տնտեսական կյանքի ճանաչման լավագույն միջոցը նա համարում է կնոջ վիճակի պարզաբանումը: «Կնոջ վիճակը հայտնում, ցույց է տալիս, ինչպես անհատի, այնպես և հասարակության աշխարհայեցողության սահմանը, զարգացման աստիճանը». այս ելակետով շարունակելով մտորումները և ավստսանքով արձանագրելով կնոջ հանդեպ տակավին պահպանվող «ավանդական արհամարհանքը»՝ Թումանյանը, մասնավորապես, եզրակացնում է. «Այո՛, *«Մարդ գրակը վեր ա դնում հետը մասլախաթ անում, խո իսան (մարդ) ա»*, ասում է տղամարդը կնոջ մասին. *«Մարդի ծեծած–վարդի ծեծած»* ասում է ծեծված, նախատված կինը, և, այսպիսով, մեկից մի փոքր գիջում, մյուսից համբերություն մեղմանում է տրադիցիայի խստությունը, բայց սա քիչ է, շատ է քիչ. սա դեռ մայրը, կինը, կյանքի ընկերը չի... (*«Բորչավուն»*, 1894 թ.):»:

Ստահոգության տեղ այսօր էլ կա: Բայց այն հեղինակները, որոնք օտարամատույց դրամա-

շնորհների շրջանակներում ջանում են հայ կնոջը որպես «ընտանեկան բռնության զոհ» մատուցել (Արևմուտքին կապելով կանանց բողոքի «թեժ գիծ» են մոզոնում և կասկածահարույց հարցումներ անցկացնում) գոնե փոքր-ինչ բարեխղճորեն ծանոթանալին սեփական մշակույթին: Կնոջ նսեմացման, ընտանեկան բռնության որևէ նշույլ իսկ չկա «Սասունցի Դավիթ» դյուցազներգության մեջ, հեքիաթներում, առածանիում: Ավելին, հայոց գոյության, հայոց հարատևության գաղտնիքը, ժամանակակից լեզվով՝ «կողը», ընտանիքն է: Ահա ընտանիքի կայացման, պահպանման մեջ հատկապես կնոջն է վերապահվում առաջատարի դերը, կարելի է ասել յուրատեսակ (դարձյալ տուրք տալով ժամանակակից եզրաբանությանը) «համակարգաստեղծ» առաքելությունը՝ բնականաբար, դրա բարեհաջող կամ ծախավեր կատարման արձանագրումներով:

- ✘ «Տուն թող կնիկ էլնի, թող գեշ էլնի»,
- ✘ «Կնիկնարդ կա՝ տուն կը շինե, կնիկնարդ կա՝ տուն կը քանդե»,
- ✘ «Կնիկ կա՝ գարին ցորեն կը դարձնե, կնիկ էլ կա՝ ցորենը գարի»,
- ✘ «Կնկա շինած տունը աստոծ չի քանդի, աստու շինածը կնիկը կը քանդի»,
- ✘ «Որ տուն գնաս, կնկա բարեկամ ըլիր»,
- ✘ «Կնիկդ որ լավ ըլնի, մի էթա հարսանիք, տանդ ամեն օր հարսանիք ա ու հարսանիք. թե կնիկդ փիս ըլնի, մի էթա մեռլատուն, տունդ ամեն օր մեռլատուն ա ու մեռլատուն»,
- ✘ «Շեն կենա մեր տնիկ, անուշ կենա մեր կնիկ»,
- ✘ «Կնիկ՝ կը շինե տնիկ»:

Իսկ առհասարակ, ընտանիքի կարգավորման գլխավոր խնդիրը ոչ թե կնոջ կամ տղամարդու դերի գերազնահատումը կամ թերազնահատումը պիտի լինի, այլ սեռային ներդաշնակության ապահովումը, մի խնդիր, որն իբրև նորություն է մեկնաբանվում (այսպես կոչված՝ «գենդերային» մոտեցումը), սակայն որի լուծումը հայոց առածանին հոյակապ է տվել.

- ✘ «Տղամարդը որ կա՝ դրսի պատ է, կնիկ որ կա՝ ներսի պատ է»,
- ✘ «Մեկը թե զանգակ է, մեկել բամբակ պտի ըլնի»,
- ✘ «Մարդը սել է (հեղեղ), կնիկը գյուլ է (լիճ)»,
- ✘ «Կնիկը տղամարդու հոգին ա»,
- ✘ «Այր ու կին՝ մի մարմին»,
- ✘ «Կնիկը երկանի կեսն է»,
- ✘ «Կնիկնարդ որ կա՝ մարդու կյանքն ա»:

Հատված Վալերի Միրզոյանի «Առածանին՝ վարքականոն» գրքից

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՐԱՀՈՍ

Փետրվարի 2-ին Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնի հուշապատում ամփոփվեց Պուլսի Սկյուտարի հայոց գերեզմանատնից արևմտահայ վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրյանի շիրմից բերված հողի հետ խառնված բանաստեղծի մասունքը (զանգի բեկորները). այն հուշապատի մեջ տեղադրեց Ազգային ժողովի նախագահը:



Բանաստեղծի մասունքի սափորի ամփոփումը ուղեկցվեց հոգեհանգստի արարողությամբ:

Մարտի 16-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան ազգային օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ Ազգային կինոյի «Հայակ» առաջին մրցանակաբաշխությունը: Առաջին «Հայակները» շնորհվեցին հետանկախության շրջանում ստեղծված հայկական լավագույն ֆիլմերին ու դրանց հեղինակներին:

Հայկական կինոյում ունեցած ավանդի համար «Հայակ» մրցանակ շնորհվեց Արտավազ Փելեշյանին, Սոս Սարգսյանին, Լևոն Աթոյանցին, Արման Մանարյանին և Ալբերտ Մկրտչյանին:

«Լավագույն դերյուտ» անվանակարգում «Հայակ»-ի արժանացավ Յովհաննես Գալստյանը («Խճճված զուգահեռներ»): Լավագույն անիմացիոն ֆիլմ ճանաչվեց Գայանե Մարտիրոսյանի «Տարաշխարհիկները», լավագույն վավերագրական ֆիլմ՝ Վարդան Յովհաննիսյանի «Պատմություններ պատերազմի և խաղաղության օրերից»-ը, լավագույն կարճամետրաժ ֆիլմ՝ Գագիկ Հարությունյանի «Յարխուշտա»-ն: «Լավագույն կոմպոզիտոր» անվանակարգում մրցանակը շնորհվեց Յուրի Հարությունյանին («Որտե՞ղ էիր, մարդ աստծո»), «Լավագույն նկարիչ»-ը՝ Վարդան Սեդրակյանին:

Լավագույն դերասան ճանաչվեց Միքայել Պողոսյանը, լավագույն դերասանուհի՝ Աննա Էլբակյանը: «Լավագույն սցենարիստ» անվանակարգում մրցանակը շնորհվեց «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» ֆիլմի սցենարի հեղինակներ Անուշ Աղաբաբովին և Ջորայր Խալափյանին: Լավագույն օպերատորն էր Վահագն Տեր-Հակոբյանը («Վավերագրողը»), լավագույն ռեժիսորը՝ Հարություն Խաչատրյանը («Սահման»):

Մրցատյանը «Լավագույն խաղարկային ֆիլմ» անվանակարգում «Հայակը» շնորհեց Վիգեն Չալոբանյանին («Չայն բարբառոյ»):



Virgin Group



**Բ Ր Ի Տ Ա Ն Ա Կ Ա Ն
Ք Ա Ղ Մ Ա Ք Ե Ն Պ**

Տասը տարվա ընթացքում Ռիչարդ Բրենսոնին հաջողվեց երաժշտական խանութից ստեղծել հսկայական բազմաճյուղ միավորում՝ սփռված աշխարհով ու մայրցամաքներով մեկ:

«Virgin Group»-ը ընկերությունների ոչ ֆորմալ հսկայական միավորում է, որի մասին ոչ ոք չի կարող ստույգ կերպով ասել, թե քանի ընկերություն է ներառում: Մի վարկածով դրանք 30-ն են, մյուսով՝ 120-ը, երրորդով՝ 240-ը, չի բացառվում, որ հասնի 400-ի: Ասում են՝ անգամ հիմնադիր Ռիչարդ Բրենսոնը չի կարող պատասխանել, թե քանի գործարար նախաձեռնություն է կյանք անել իր անհավանական բազմաբրենդի հովանու ներքո:

«Virgin Active»՝ մարզական-առողջարարական կենտրոնների ցանց, «Virgin America»՝ տեղական ավիաընկերություն ԱՄՆ-ում, «Virgin Atlantic Airways»՝ միջազգային ավիաընկերություն, «Virgin Baloon Flight»՝ օդապարիկներով թռիչքների օպերատոր, «Virgin Blue»՝ ավստրալիական ավիաընկերություն, «Virgin Books»՝ հրատարակչություն, «Virgin Comics»՝ կոմիքսների պատրաստում, «Virgin Flowers»՝ ծաղիկների մանրածախ վաճառք համացանցում, «Virgin Brides»՝ հագուստ նորապսակների համար, «Virgin Cosmetics»՝ արդուզարդի և շպարի պարագաներ՝ առցանց, «Virgin Digital»՝ առցանց երաժշտական խանութ, «Virgin Drinks»՝ «Virgin Cola» և «Virgin Vodka» խմիչքների արտադրություն. նկատեցի՞ք՝ մենք հասանք լատինական այբուբենի չորրորդ տառին, իսկ առջևում ամբողջ այբուբենն է: Համաձայնե՞՞ տպավորիչ է:

Ասում են՝ Ռիչարդ Բրենսոնը և նրա «Virgin» բրենդը ոչ այլ ինչ է, քան թագավորության պետական նախագիծ, որը հեղինակել են Մեծ Բրիտանիայի իշխանությունները՝ նպատակ ունենալով վերստեղծել երկրի տնտեսական կերպարը:

«Գիշտ կիրառելու դեպքում բրենդի հնարավորություններն անսահման են», -հարցազրույցներից մեկի ժամանակ ասել է Ռիչարդ Բրենսոնը՝ աշխարհահռչակ «Virgin» «կայսրության» հիմնադիրը, մարդ, որը վերջին երկու տասնամյակների ընթացքում հիմնովին փոխեց բրենդավորման կանոնները:

Բրենսոնի ամենամեծ նվաճումը կարելի է համարել աշխարհի առաջին և դեռևս միակ համապիտանի (ուճիվերսալ) բրենդի ստեղծումը: Շատերն են հավանաբար նկատել, որ բացառապես հաջողված բրենդերն են ժամանակի ընթացքում դառնում տվյալ արտադրատեսակի հոմանիշը: Օրինակ՝ «Coca-Cola»-ն, «Levi-Strauss»-ը: Հայաստանում այդպիսի օրինակ է «Ջերմուկը», որը դարձել է հասարակ անուն՝ հանքային ջուր նշանակությամբ: Սակայն ի տարբերություն աշխարհի բոլոր մյուս բրենդերի՝ միայն «Virgin»-ին հաջողվեց դառնալ միանգամից մի քանի անուն արտադրատեսակների հոմանիշ: Ոչ մի այլ բրենդը դեռևս չի ստեղծել ապրանքների ու ծառայությունների այդքան մեծ շրջանակ: «Virgin» անվան տակ վաճառվում է ամեն ինչ՝ սկսած պահպանակներից, նորապսակների համար հագուստից մինչև ֆինանսական ծառայություններ:

Այս բրենդի հաջողության գլխավոր գրավականն այն հսկայական վատահոլությունն էր, որ այն վայելում էր շուկայի իր զբաղեցրած հատվածում: «Virgin»-ի արդեն հայտնի ապրանքատեսակների որակը ճանապարհ էր հարթում նորերի համար, որոնք որակապես չէին զիջում նախորդներին: Ռիչարդ Բրենսոնը շատ լավ էր գիտակցում, որ ընկերության որևէ առնչությունը ցածրորակ արտադրանքի կամ հումքի հետ, կարող էր անուղղելի լինել իր ստեղծած անվան համար:

«Երբ մենք ընտրեցինք մեր ձայնագրման ընկերության անվանումը՝ «Virgin»՝ «Slipped Disc»-ի փոխարեն, մեր նտքով անգամ չէր անցնում, որ այն կարելի էր գործածել ապրանքների ու ծառայությունների այդքան մեծ շրջանակի համար», -ասում է Բրենսոնը և ավելացնում,- «Սակայն համաձայնեք, որ հետաքրքիր կլինեք համեմատել «Virgin» անվանման հաջողությունը «Slipped Disc»-ի հնարավոր հաջողության հետ, օրինակ, նույն պահպանակների պարագայում»:

Լինելով մարդ, որի ամբողջ կյանքն արկած է, որը սահմանել է աշխարհի նոր ռեկորդ՝ լողալով անցնելով Ատլանտյան օվկիանոսը, որը հրաշքով փրկվել է մահից, երբ օդապարիկով «ճամփորդում էր» երկրագնդի շուրջ՝ նա,

այնուամենայնիվ, համառորեն փորձում է ապացուցել, որ ինքն ընդամենը սովորական մարդ է, որը հասել է հաջողության, այն էլ, չգիտես ինչու՝ անսպասելիորեն:

«Երբ «Virgin Records»-ը դարձավ հաջողակ, մենք առաջնորդվում էինք մեր բնագոյներով,- բացատրում է Բրենսոնը: - Սկզբնական շրջանում մեզ մոտ ձայնագրվող երաժշտությունն ամբողջությամբ հիփի ոճի մեջ էր, և մեր տարբերանշանն էլ՝ մերկ կնոջ տեսքով, լավագույնս համապատասխանում էր այդ երաժշտությանը: Իսկ հետագայում, երբ առաջ եկավ փանկ ոճը, կարիք եղավ տարբերանշանը հարմարեցնել դրան: Նորը ստեղծելու համար մեծ ծախսեր անելու փոխարեն, ես բացատրեցի մեր դիզայներին՝ ինչ են ուզում, նա էլ ստեղծեց «Virgin»-ի ներկայում հայտնի տարբերանշանը»:

Շատ պարզ է հնչում, բայց այս բառերն իրենց խորքում թաքցնում են Բրենսոնի արտասովոր մտքի ուժը, որն ամեն անգամ փոփոխում էր իր բիզնեսը, որպեսզի այն լավագույնս համապատասխանեցնի ժամանակի թելադրանքին: Այսօր Բրենսոնը «Virgin» կայսրության շարժիչ ուժն է: Մի կայսրություն, որը բաղկացած է 200 ֆիրմայից, որոնցում ամբողջ աշխարհում աշխատում է ավելի քան 25000 մարդ: Մի կայսրություն, որի առևտրային գործունեության շրջանակը տարածվում է առևտրի, հյուրանոցների, համընդհանուր օգտագործման ապրանքների, համակարգչային խաղերի, երաժշտության և ավիափոխադրումների վրա: Նույնիսկ կարող եք «Virgin»-ից գնել կենսաթոշակային կամ ներդրումային ծրագիր:

Սկզբում որպես թիրախ ընտրելով երիտասարդությանը՝ «Virgin»-ը աստիճանաբար մեծանում էր Բրենսոնի հետ, որն այսպես է բնութագրում իր բրենդի զարգացման շարժընթացը. «Չորս տարի հետո մեզ սկսեցին հետաքրքրել այդ երիտասարդների ծնողները, և մենք անցանք կենսաթոշակներին և ապահովագրությանը: Միակ բանը, որ մեզ չհաջողվեց, թաղման բյուրոների բացումն էր: Դա էլ այն պատճառով, որ չէինք ուզում կորցնել մեզ անվերապահորեն նվիրված երեխաների վստահությունը: Ինձ դուր են գալիս մարդիկ, որոնք համոզված են, որ «Virgin»-ը կարող է հոգալ իրենց բոլոր կենսական պահանջները: Ելնելով սրանից՝ մեզ համար ամենակարևորը նրանց ոչ մի դեպքում չհիասթափեցնելն է»:

1990-ականների կեսերին «Virgin»-ն ամենուր էր: Չկար մեկ օր, որ ժպտացող Բրենսոնը չներկայացներ հանրությանը մի նոր ապրանք կամ ծառայություն: Այս ընկերության տարբերանշանը ամենուր էր՝ ինքնաթիռների, հանրախանութների, կինոթատրոնների վրա և պատրաստվում էր հայտնվել «Coca-Cola»-ի շշին:

Շատերին սկսեց մտահոգել այն հարցը, թե մինչև երբ է Բրենսոնին ուղեկցելու հաջողությունը, և որն է, ի վերջո, «Virgin»-ի ունիվերսալության սահմանը: Իսկ նրանք, ովքեր պատկերացում ունեին մարքեթինգից, խոստովանում էին, որ Բրենսոնին հաջողվել է ստեղծել բրենդավորման բացարձակապես նոր ուղղություն: Այսպես օրինակ՝ Ջոն Մերֆին, որն այդ ժամանակ բրենդավորման ամենախոշոր խորհրդա-

տվական «Interbrand» ընկերության նախագահն էր, մի անգամ ասել է. «Մինչև նրանք ինչ-որ մեկին չթունավորեն կամ չսկսեն օգտագործել իրենց բրենդը սխալ ուղղություններով, օրինակ, կենսաթոշակային ֆոնդերի կամ պատճենահանման մեքենաների համար, դժվար թե «Virgin»-ը կորցնի իր հզորությունը»:

Մերֆին այդ ժամանակ նույնիսկ չէր էլ ենթադրում, որ 1996 թվականին «Virgin Direct»-ը կսկսեր ֆինանսական ծառայություններ մատուցել՝ ներառյալ հենց այդ նույն կենսաթոշակների վճարումը:

Բրենսոնը համոզված է, որ իր ստեղծած բրենդի գլխավոր արժանիքը բարի համբավն է, և եթե երբևէ «Virgin» անունը հայտնվի որևէ անորակ ապրանքի վրա, բրենդի հեղինակությանը կհասցվի հսկայական վնաս: «Մեր հաճախորդները մեզ վստահում են», - պարզապես ասում է նա: Բրենսոնի գործարար փիլիսոփայության գլխավոր դրույթը հնչում է այսպես. «Չոգացե՛ք ձեր բրենդի մասին, և այն երկար կապրի»:

«Virgin» ընկերության հեղինակությունն ամբողջովին կառուցված է հինգ գործոնների վրա՝ հարգանք դեպի փողը, որակ, վստահելիություն, ձգտում դեպի նորամուծությունները և ևս մեկը, ինչքան էլ զարմանալի թվա, հունորի զգացում: Ընկերությունն իր հերթին հայտարարում է, որ իր յուրաքանչյուր նոր ապրանք կամ ծառայություն պետք է ունենա հետևյալ հատկությունները (կամ հեռանկարում դրանք ձեռք բերելու հնարավորություն)՝ գերազանց որակ, նորամուծություն, շահավետություն, արդեն գոյություն ունեցող այլընտրանքներին մարտահրավեր նետելու կարողություն, հունորի զգացում և համարձակություն:

Հայտնի է նաև, որ «Virgin»-ի կողմից քննարկվող տասը նախագծերից ինը սովորաբար շահավետ է լինում, բայց եթե դրանք չեն համապատասխանում այս պահանջներից առնվազն չորսին, ապա մերժվում են: Ընկերության գոյության ընթացքում Բրենսոնին հաջողվել է ևս մեկ կարևոր բան. հաճախորդները վստահում են ընկերությանը՝ ի դեմս իր նախագահի: Այսինքն՝ Բրենսոնը դարձել է ընկերության «քայլող տարբերանշանը»: Ամեն անգամ, երբ նրա նկարները հայտնվում են ամսագրերի էջերում, դա նպաստում է «Virgin» բրենդի առաջխաղացմանը: Սա մանրակրկիտ մտածված և հաջողված քաղաքականություն է, որ կարելի էր մշակել որևէ բրենդի կայուն հաջողությունն ապահովելու համար: Իհարկե, այս դեպքում էլ չափազանց մեծ է հավանականությունը, որ Բրենսոնի յուրաքանչյուր սխալ արարք իր բացասական ազդեցությունը կունենա բրենդի վրա: Սակայն մինչ օրս այդպիսի դեպք չի գրանցվել, և Բրենսոնը, շնորհիվ իր ընտրած ճիշտ քաղաքականության, ստիպված չի եղել զոլվազդի վրա միլիոններ ծախսել: Երբ նա փորձում էր օդապարհիկով ճամփորդել երկրագնդով մեկ (ինչը, իմիջիայլոց, նրան չհաջողվեց), բոլոր ամսագրերում, հեռուստատեսային հաղորդումներում խոսվում էր դրա մասին: Այլ հավասար պայմաններում ընկերությունը ստիպված կլիներ ծախսել միլիարդավոր դոլարներ այդպիսի զոլվազդ պատրաստելու համար: Իսկ երբ ստեղծվեց «Virgin

Atlantic Airways»-ը, Բրենսոնը նոր հնարք կիրառեց: Խոշոր ավիաընկերություններն ամեն տարի ծախսում են միլիոնավոր դոլարներ գովազդի վրա: Բրենսոնը անմիջապես ըմբռնեց, որ միայն ընկերության անվճար գովազդը թերթերում հնարավորություն կտա գոյատևել այդպիսի սուր մրցակցության պայմաններում: Եվ հենց այդ ժամանակ նա որոշեց մասնակցել «Blue Riband» չափազանց ռիսկային նախագծին՝ փորձելով սահմանել Ատլանտյան օվկիանոսն անցնելու նոր ռեկորդ:

«Virgin» ընկերությունը ոչ այլ ինչ է, քան Բրենսոնի էության արտահայտությունը: Գործարարությունից դուրս նրա ծայրահեղ համարձակությունը կարող է համեմատվել միայն գործարարության մեջ նրա համարձակության հետ: Նա կրկին և կրկին օգտագործում է «Virgin» բրենդը շուկայի ագրեսիվ մրցակիցների հետ մշտական պայքարում, նա դեմ է դուրս գալիս պահպանողականությանը յուրաքանչյուր բնագավառում՝ սկզբում ձայնագրման, հետո ավիափոխադրումների, իսկ վերջերս էլ՝ ոչ ակոհոլային խմիչքների և ֆինանսական ծառայությունների: Այս ռիսկային առևտրային արկածները մի քանի անգամ հասցրել են ընկերությանը սննկացման շեմին, բայց, այնուամենայնիվ, ամեն անգամ պսակվել են հաջողությամբ:

Ջարգացման, նորացման հաջողական շղթայում երբեմն թվում է, որ ամեն օր «Virgin»-ի նորանոր ֆիրմաներ են բացվում: 1999 թ. ստեղծվել է «Virgin Mobile»-ը (բջջային հեռախոսների վաճառքի և կապի ծառայություններ): «Կայսրության» անդամ են նաև «Virgin Active»-ը (սպորտային ապրանքներ), «Virgin Cars»-ը (ինտերնետի միջոցով ավտոմեքենաների առքուվաճառքի առաջատար ընկերություն), նաև virgin.com կայքը, որի միջոցով կարելի է ձեռք բերել «Virgin» ընկերության բազմաթիվ ապրանքներ և «Virgin Trains»-ը (երկաթուղային փոխադրումներ):

«Virgin» բրենդի հզորությունը վերջերս ևս մեկ անգամ հավաստվեց: Ուսումնասիրությունների ընթացքում պարզվեց, որ, օրինակ, Մեծ Բրիտանիայի բնակչության ավելի քան 96%-ը գիտի, որ ընկերության հիմնադիրն է Ռիչարդ Բրենսոնը: ««Virgin»-ը,- ասում է ուսումնասիրության մեկնաբաններից մեկը,- Մեծ Բրիտանիայի գործարար աշխարհի ֆենոմեններից է: Սկսած ֆինանսական ծառայություններից, ավիա- և երկաթուղային փոխադրումներից մինչև հանրախանութներ, համակարգչային խաղեր, ոչ ակոհոլային խմիչքներ և հագուստ, այն անմիջապես ճանաչվում և ընդունվում է հաճախորդի կողմից՝ տպավորվելով նրա ենթագիտակցության մեջ որպես լավ որակի, ցածր գնի և նորամուծության մարմնավորում:

Բրենսոնը պատրաստվում է շարունակել իր գործունեությունը նույն ոգով և միաժամանակ նշում է, որ «Virgin»-ի օրինակը, ինչքան էլ այն փայլուն է ու գրավիչ, կիրառելի չէ որևէ այլ բրենդի կամ ֆիրմայի համար. այն հիմնված է մի բանի վրա, որն ինքը Բրենսոնը անվանում է «Ջեդիոնականության և վստահության բրենդավորում»:

**ԱՍՏՂԻԿ ԱՐՐԱՄԱՅՆԱՆ
ՉՊՏՅ ասպիրանտ**





ԼԵԶՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՄՊԻՐԱՆՏՆԵՐԻՆ

Վերսկսելով լեզվախորհրդատվությունը՝ հակիրճ հիշեցնեմ նպատակը: Անցած ուսումնական տարում մեր բուհի ասպիրանտների և հայցորդների համար նոր առարկա սկսեցի դասավանդել՝ «Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում»: Նախորդ հրապարակումներում* արդեն քննարկվել են գիտական ոճի առանձնահատկությունները, ասելիքի մատուցման խնդիրները, գիտական հրապարակման կառուցվածքը, առանձնացվել են տնտեսագիտական խոսույթին (դիսկուրս) բնորոշ, ինչպես նաև համագործածական բնույթի առավել տարածված սխալները: Խորհուրդ կտայի ընթերցողին ծանոթանալ այդ նյութին (մանավանդ՝ ստորև շարադրանքում համարակալումը շարունակում ենք հարմարության նկատառումներով): Եվս մի նկատառում. մեկ կամ երկու հրապարակմամբ լեզվասխալները չեն վերանում, ուստի հարկ է լինում դրանց պարբերաբար անդրադառնալ: Նույնը վերաբերում է «Առտնին հայերենը» բաժնին. դրանում հիշեցվող գրեթե բոլոր բառերը քաջ հայտնի են ամեն մի կիրթ լեզվակրի՝ ուսանող լինի, թե դասախոս: Բայց դարձյալ ու վերստին պիտի հիշեցնենք, որ «Հայերենը վտանգված է», վտանգված՝ մեր սեփական անփութության, անպատասխանատվության, իսկն ասենք՝ սեփական լեզուն լոկ ձևական-ցուցամուլական ձևերով սիրելու պատճառով:

Իսկ սույն հոդվածաշարի հիմնական հասցեատիրոջը կուզեի մեկ էլ հիշեցնել մեծ լեզվաբան Գևորգ Ջահուկյանի հորդորը, թե գրողը պետք է օգնի ընթերցողին: Արդ, ջանանք գրել պարզ ու հասկանալի, առանց անհարկի օտարաբանության, հնարավորինս բացառենք խրթնաբանությունը, առավելագույնս հասկանալի լինենք մեր ընթերցողին և ... հաճելի:

* Հոդվածաշարի սկիզբը՝ «Տնտեսագետ», 2011 թ., հ. 1, 2, 3, 4: Ինչպես նախորդ հրապարակումներում, այստեղ նույնպես մեքերվող աղբյուրների ստույգ անվանումները խմբագրությունում կան, սակայն չեն հրապարակվում: Հիշեցնում ենք, որ այս կամ այն սխալը քննարկելիս մեր ընդհանուր նպատակը միայն ու միայն սխալն այլևս չկրկնելն է, բոլորիս լեզվիմացությունը կատարելագործելը:

Է. ՈՃԱԿԱՆ ԱՆՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ

Է.15 «Անորոշության հասկացությունը և դրա դերը տնտեսության մեջ ընդգծվում են շատ գիտնականների կողմից»:

Է.16 «Նորանուծական քաղաքականության ազգային ուղենիշները արտահայտվում են տարբեր երկրների կողմից օգտագործվող առանձին մոդելներում»:

Է.17 «Ուստի այն համընդհանուր խնդիրը, որը դրվում է մակրոէկոնոմիկայի կողմից երկրի տնտեսության զարգացման համար, տարրալուծվում և առանձին գիտությունների կողմից օգտագործվում է տնտեսության տարբեր բնագավառներում»:

Է.18 «Եվրոմիության ֆինանսական քաղաքականության նպատակն է ապահովել նախատեսվող ծրագրերի իրականացումը ոչ թե իր բյուջեի, այլ տարբեր ֆինանսական կառույցների կողմից տրամադրվող վարկերի հաշվին»:

Է.19 «Տնտեսական աճի քանակական բնութագրության համար Սոլոուի կողմից, ըստ էության, մշակվել են երկու մոդելներ»:

Է.20 «Դա միանգամայն տրամաբանական է, քանի որ պետության կողմից ցանկացած բնույթի ծախսի կատարման գլխավոր պայմանը համապատասխան ծավալով եկամտի առկայությունն է»:

Է.21 «Նախ նշենք, որ ցանկացած երկրի տնտեսության բնականոն զարգացման համակարգում իր կարևոր դերն ու նշանակությունն ունի պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությունը»:

Է.22 «Իսկ եթե այս կամ այն երկրում պետության կողմից միջամտությունն անհրաժեշտ է, ապա դա կատարվում է միայն հստակ սահմանված օրենսդրական դաշտի շրջանակներում»:

«Կողմից» բառաձևի խոտելի գործածության մասին հանգամանորեն խոսել ենք (տե՛ս Է.1-ից Է.5 օրինակները), բայց, ինչպես ասվեց առաջաբանում, հարկադրված ենք անդրադառնալու:

Ամենից առաջ՝ «կողմից»-ի առատությունն այլափոխում է գիտական ոճը, նմանեցնում գրասենյակային ոճին: Գիտական խոսույթում սկսում են անհարկի ավելանալ կրավորաբար գործածված բայերը, ինչից հեղինակի մտքի շարժունությունն է տուժում: Ավելին, թեպետ այս սխալը համարում ենք ոճական բնույթի, սակայն բացառված չեն նաև տրամաբանական թյուրըմբռումները:

Համեմատենք երկու արտահայտություն. «Նախարարը պատվոգրեր հանձնեց վաստակաշատ դասախոսներին» և «Նախարարի կողմից վաստակաշատ դասախոսներին պատվոգրեր հանձնվեցին»: Թվում է՝ նույն բանն է ասվում: Մինչդեռ, եթե առաջին դեպքում հասկանում ենք, որ նախարարն անձամբ է պատվոգիր հանձնել, ապա երկրորդ դեպքում հնարավոր է

հասկանալ նաև այնպես, թե ինչ-որ մեկն է նախարարի անունից դա կատարել: Եվ հաճախ բառագործածության այս տարբերակումն արդարացված է, եթե ստույգ արտահայտում է խոսողի մտադրությունը (ինտենցիան), այն է՝ նախարարը հանձնարարել է, լիազորել իր անունից, իր կողմից հանդես գալու:

Տվյալ բառաձևը միանգամայն տեղին է նաև, երբ փորձում ենք արտահայտել դիտակետ, ելակետ, դիրքորոշում, հատկապես երբ արտահայտում ենք տարակուսանք, մտորումներ, գնահատում. դիցուք, «մի կողմից՝ այս նորամուծությունը շահավետ է, մյուս կողմից՝ կազմակերպական բնույթի բարդություններ է հարուցելու»:

Մինչդեռ գիտական հրապարակումներից վերոբերյալ մեջբերումներում քննարկվող բառաձևը անտեղի է գործածվել, առաջացրել ոճական անհարթություն, ուստի և, արված բացատրությունների լույսով, փորձենք շտկել դրանք:

(Է.15) «Անորոշության հասկացությունը և դրա դերը տնտեսության մեջ ընդգծում են շատ գիտնականներ»:

Կարելի է մի փոքր էլ հղկել. «Շատ գիտնականներ են կարևորում անորոշության ըմբռնումը, դրա դերը տնտեսության մեջ»:

(Է.16) «Նորամուծական քաղաքականության ազգային ուղենիշները արտահայտվում են տարբեր երկրների օգտագործած առանձին մոդելներում»:

Տվյալ մտքի արտահայտման լիարժեքությունը բնավ չի տուժի, եթե խուսափենք «տարբեր» և «առանձին» ածականների իմաստային անհարկի կրկնությունից՝

«Նորամուծական քաղաքականության ազգային ուղենիշները արտահայտվում են տարբեր երկրների օգտագործած մոդելներում»:

(Է.17) «Ուստի այն համընդհանուր խնդիրը, որ մակրոէկոնոմիկան դնում է (գերադասելի կլիներ՝ առաջադրում է, ձևակերպում է, հիմնավորում է) երկրի տնտեսության զարգացման համար, տարալուծվում է որպես առանձին գիտությունների խնդիրներ տնտեսության տարբեր բնագավառներում»:

(Է.18) «Եվրոմիության ֆինանսական քաղաքականության նպատակն է ապահովել նախատեսվող ծրագրերի իրականացումը ոչ թե իր բյուջեի, այլ տարբեր ֆինանսական կառույցների տրամադրած վարկերի միջոցով (կամ շնորհիվ)»:

(Է.19) «Տնտեսական աճի քանակական բնութագրության համար Սոլոուն, ըստ էության, մշակել է երկու մոդել»:

(Է.20) «Դա միանգամայն տրամաբանական է, քանի որ պետության ամեն բնույթի ծախսի գլխավոր պայմանը համապատասխան ծավալով եկամտի ակնկալիքն է»:

(Է.21) «Նախ մշենք, որ ամեն մի երկրի տնտեսության բնականոն զարգացման համակարգում իր

կարևոր դերն ու նշանակությունն ունի պետության տնտեսական քաղաքականությունը»:

(Է.22) «Իսկ եթե այս կամ այն երկրում պետության միջամտությունն անհրաժեշտ է, ապա դա կատարվում է միայն հստակ սահմանված օրենսդրական դաշտի շրջանակներում»:

Օրինակների առատությունը (քանակը կարելի էր կրկնապատկել) մի նպատակ ունի՝ ցույց տալ ընթերցողին, որ «կողմից» բառաձևի արտաքսումը ոչ միայն չի վնասում հեղինակների մտքի ձևակերպմանը, այլև առավել հասկանալի է դարձնում:

Է.23 «Երաշխավորությունների առավելագույն ժամկետը կազմում է երեք տարի... Գումարային արտահայտությամբ երաշխավորության առավելագույն ծավալը կազմում է 10 միլիոն դրամ»:

«Կազմել» բայը, «կազմում» գոյականը հայերեն բառեր են, բայց ոչ մեր բերված օրինակում: Թեպետ «կազմելը» նշում է հավաքականություն (ընտանիք կազմել, գիրք կազմել), բայց ինքնին ժամկետը չի կարող կազմել, ծավալը չի կարող կազմել: Սա տակավին չհաղթահարված օտարաբանության դրսևորում է՝ հեղինակի մտքինը ռուսերեն «составляет» բառն է, ինչն էլ հանգեցրել է ոճական անհարթության:

Շտկենք. «Երաշխավորությունների առավելագույն ժամկետը երեք տարի է... Գումարային արտահայտությամբ՝ երաշխավորության առավելագույն ծավալը 10 միլիոն դրամ է»:

Է.24 «Վերարտադրական կենսապարբերաշրջանի բոլոր փուլերում կազմակերպության սուբյեկտիվ ռիսկի հիմքն են կազմում նրա աշխատողների գործողությունները, որոնց արդյունքում ձևավորվում են տվյալ տնտեսավարող սուբյեկտի որոշակի արտադրատեսիսիկական և ֆինանսատնտեսական բնութագրումները»:

Եթե կարդանք այս մեջբերումը առանց «կազմում» բառի, ապա ակնհայտ կդառնա, որ ասույթի միտքը չի տուժում, իսկ շարադրանքը շահում է:

Է.25 «Սրա էությունը կայանում է նրանում, որ հնարավորություն է տալիս պարզել, թե տվյալ ներդրումային նախագիծը իր արդյունավետությամբ նույն չափի կապիտալ ծախսումների փոխառության ինչպիսի պայմանների է հավասար»:

Այստեղ նույնպես ռուսաբանություն ենք արձանագրում՝ «сущность заключается в том, что...»: Ուստի կարող ենք նախադասության սկիզբը ուղղել. «Սրա էությունն այն է, որ ...»:

Է.26 «Խոսքը գնում է այն բանի մասին, որ իրատեսորեն գնահատվի ինչպես աշխատանքային, այնպես էլ նյութական ռեսուրսների ծախսի աստիճանական նվազումը ձեռնարկության ապագա փոփոխում և հաստատում ծախսերի կազմում»:

Է.27 «Անընդհատ խոսք է գնում մանր և միջին բիզնեսի, մեքենաշինության, թեթև արդյունաբերության աջակցման, ՀՀ տնտեսության բազային

ճյուղերի կայացման ու զարգացման մասին»:

Այս սխալի մասին շատ է գրվել, բայց, ինչպես տեսնում ենք, գիտական գրվածքում էլ է դեռ հանդիպում: Դարձյալ ռուսաբան խոսքի երկարատև ազդեցության հետքն է. «речь идет о том, что...» արտահայտությունը ռուսերենին միանգամայն հարազատ կաղապար է: Հայերեն պիտի շտկենք՝

«Խոսքն այն մասին է, որ...» և «Անընդհատ խոսք է լինում...»:

Է.28 «Հարկերից խուսափելու տնտեսական պատճառ է հանդիսանում եկամուտը, որը հարկատուին ստանում է շրջանցելով սահմանված հարկերի վճարումը»:

Է.29 «Այսպիսով, շուկայական տնտեսությանը անցնող երկրի համար կարևոր խնդիր է հանդիսանում կարգավորման տնտեսական մեթոդների ամբողջական համակարգի ստեղծումը»:

Ռուսների լեզվամտածողությանը հարազատ

«экономической причиной является...», «важной задачей является...» և նման կառույցները կուրորեն տեղափոխելիս հայերեն խոսքաշար՝ պարզապես այլանդակում ենք մեր խոսքը: Կարդացեք բերված օրինակներն առանց այդ պատճենված «հանդիսանում» մոլախոտի և դյուրին կհամոզվեք:

Է.30 «Խոսքը վերաբերվում է հատկապես օրենսդիր մարմնում տնտեսական, արտադրական և առևտրի (արտահանման և ներմուծման) հարկային քաղաքականության մշակմանը»:

Ծիշտն է «Խոսքը վերաբերում է...» ձևը: «Վերաբերել» բառը տվյալ խոսքաշարում չի արտահայտում վերաբերմունք կամ վարմունք, այսինքն՝ չի բնորոշում որևէ մեկի անձնային դիրքորոշումը առարկաների, երևույթների, անձանց հանդեպ: Օրինակ, կասեինք, թե «Մենք հարգանքով ենք վերաբերվում օրենսդիր մարմնի աշխատանքին» և այլն:

Ը. ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՍԽԱԼ

Ը.10 «Հետագայում մեծ տարածում ստացավ արդյունաբերությանը առանձին ձևերով սելեկտիվ աջակցումը, որի նպատակը պետության գերակայության պահպանությունն էր... Այնինչ, իրականում պետք է առանձնացվեն այն ոլորտների օբյեկտները, որոնք պետական սելեկտիվ աջակցություն են պահանջում»:

Այս «սելեկտիվ» օտար բառը բացարձակապես տեղում չէ, չի արտահայտում հեղինակի մտադրությունը: «Սելեկտիվը» «ընտրողական», «ընտրովի» բառն է, լատիներեն «selectio»՝ «ընտրություն», «առանձնացում» իմաստով: Մինչդեռ հեղինակը միանգամայն արդարացի շեշտում է պետության արդյունաբերության քաղաքականության մեջ տարբերակված մոտեցման անհրաժեշտությունը, ըստ այդմ՝ որոշ ճյուղերի և նաև որոշ օբյեկտների առանձնահատուկ ուշադրություն հատկացնելու կարևորությունը:

Առաջարկենք մեր տարբերակը. «Հետագայում մեծ տարածում ստացավ արդյունաբերությանն առանձին ձևերով ընտրողական աջակցումը (կամ՝ ընտրողաբար աջակցելը), որի նպատակը պետության գերակայության պահպանությունն էր... Այնինչ, իրականում պետք է առանձնացվեն այն ոլորտների օբյեկտները, որոնք պետական հատուկ աջակցություն են պահանջում» (գերադասելի է՝ պահանջում են պետության հատուկ աջակցությունը):

Թ. ԼԵԶՎԱՏՐԱՄԱԲՆԱԿԱՆ ՍԽԱԼ

Թ.6 «Հեռանկարում մեծ սպասելիքներ են ակնկալվում գորգագործության (հատկապես՝ ձեռագործ) զարգացման ծրագրից...»:

Կրկնաբանության (տավտոլոգիա) սխալ է կատարված. ակնհայտորեն առանց ոճական հնարքի նպատակադրման (ինչը կարող էր արդարացնել նույնիմաստ բառերի միտումնավոր կուտակումը)՝ գործածվել է երեք բառ, որոնք կրկնում են միմյանց իմաստը: Կարելի էր պարզապես՝ «Մեծ են սպասելիքները գորգագործության...»:

Թ.7 «Այս փուլում կառավարությունը հանգամանորեն քննարկում է ծրագրի նախագիծը, կատարում իրական տնտեսական իրավիճակից բխող անհրաժեշտ փոփոխություններ»:

Եթե այդքան անհրաժեշտ էր արտահայտել կառավարության իրատեսական գործելակերպը, կարելի էր ձևակերպել հետևյալ կերպ.

«Այս փուլում կառավարությունը հանգամանորեն քննարկում է ծրագրի նախագիծը, կատարում տնտեսության իրական վիճակից բխող անհրաժեշտ փոփոխություններ»:

Թ.8 «Հայաստանում ներկայումս ձեռներեցության ներգրավման շրջանակը կազմում է տնտեսության իրական հատվածի շուրջ 5/6-րդը»:

Կոտորակային 5/6 թիվը գրում և կարդում ենք համապատասխանաբար «հինգ-վեցերորդ»: Մինչդեռ բերված օրինակի գրառմամբ՝ պիտի կարդացվի «հինգ-վեցերորդը»:

Ուստի պետք է շտկել. «...5/6-ը»:

Թ.9 «Ռիսկի նվազեցման եղանակներից է ինքնաապահովագրման մեթոդը, ըստ որի կազմավորվում են պահուստային ֆինանսական միջոցներ, որոնց հաշվին փոխհատուցվում են չնախատեսված ծախսերը և պատճառված վնասները»:

Թ.10 «Այստեղ հարկ է նշել, որ գիտության և կրթության ոլորտի ֆինանսավորումը իրականացվում է ոչ միայն բյուջետային միջոցների հաշվին»:

Թ.11 «Տնտեսության բարձր տեխնոլոգիական բնագավառներում ազգային ընկերությունների առաջատար դիրքերը հնարավորություն են տալիս ակտիվորեն նպաստել երկրի արտաքին առևտրային հաշվեկշռի բարելավմանը՝ ի հաշիվ այլ երկրներ գիտատար արտադրանքի արտահանման»:

Թ.12 «Ի հաշիվ հարկերի են ձևավորվում ֆինանսական այն անհրաժեշտ միջոցները, առանց որի ոչ մի պետություն չի կարող իրականացնել իր գործառույթները»:

Թեպետ անդրադարձել ենք այս «հաշվին»-ի գործածությունը, բայց չենք զլանում վերստին պարզաբանել: Այս անգամ էլ ռուսերեն «за счет» բառակապակցությունն է ազդել հայերիս լեզվամտածողության վրա:

Առաջարկում ենք մեր տարբերակները՝

(Թ.9) «Ռիսկի նվազեցման եղանակներից է ինքնաապահովագրման մեթոդը, ըստ որի կազմավորվում են պահուստային ֆինանսական միջոցներ, որոնցով (կամ՝ որոնց շնորհիվ) փոխհատուցվում են չնախատեսված ծախսերը և պատճառված վնասները»:

(Թ.10) «Այստեղ հարկ է նշել, որ գիտության և կրթության ոլորտի ֆինանսավորումը իրականացվում է ոչ միայն բյուջետային միջոցներից»:

(Թ.11) «Տնտեսության բարձր տեխնոլոգիական բնագավառներում ազգային ընկերությունների առաջատար դիրքերը հնարավորություն են տալիս ակտիվորեն նպաստել երկրի արտաքին առևտրային հաշվեկշռի բարելավմանը՝ շնորհիվ այլ երկրներ գիտատար արտադրանքի արտահանման»:

(Թ.12) «Հարկերից (կամ՝ հարկերի շնորհիվ) են ձևավորվում ֆինանսական այն անհրաժեշտ միջոցները, առանց որի ոչ մի պետություն չի կարող իրականացնել իր գործառույթները»:

ԱՌՏԵՒՆ ՀԱՅԵՐԵՆԸ - 28

Մենք գիտենք, որ Դուք գիտեք, բայց...

Անոնս – ազդ
 [այսինքը] – [այսինքըն]
 գազիֆիկացում – գազաֆիկացում
 դեգեներացիա – այլասերում
 դեսկրիպտիվ – նկարագրական
 Եվրոմիություն – Եվրամիություն
 զածերժկա – ուշացում, հապաղում
 էնոցիա – հույզ
 էնոցիոնալ – հուզական, հուզախոյվ, հուզալից,
 հուզահակ, հուզառատ
 լանցետ – նշտար
 լգոտա – արտոնություն
 կոմպոնենտ – բաղադրիչ
 կոռեկտ – պատշաճ, ստույգ
 կրեատիվ – ստեղծագործական, ստեղծարար
 կրօքկալ – կրծկալ
 մախինացիա – մեքենայություն, նենգություն,
 խարդախություն, խաբեություն

մոդեռնացում – արդիականացում
 յանիմ – իբր
 շոկ – խուճապ
 շոկի մեջ ընկնել – խուճապահար լինել,
 խուճապի մատնվել
 պերիլա – բազրիք, ճաղաշար
 պրինտեր – տպիչ
 ռետրոգրադ – հետադեմ
 ստրատեգիա – ռազմավարություն
 [տասերկու], [տասյերկու] – [տասներկու]
 տենդենց, տրենդ – միտում
 տենդենցիոզ – միտումնավոր,
 կողմնակալ, աչառու
 ցիտատ – մեջբերում
 ցիտել – մեջբերել
 [ֆակուլտետ] – [ֆակուլտետ]

ՎԱԼԵՐԻ ՄԻՐՉՈՅԱՆ ©



ՍՏԵՂԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅԻ ՁԵՎՎՎՈՐՄԱՆ ՁԱՏԱԳՈՎՆԵՐԸ

ՀՊՏՀ մակրոտնտեսական կարգավորում և կանխատեսում մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողները, դոցենտ Ծովինար Կարապետյանի ղեկավարությամբ, ձևավորելով «3Ն» գիտահետազոտական խումբը և առաջնորդվելով «Մենք կարող ենք ավելին» կարգախոսով՝ իրականացրել են գիտահետազոտական ուսումնասիրություն՝ «Ստեղծարար միջավայրի ձևավորման մեխանիզմները Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում» թեմայով: Խմբային աշխատանքը հրապարակայնորեն ներկայացվել է ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի դատին, արժանացել է հավանության ու բարձր գնահատականի: Աշխատանքի հեղինակներին դրվատանքի ու գովեստի խոսքեր է հղել անձամբ ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը: «Տնտեսագետը» զրուցել է խմբային աշխատանքի երիտասարդ հետազոտողներից երկուսի՝ Էդուարդ Հակոբյանի և Սաշա Քարամյանի հետ: Ներկայացվող հարցազրույցում փորձել ենք վեր հանել աշխատանքում տեղ գտած կարևոր հայեցակարգային մոտեցումները, առաջարկությունները:

- Ձեր առաջին լուրջ հետազոտական աշխատանքն արժանացավ բարձր գնահատականի, որի առիթով շնորհավորում ենք և մաղթում հետագա հաջողություններ: Ինչո՞վ էր պայմանավորված թեմայի ընտրությունը:

Սաշա Քարամյան - Պետք է ընդունենք, որ ցանկացած երկրի շարժիչ ուժը, հաջողությունների հասնելու բանալին նրա տեխնիկական և տեխնոլոգիական զարգացման աստիճանն է, ժամանակի մարտահրավերներին դիմակայելն ու դրանք ընդունելը: Վստահ ենք, որ այս ամենն ապահովելու և զարգացնելու համար պետք են նորարար ու ստեղծարար գաղափարներ, անձնական ու մասնագիտական փորձ, բարեփոխելու ու բարեփոխվելու հզոր կամք ու աշխատասիրություն ունեցող մասնագետներ: Այս թեման ընտրեցինք՝ հիմնավորելու համար, թե որքան կարևոր է ստեղծարարության ու նորամուծության դերը երկրի տնտեսության զարգացման գործում և պարզելու՝ կրթական մեր համակարգը արդյո՞ք թողարկում է այնպիսի մասնագետներ, որոնք կկարողանան առաջադեմ գաղափարներով նպաստել մեր երկրի զարգացմանը:

- Աշխատանքային խմբի անվանումը «3Ն» է: Կբացե՞ք չակերտները:

Էդուարդ Հակոբյան - Գաղտնիք չէ, որ դիմամիկ աշխարհում ամեն վայրկյան նորի, նորության, նորարարության կարիք է զգացվում: Լինելով ջատագովը այս երեք հասկացությունների՝ մեր խումբը անվանեցինք «3 Ն» և ընտրեցինք «Մենք կարող ենք ավելին» կարգախոսը:

- Խմբային գիտահետազոտական աշխատանքը բարդ գործընթաց է: Ինչպե՞ս էիք հաջողում միասնական լուծումների ու եզրահանգումների հասնել:

Էդուարդ Հակոբյան - Մեր խումբը հավաքվեց

և քննարկեց, թե որ ուղղություններով ենք իրականացնելու հետազոտությունը: Կատարվեց աշխատանքի բաժանում, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում ստեղծեցինք «Նորամուծությունների բլոգ», որն ավելի լայն հնարավորություններ ընձեռեց քննարկումներ անցկացնելու համար: Մեզ հետ, մեր կողքին էր մեր ղեկավարը՝ դոցենտ Ծովինար Կարապետյանը, ում անգնահատելի աջակցությունը ոգևորում էր. գաղափարը և այն իրագործելու մղումը մեզ դարձրին համախմբված: Ուստի այնքան էլ դժվար չէր միասնական լուծումներ ու եզրահանգումներ կատարելը: Բոլորս էլ փորձում էինք ապացուցել, որ ստեղծարարությունն ու նորամուծությունը 21-րդ դարի հրամայականներն են և շատ անհրաժեշտ՝ կրթական համակարգում:

Աշխատում էինք ինքնամոռաց մվիրունով, պատասխանատվության մեծ զգացումով: Մեզ պահակն էր խնդրում, որ հեռանանք համալսարանից, քանի որ աշխատելիս չէինք զգում ժամանակի ընթացքը և մնում էինք մինչև մարում էին վերջին լույսերը ու փակվում դռները... Մի քանի ամիս շարունակ մեր գիտահետազոտական թիմն առաջինն էր մտնում համալսարան և վերջինը դուրս գալիս:

- Ի՞նչ խնդիր էր դրված ձեր առջև և լուծման ի՞նչ ուղիներ ընտրեցիք:

Սաշա Քարամյան - Եթե կարճ ասենք՝ մեր խնդիրն էր բնութագրել ստեղծարարություն, նորարարություն, նորամուծություն հասկացությունները և օրինակներով հիմնավորել դրանց դերն ու նշանակությունը կրթական համակարգում:

Այս ընդգրկուն խնդիրը համակողմանի ուսումնասիրություն էր պահանջում: Բոլորս գործի անցանք: Նախ՝ փորձեցինք ինքներս հասկանալ, թե ինչ է նորամուծական կրթությունը: Պարզեցինք,

որ դա առաջին հերթին հնարավորություն է կրթական համակարգում նոր տեխնոլոգիաների, գաճազան ձեռքբերումների կիրառման համար: Սա մի նոր քայլ է օգտվելու տեղեկատվական բազաներից, էլեկտրոնային ռեսուրսներից, և, որ ամենակարևորն է, կրթությունը դարձնելու անընդհատ գործընթաց՝ նոր գաղափարների որոնման, ինքնակատարելագործման ուղիով: Կարծում ենք՝ այսպիսի կրթության անհրաժեշտությունը պետք գիտակցեն ոչ միայն ուսանողները, այլև պրոֆեսորադասախոսական կազմն ու գործատուն: Առաջինը հենց գործատունն է պետք է կարևորի նորարար աշխատակից ունենալու առավելությունն ու իր պահանջները ներկայացնի բուհին: Բուհն էլ, իր հերթին, պետք է բավարարի գործատուի պահանջները՝ ապահովելով վերջինիս համապատասխան մասնագետներով: Այսինքն՝ նորամուծական կրթությունը չի ենթադրում միայն բարձրագույն որակյալ կրթության կազմակերպում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, այլ այն կոչված է ապահովելու գործատու-բուհ-գործատու կապը: Ուսումնասիրեցինք նաև աշխարհի լավագույն համալսարանների փորձը, մասնավորապես, ամերիկյան ճանաչված կրթօջախների կրթական ծառայությունը: Հասկացանք, որ վերջիններիս հաջողության գրավականը տեսական և փորձնական գիտելիքների հավասարակշռությունն է, այսինքն՝ ուսանողը տեսնում է, թե ինչի համար է սովորում, որն է վերջնական նպատակը և գիտակցում է ուսման կարևորությունը:

Էդուարդ Հակոբյան - Մեր հետազոտության հիմքում փաստական տվյալների բազա էր, որը ձևավորվել էր բուհում անցկացրած հարցումների հիման վրա: Այդ հարցումների արդյունքները հիմք դարձան իրավիճակն առավել առարկայորեն վերլուծելու, դիտարկելու և իրատեսական լուծումներ գտնելու համար: Ըստ հարցմանը մասնակից ուսանողների՝ ձեռք բերված գործնական գիտելիքները զիջում են տեսականին: Պասախոսների որակավորման աստիճանը որոշելու համար անցկացրած հարցման արդյունքները ավելի հուսադրող են. պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման աստիճանը 1-5 միավորային սանդղակով գնահատվել է «լավ»: Հիմնախնդիրներ են համալսարանի կարիերայի կենտրոնի գործունեությունը, շրջանավարտների աշխատանքի տեղավորումը:

Հարցումներում կարևորել էինք նաև համալսարանականների՝ ուսանողական կյանքին ինտեգրվածության աստիճանը, նոր գաղափարների ու ստեղծագործական մտքի հանդեպ ձևավորված վերաբերմունքը: Գուցե հարցումների արդյունքներով որևէ հայտնագործություն չարվեց, սակայն մենք ստացանք հիմնախնդիրների մի ամբողջական պատկեր, ստեղծարար մոտեցումների մի նպատակակետ, որին ուղղվեցին մեր առաջարկությունները:

-Կներկայացնե՞ք հայեցակարգային այն հիմնական դրույթները, որոնք առաջարկել եք:

Սաշա Քարամյան - Բուհում ստեղծարար մթնոլորտի ձևավորման համար անհրաժեշտ է տեսական գիտելիքների համադրում փորձնականի հետ, փորձի փոխանակում ինչպես ՀՀ-ում գործող,

այնպես էլ արտերկրի տնտեսագիտական ուղղվածությունն ունեցող բուհերի ուսանողների ու դասախոսների հետ, գիտաժողովների, մրցույթների հաճախակի անցկացում: Գործընթացը պետք սկսել ուսումնական տարվա առաջին իսկ օրվանից՝ նորընծա ուսանողների համար կազմակերպելով «Ծանոթացում բուհին» միջոցառումը: Նամանորինակ մեկն էլ կարելի է անցկացնել արդեն ուսումնառություն անցնողների համար և ներկայացնել բուհական համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու նախագծերը: Կարիերայի կենտրոնի գործունեությունը պետք է դառնա խթան՝ շահամիտելու ուսանողներին՝ կառուցելու իրենց հետագա ճանապարհը: Մյուս կարևոր շեշտադրումը ներբուհական կյանքի աշխուժացումն է, որը կնպաստի ուսանողների միջև տեղեկատվության փոխանակմանը, կառավարելու հատկանիշ, նոր գաղափարներ, ստեղծարար ոգի ունեցողների բացահայտմանը: Նորամուծական կրթության ապահովման համար կարևոր հանգամանք է նաև տեխնիկապես հագեցած, գեղեցիկ և հարմարավետ լսարանների առկայությունը, հարուստ գրադարանային ֆոնդի ձևավորումը: Ցանկացած նորամուծություն, բարեփոխում անհնար է պատկերացնել առանց ֆինանսավորման: Առաջարկում ենք ստեղծել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կազմակերպությունների, անհատ բարերարների ֆինանսական միջոցներով ձևավորված հիմնադրամ, որը կֆինանսավորի ու կխթանի նորամուծությունները կրթական համակարգում:

-Որքանով եք իրատեսական համարում ձեր գաղափարների մոտալուտ կենսագործումը:

Էդուարդ Հակոբյան - Դրա համար նախ՝ պետք է ստեղծվի մակրովերլուծաբան աշխատակիցներից կազմավորված նորամուծությունների բաժին, որի ամենակարևոր գործառույթը պետք է լինի նորարարական ու ստեղծարար առաջարկությունների ուսումնասիրումը, վերլուծումը և իրագործումը:

Գաղտնիք չէ՝ բուհն ունի գերակա առաքելություն՝ պատրաստել որակյալ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ: Մեր կրթօջախն էլ, լինելով փոքր պետություն, կարող է հասնել իրական բարձունքների: Դրա համար պարզապես պետք է հենց այս պահից սկսել մտածել նորովի, լինել ստեղծարար, նույնիսկ հեղափոխական և լուրջ քայլեր ձեռնարկել որոշակի գաղափարներ ի կատար ածելու:

Պատեհ առիթից օգտվելով՝ «ՅՆ» խմբի անունից, լիազորված կերպով ուզում են շնորհակալություն հայտնել մեր բուհի ղեկավարությանը, անձամբ ղեկավար Կորյուն Աթոյանին: Մենք համոզվեցինք, որ նրանք խրախուսում են ստեղծարար, կառուցողական գաղափարները, ավելին՝ պատրաստ են աջակցության ձեռք մեկնելու:

Գ.Գ. «Ստեղծարար միջավայրի ձևավորման մեխանիզմները Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում» թեմայով խմբային աշխատանքի մասնակիցներին ՀՊՏՀ ղեկավար Կորյուն Աթոյանը խրախուսել է նաև դրամական պարգևով:

Հարցազրույցը վարեց ՌՌԻԶԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Վերոնշյալ խորագրի ներքո ՀՊՏՅ փիլիսոփայության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Յուրի Յովականյանը շարունակում է ներկայացնել անգլիացի պետական գործիչ, դիվանագետ և գրող Ֆիլիպ Դորմեր Ստենհոպ Չեստերֆիլդի (1694–1773թթ.)՝ համաշխարհային մշակույթի պատմության մեջ ուրույն տեղ զբաղեցրած նամականին՝ «Նամակներ որդուս» վերնագրով: Կյանքի բոլոր իրավիճակների ու բնագավառների համար այս արժեքավոր խորհուրդները «Տնտեսագետը» ներկայացնում է 2011 թվականի հունվար-փետրվարյան համարից սկսած: Ընթերցելով դրանք՝ դուք կհամոզվեք, որ տարիներն ու դարերը քիչ են փոփոխել մարդկային լավագույն տեսակին, նրա արժեհամակարգին առաջադրվող պահանջները, և Չեստերֆիլդի հայրական խրատ-խորհուրդներն արդիական են նաև այսօր:



ՆԱՄԱԿՆԵՐ ՈՐԴՈՒՄ

Քառ, 9 հոկտեմբերի, 1746 թ.

Իմ սիրելի՛ տղա, քո անհաջողությունները Շաֆհաուզենից դեպի Յայդելբերգ ընկած ճանապարհին, երբ դու հարկադրված ես եղել քնել չոր ծղոտի վրա, սև հաց ես կերել, և երբ կոտրվել է քո ծածկած քառանիվ կառքը, այլ բան չէ, քան պատշաճ նախապատրաստություն ավելի նշանակալի անհաջողությունների և ձախորդությունների, որոնք պատահում են ուղևորությունների ժամանակ: Դժբախտ պատահականությունների, խոչընդոտների ու դժվարությունների կյանքի ճանապարհին հանդիպում է յուրաքանչյուր մարդ: Նման պահերին բանականությունն այն կառքն է, որը պետք է տանի ամեն ինչի միջով, և ըստ նրա ամրության և հուսալիության՝ քո ճամփորդությունը կարող է լինել հարթ կամ խուճերով լի, կարող են նաև քեզ «դարանակալել» գյուղական վատ ճանապարհները և խղճուկ հյուրանոցները: Այդ պատճառով էլ պետք է մտահոգվես, որ կառքը, առանց որի հնարավոր չէ ճանապարհ դուրս գալ, լինի ամենալավ վիճակում: Խնամի՛ր և ամեն օր կարգի՛ բեր այն, ամրացրո՛ւ զսպանակները: Յուրաքանչյուրի համար դա հասանելի է, և յուրաքանչյուրը պետք է հոգա դրա մասին: Այն մարդը, որն արհամարհում է նման խնդիրները, արժանի է իր վրա զգալու արհամարհանքի ճակատագրական բոլոր հետևանքները, և կասկածից վեր է՝ վաղ թե ուշ զգալու է:



Իմիջիայլոց, անփութության մասին: Մեկ անգամ չեմ ասել, որ իմ սերը քո հանդեպ ամենևին էլ կանացի նուրբ զգացմունք չէ: Այն ոչ մի կերպ ինձ չի կուրացնում, ընդհակառակը, ավելի զգոն է դարձնում քո թերությունների հանդեպ, որոնք քեզ ցույց տալը ոչ միայն իմ իրավունքն է, այլև պարտականությունը: Իսկ քո պարտականությունն է դրանք շտկելը, ինչը, անտարակույս, քո շահերից է բխում: Հանգամանորեն գնելով քեզ՝ մինչև հիմա, փառք Աստծո, չեմ բացահայտել ոչ մի վատ բան քո սրտում և ոչ մի առանձնահատուկ արատ քո մտքի մեջ, սակայն ես քո մեջ բացահայտել եմ ծուլություն, անուշադրություն և անտարբերություն: Դրանք թերություններ են, որոնք ներելի են միայն ծերունիներին, ովքեր կյանքի մայրամուտին են, երբ մարմնական և հոգևոր ուժերը մարում են: Երիտասարդը պետք է ձգտի փայլել և ամենուր լինել առաջինը: Նա պետք է լինի զգաստ, գործունյա ու համառ և նպատակին հասնելու համար անվերջ միջոցներ որոնի:

Քեզ, ըստ երևույթին, չի բավարարում հոգու կենսաստեղծ այն ուժը, որը խթանում և մղում է երիտասարդներին՝ փայլելու, իրենց հասակակիցներին գերազանցելու: Համոզվա՛ծ եղիր՝ առանց ցանկության և առանց ջանքերի, որոնք ուղղված են կայացմանը, ոչ մի դեպքում ոչինչ չես կարող դառնալ, ինչպես առանց ինչ-որ մեկին դուր գալու ցանկության երբեք չես կարող դուր գալ որևէ մեկին: Համոզված եմ, որ միջին ընդունակություններով յուրաքանչյուր մարդ իր համառ աշխատանքով կարող է դառնալ ամեն ինչ, բացի լավ բանաստեղծից:

Քո ապագա գործունեության ոլորտը հսկայական գործարար աշխարհ է: Այն, ինչով դու այսօր զբաղված ես՝ գործեր, հետաքրքրություններ, պատմություն, պետական կառուցվածք, եվրոպական տարբեր երկրների սովորույթներ ու բարքեր և ինչ նպատակ, որ հետապնդում ես, միջին ընդունակություններ ունեցող յուրաքանչյուր մարդ, ուժերի միջին ծախսումների դեպքում, անկասկած, կարող է հաջողել (Չեստերֆիլդն իր որդուն նախապատրաստում էր դիվանագիտական աշխատանքի և, ամենայն հավանականությամբ, նրան դաստիարակում էր՝ հիմք ընդունելով Պլատոնի հայտնի դրույթը, համաձայն որի՝ եթե ուզում եք,

որ ձեր երեխան մեծանա ու զբաղվի որևէ գործունեությամբ, ապա նրա մանկական խաղալիքները նույնպես նրան պետք է նախապատրաստեն այդ աշխատանքին: Որդու կրթությունն ու դաստիարակությունը նա ուղղորդում էր հենց դիվանագիտական աշխատանքին: - հեղ.): Ինչպես հին, այնպես էլ նոր պատմությունը, ուշադիր մարդու համար, դժվար չէ ուսումնասիրելը: Նույնը կարելի է ասել նաև աշխարհագրության և ժամանակագրության վերաբերյալ: Ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը չեն պահանջում որևէ հատուկ հնարամտություն, որևէ բացառիկ օժտվածություն: Իսկ ինչ վերաբերում է պարզ, ճիշտ, գեղեցիկ խոսելու և գրելու արվեստին, ապա այն, բնական է, որ պետք է սովորել՝ լրջմտությամբ կարդալով լավագույն գրողներին և ուշադիր լսելով այն մարդկանց խոսքը, ովքեր բոլորից շատ են արժանի մեր ընդօրինակմանը: Ահա այն հատկությունները, որոնք հատկապես անհրաժեշտ են քեզ ընտրածդ բնագավառում, և որոնք, եթե դու ցանկանաս, ապա կարող ես զարգացնել քո մեջ: Պարզորոշ ասում եմ՝ ես քեզ վրա շատ կգայրանամ, եթե դու դա չանես, քանի որ շուտով քո առջև կբացվեն մեծ հեռանկարներ:

Ձանք ու եռանդ է անհրաժեշտ ձեռք բերելու համար այն հատկությունները, առանց որոնց չես կարող քեզանից որևէ բան ներկայացնել: Ոչ պակաս կարևոր են նաև այն երկրորդական հատկանիշները, որոնք մարդուն դարձնում են հաճելի հասարակության մեջ և ցանկալի որպես հյուր: Այն ամենը, ինչ նպատակադրվել էս իրականացնել, պահանջում է բարեխղճություն և ուշադրություն: Այդ պատճառով էլ ուշադիր լինելու անհրաժեշտությունը տարածվում է նաև ամենաչնչին բաների վրա, այդ թվում՝ պարերի և արդուզարդի պարագաների: Ձևավորված ավանդույթի ուժով՝ երիտասարդի համար պարերը հաճախ անհրաժեշտություն են, հետևաբար պարտավոր ես լավ պարել, և նույնիսկ այն բանում, ինչն ինքնին ծիծաղելի է, դու չպետք է ծիծաղելի երևաս: Նույնը վերաբերում է նաև հագուստին. հագնվելն անհրաժեշտություն է, ուստի պարտավոր ես դրան նույնպես վերաբերվել լրջորեն, ոչ թե որևէ պճնամոլի հետ մրցակցելու կամ նրան հաղթելու առումով, այլ ուրիշներից չառանձնանալու և այդ պատճառով ծիծաղելի չդառնալու համար: Հագնվի՛ր այնպես, ինչպես հագնվում են իրենց հարգող բոլոր հասակակիցներդ: Որտեղ էլ հայտնվես, երբեք առիթ մի տուր քննարկելու քո հագուստը՝ թե՛ որպես միանգամայն թափփվածի թե՛ որպես նրբաճաշակի:

Նա, ում ընդունված է անվանել ցրված, սովորաբար կամ շատ թույլ մարդ է, կամ էլ՝ ինչ-որ բանով զնայված: Սակայն, որն էլ որ լինի, ես համոզված եմ, որ նա հասարակության մեջ անցանկալի անձ է: Նա ամեն առիթով ընկնում է անհարմար վիճակի մեջ. ստեղծվում է այն տպավորությունը, որ այսօր արդեն չի ճանաչում այն մարդկանց, ում հետ ընդամենը երեկ է եղել մտերիմ: Նա չի մասնակցում ընդհանուր զրույցին, փոխարենը, ժամանակ առ ժամանակ անտեղի միջամտում է, կարծես հենց նոր արթնացրեցին քնից: Դա թույլ մարդու հատկանիշ է, ով ի վիճակի չէ գիտակցության մեջ միաժամանակ

մեկից ավելի միտք, առարկա պահել:

Աշխարհի արարչության սկզբից գուցե հինգ-վեց մարդ (ովքեր առաջ են մղել համաշխարհային գիտությունը) իրավունք ունի ցրվածության, որը բխում էր նրանց մտքի ծայրահեղ լարվածությունից: Երիտասարդը, որը չունի միտքն ու ուշադրությունը շեղող գործեր, բայց անտարբեր է ու անմասնակից է հասարակական կյանքին, պարզապես այդ հասարակությունից կվտարվի:

Ինչքան էլ դատարկ և թեթևամիտ լինի ընկերախումբը, ցույց մի՛ տուր քո անուշադրությունը նրանց հանդեպ: Մտովի համերաշխություն կնքիր և հաշտվիր շրջապատիդ հետ, փոխարենը արտահայտելու արհամարհանք ու անտարբերություն:

Արհամարհանքը ծանր է և դժվարությամբ է ներվում: Շատ ավելի հեշտ է մոռանալ պատճառված վնասը, քան վիրավորանքը: Հետևաբար, եթե ցանկանում ես ավելի շատ դուր գալ մարդկանց, քան վիրավորել, ցանկանում ես նրանց մեջ սեր արթնացնել և ոչ թե ատելություն, միշտ եղիր ուշադիր՝ հիշի՛ր, որ յուրաքանչյուրն ունի իր փոքրիկ ինքնասիրությունը, և քո ուշադրությամբ շոյում ես այն: Ուշադրության պակասը վիրավորում է հպարտությունը և անխուսափելիորեն առաջ է բերում զայրույթ, անբարեհաճություն: Օրինակ, մարդկանց մեծ մասն ունի թուլություններ. ինչ-որ առարկաների հանդեպ բուռն սեր, ուրիշների հանդեպ՝ զզվանք: Ուստի եթե որոշել ես ծաղրել մարդուն այն բանի համար, որ նա տանել չի կարողանում կատուներին կամ պանիրը (որը, իմիջիայլոց, շատերի համար է անտանելի) կամ անուշադրության մատնել՝ անփութորեն թույլ տալով, որ նա բախվի իր համար տհաճ երևույթի կամ առարկայի հետ, ապա դա վիրավորական է ու անհարգալից վերաբերմունք: Մինչդեռ, եթե դու աշխատես նրա համար ձեռք բերել այն, ինչ նա սիրում է և ազատել նրան այն ամենից, ինչը տանել չի կարողանում, նա կզգա, որ դու բոլոր դեպքերում իր հանդեպ ուշադիր ես: Կշոյվի դիմացինի ինքնասիրությունը, իսկ ինքը կներձեռնաս քո մմանին՝ մարդկային ու հոգատար ծառայությամբ: Ինչ վերաբերում է կանանց, ապա այստեղ անհրաժեշտ է մատուցել ուշադրության ոչ պակաս կարևոր նշաններ և հետևել աշխարհում զոյություն ունեցող վարվեցողության ձևերին, որոնք կարող են ի ցույց դնել միայն դաստիարակված մարդիկ:

Որդի՛ս, նմանօրինակ երկար նամակները, որոնք այնքան հաճախ ուղարկում եմ քեզ, ամենևին համոզված չեմ, որ ունենում են իրենց ազդեցությունը: Դրանք ինձ հիշեցնում են թղթի այն թերթիկները, որոնք դու ոչ շատ վաղուց (իսկ ես՝ բավական վաղուց) կացնում էիր թելով կապված, երկինք բարձրացող օդապարիկներին: Մենք դրանք անվանում էինք «սուրհանդակներ»: Մի մասը քամին տանում էր տարբեր ուղղություններով, մի մասն էլ պատռվում և պոկվում էր թելից, և միայն քչերն էին բարձրանում երկինք՝ կապված մնալով օդապարիկին: Այնուհանդերձ, հիմա, ինչպես և նախկինում, ես գոհ կլինեմ, եթե այդ «սուրհանդակներ» նույնիսկ փոքրիկ մասը կարողանա կաշել քեզ:

Տոնեսություն:



Հունվարի 31-ին տեղի ունեցավ ՀՊՏՀ խորհրդի նիստ, որի առիթով համալսարանում հյուրընկալվել էին խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանը, խորհրդի անդամներ, ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ստեփան Մնացականյանը, ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Պավել Սաֆարյանը, «Համահայկական բանկ» ԲԲԸ-ի տնօրեն Վահրամ Ներսիսյանցը, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի տնօրեն Արա Կիրակոսյանը և այլք: Ընդհանուր առմամբ, խորհրդի 32 անդամից նիստին մասնակցում էր 25-ը, այդ թվում՝ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ:

ՀՊՏՀ խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանը ներկայացրեց օրակարգը, որը վերաբերում էր ՀՊՏՀ 2011 թվականի ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներին և 2012 թվականի բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշներին: Անդրադառնալով բուհի գործունեության բոլոր բնագավառներին՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանը կատարեց համալսարանի ձեռքբերումների, ինչպես նաև թերությունների օբյեկտիվ վերլուծություն, ներկայացրեց հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Նա նշեց, որ բուհի ղեկավարությունը հետևողական է բարեփոխումների իրականացման գործում և հետագա մարտավարությունը պետք է նպատակամղվի բուհի կրթական որակի բարձրացմանը նպաստող ստեղծարար ու նորանվանական միջավայրի ստեղծմանը: Կորյուն Աթոյանը ներկայացրեց նաև 2011թ. բյուջեի կատարման արդյունքները, ինչպես նաև ընթացիկ տարվա բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշները:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը անդրադարձավ նախորդ ուսումնական տարվա ընդունելությանը, կարևորեց ավագ դպրոցների հետ տարվող աշխատանքը, որպեսզի դեռ դպրոցից աշակերտները կողմնորոշվեն դեպի բուհն ու մասնագիտությունը:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հանրապետության առաջատար գիտակրթական օջախներից է, ունի մեծ հեղինակություն ու բարձր վարկանիշ: Գործելով ռեսուրսների խնայողության ռեժիմի պայմաններում՝ հաշվետու տարում համալսարանը զգալի հաջողություններ է գրանցել կրթության որակի բարձրացման, հաղորդվող գիտելիքը ժամանակի պահանջներին համահունչ դարձնելու գործում», - իր խոսքում ասաց խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանը, միաժամանակ նշելով, որ այսօր բուհի առջև ծառայած կարևորագույն խնդիրը որակյալ գիտամանկավարժական կադրերի պատրաստումն ու սերնդափոխությունն է:

Այնուհետև Հովիկ Աբրահամյանը հրապարակեց խորհրդի նիստի որոշումը՝ հավանություն տալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2011թ. ուսումնամեթոդական, գիտահետազոտական ու ֆինանսական գործունեությանը, բյուջեի կատարման արդյունքները գնահատել բավարար և հաստատել ՀՊՏՀ 2012 թ. բյուջեն: Որոշումը դրվեց քվեարկության, որը խորհուրդն ընդունեց միաձայն:

Հունվարի 13-ին տեղի ունեցավ ռեկտոր Կորյուն Աթոյանի, գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Գագիկ Վարդանյանի և ասպիրանտուրայի բաժնի վարիչ Եվգենյա Պողոսյանի առաջին հանդիպումը հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների հետ: Վերջիններս ծանոթացան ուսումնական գործընթացում տեղի ունեցած փոփոխություններին, կարգին, ասպիրանտի անհատական աշխատանքի ուսումնական պլանին:



Փետրվարի 1-ին տեղի ունեցավ ՀՊՏՀ արհեստակցական կազմակերպության 4-րդ համաժողովը, որը լսեց 2008-2011 թթ. ընթացքում կատարված աշխատանքի մասին ՀՊՏՀ արհեստակցական կազմակերպության կոմիտեի նախագահ Շիրակ Սահակյանի հաշվետվությունը: Կատարված աշխատանքը համարվեց բավարար և հաստատվեց վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը: Պատվիրակները միաձայն ընտրեցին նոր կազմ և վերստուգիչ հանձնաժողով:

Համաժողովի ավարտից հետո, առաջին նիստը գումարեց արհկոմիտեի նոր կազմը, որտեղ արհկոմիտեի նախագահ ընտրվեց Գրիգոր Տերտերյանը, նախագահի տեղակալ՝ Լուսինե Կարազուլյանը:

Փետրվարի 9-ին բացվեցին ՀՊՏՀ պաշտոնական կայքի (asue.am) անգլերեն և ռուսերեն տարբերակները՝ բոլոր այցելուներին ու օգտատերերին հնարավորություն ընձեռելով տեղեկատվությանը ծանոթանալու նաև ռուսերեն ու անգլերեն: Այդպիսով՝ ՀՊՏՀ-ի մասին պատմող բազմաբնույթ և հետաքրքրական նյութերը հասանելի դարձան կայքի օտարախոս այցելուներին:




Կառավարման ֆակուլտետի աշխատանքի տնտեսագիտություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի, «Հայաստանը ես եմ» շարադրությունների մրցույթի հաղթող Ռոզա Աբրահամյանը կառավարման ֆակուլտետում ներկայացրեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հետ Իտալիա կատարած աշխատանքային այցի արդյունքները: Նա հպարտորեն նշեց, որ իր համար մեծ պատիվ է ՀՀ նախարարների, Երևանի քաղաքապետի, մեր երկրի հոգսերով մտահոգ մարդկանց հետ ծանոթանալը, նրանց հետ ճանփորդելը:

ՀԵՏԱՀԱՅԱՑ

Հունվարի 26-ին տեղի ունեցավ ՀՊՏՀ գիտական խորհրդի ընդլայնված նիստ: 2011 թ. ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների և 2012 թ. բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշների մասին զեկուցումով հանդես եկավ ռեկտոր Կորյուն Աթոյանը:

Նա նշեց, որ ֆինանսական ճգնաժամի, դիմորդների թվի սակավության պայմաններում թեև համալսարանը գործել է ֆինանսական ու նյութական ռեսուրսների կոշտ խնայողության ռեժիմով, այնուհանդերձ, հաջողվել է կատարել մեծ ծավալի աշխատանք և ավելացրեց, որ հարկավոր է ցանկացած գործունեության մեջ գտնել հնարավոր բացասական դրսևորումների ոչ միայն վերացման, այլև կանխարգելման եղանակներն ու կառուցակարգերը: Ռեկտորը ՀՊՏՀ գործունեության բոլոր ոլորտների համար կատարեց անաչառ վերլուծություն, շեշտադրեց հետագա աշխատանքների կատարման առավել արդյունավետ մեթոդների ու մոտեցումների կիրառումը:



Նոր ուսումնական կիսամյակից ՀՊՏՀ դասախոսները ուսումնական գործընթացի գրանցումն սկսեցին կատարել նոր մատյաններում: Նոր ձևավորմամբ մատյանների շապիկին համալսարանի պատկերանշանն է ու կարգախոսը:

Մարտի 7-ին մի խումբ ուսանողներ՝ ռեկտոր Կորյուն Աթոյանի զլխավորությամբ և ԱԺ պատգամավոր Կարեն Ավագյանի, ՀՊՏՀ ռեկտորի օգնական Հովհաննես Մարգարյանի, բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ Սիեր Աղալովյանի, ուսխորհրդի նախագահ Սևակ Խաչատրյանի մասնակցությամբ, այցելեցին Եռաբլուր և հարգանքի տուրք մատուցեցին Արցախյան ազատամարտում զոհված կին ազատամարտիկների հիշատակին:

Տարեսկզբից համալսարանում գումարվել է չորս գիտական խորհրդի նիստ՝ հունվարի 26-ին, փետրվարի 15-ին, փետրվարի 29-ի, մարտի 28-ին: Լսվել և քննարկվել են ֆակուլտետներում կատարված ուսումնագիտական և գիտահետազոտական աշխատանքները, կազմակերպական և ընթացիկ հարցեր:



«Օրանժ Արմենիա» ընկերության հետ ՀՊՏՀ համագործակցության շրջանակում N5 մասնաշենքի երկրորդ հարկի ընթերցասրահն ապահովվեց Wi-Fi կապով, իսկ նախարահում ստեղծվեց Wi-Fi գոտորիկ անկյուն: Անձնական համակարգիչներով անվճար ինտերնետային ծառայությունից օգտվելու հնարավորությունն ուսանողներին արագ ու արդյունավետ ուսումնառության նոր պայմաններ է առաջարկում:

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնն արդեն համագործակցում է ՀՊՏՀ-ի հետ: ՀՀ բուհական համակարգի միջազգայնացման, ակադեմիական շարժունության խթանման նպատակով ստեղծված անգլալեզու studyinarmenia.org կամ amhe.am բարձրագույն կրթության կայքի սպասարկումն իրականացվում է ՀՊՏՀ արտաքին կապերի բաժնի հետ: Արդյունքում մեր համալսարանն այսուհետ ներկայացված է լինելու ԿԳ նախարարության անգլալեզու կայքում՝ որպես թիրախ ընտրելով արտերկրի ուսանողությանը և բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունները: ՀՊՏՀ արտաքին կապերի բաժնին աշխատելու է օտարերկրացու համար հետաքրքրություն և գրավչություն ներկայացնող ՀՊՏՀ տեղեկատվությունն ապահովել պատշաճ հաճախականությամբ և բովանդակային բազմազանությամբ:



Փետրվարի 9-ին ՀՊՏՀ-ում զբոսաշրջության զարգացման ժամանակակից թիրախների մասին դասախոսությամբ հանդես եկավ զբոսաշրջության ուսուցման դասընթացների ղեկավար, Եվրախորհրդի և զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության խորհրդատու, Պորտուգալիայի Վիանա դե Կաստելոյի պոլիտեխնիկական ինստիտուտի ակադեմիկոս Կառլոս Ֆերնանդեսը:

Եվրոպական ուսանողական միության (ԵՈԲՄ) պատվիրակությունը, որը Հայաստանում էր ՀՀ-ում բարձրագույն կրթության իրավիճակի մոնիթորինգ անցկացնելու, ինչպես նաև այդ բնագավառում ուսանողների ներգրավվածության աստիճանը գնահատելու համար, փետրվարի 27-ին հանդիպեց ռեկտոր Կորյուն Աթոյանի հետ և ներկայացրեց իրենց միության գործունեությունը:



ԵՈԲՄ ազգային ուսանողական կառույցների զարգացման հանձնաժողովի նախագահ Մարեկ Բառանսկին նշեց, որ իրենց նպատակն է ծանոթանալ Հայաստանում կրթական համակարգում ուսանողների ներգրավվածությանը, շարժունակությանը, Բոլոնիայի գործընթացի ներդրմանը: «Ես ուրախ եմ, հիացած եմ ապագային միտված Ձեր քայլով»,- ռեկտորի գործունեությանը ծանոթանալուց հետո հայտարարեց Մ. Բառանսկին՝ ավելացնելով, որ իրենք նախատեսել էին ռեկտորի հետ հանդիպումն անցկացնել 20 րոպեում, սակայն հանդիպումն այնքան հետաքրքիր էր ու բաց, որ երկարեց: Ռեկտորն իր հերթին շնորհակալություն հայտնեց հանդիպման համար՝ հույս հայտնելով, որ եվրոպական ուսանողական միությունում մի օր կլինեն նաև մեր ուսանողները, ինչին ինքը պատրաստ է աջակցել:

«Մասթեր Պլյուս» միջազգային ուսումնական կենտրոնը փետրվարի 11-ին ՀՊՏՀ-ում ներկայացրեց Լոնդոնի LSBF (London School of Business and Finance) քիզնես դպրոցը: Եվրոպայում մեծ համբավ վայելող այս բուհը, որն իր ներկայությունն է ապահովել աշխարհի շատ երկրներում, իր գործունեությունն սկսելով հայաստանյան կրթական տարածքում, ՀՊՏՀ ուսանողությանն առաջարկեց իր՝ մրցունակ կրթության մատուցման և կարիերայի կայացմանը նպաստող ծառայությունը:





Ռեկտոր Կորյուն Աթոյանը մարտի 15-ին «on-line» հանդիպում ունեցավ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի ուսանողների հետ: Ինտերակտիվ այս հանդիպումը, որն իրականացավ «Skype» համացանցային համակարգի միջոցով, անմախաղեպ էր, քանի որ համալսարանի պատմության մեջ սա առաջին դեպքն էր, երբ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ՝ բուհի ղեկավարը կապ հաստատեց բուհի մասնաճյուղի ուսանողների հետ: Նա տեղեկացավ մասնաճյուղի ուսանողության առօրյա խնդիրներին, մտահոգություններին, կարիքներին ու պահանջներին, պատասխանեց ուսանողների հարցերին:

Փետրվարի 29-ին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Երիտասարդական կենտրոնում տեղի ունեցավ Հայկյան մրցանակաբաշխությունը, որին մասնակցում էին վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը, ՀԵՀ նախագահ, ԱԺ պատգամավոր Կարեն Ավագյանը: Հիմնադրամի կողմից Հայկյան մրցանակների արժանացան 2011 թ. երիտասարդական տարբեր բնագավառներում իրենց լավագույնս դրսևորած երիտասարդական և ուսանողական կառույցները:

Պարգևները մրցանակակիրներին հանձնեց վարչապետը: «Լավագույն երիտասարդական միջազգային ծրագիր» անվանակարգում մրցանակի արժանացավ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Բոլոնիան 2010-ից հետո, ուսանողական միջազգային ամառային դպրոց» ծրագիրը, որը ստացավ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը: «Լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգում պարգևատրվեցին Հայաստանի պետական տնտեսագիտական և Հայկական պետական մանկավարժական համալսարանների ուսանողական խորհուրդները: Մրցանակներ հանձնվեցին նաև այլ անվանակարգերում:



ՀՊՏՀ

ուսանողական խորհրդի և ՀԵՀ-ի նախաձեռնած «Անկախ տնտեսության 20 տարիները» խորագիրը կրող ուսանողական գիտաժողովն ընթացավ մարտի 23-ից 25-ը: Գիտաժողովի ընթացքում ուսանողներին հյուրընկալվեցին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը, արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը, ՀԵՀ նախագահ, ԱԺ պատգամավոր Կարեն Ավագյանը, ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը, Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահալոյանը: Կառավարության ղեկավարը հանդես եկավ «Հետզմաժամային տնտեսական քաղաքականության մարտահրավերներն ու հնարավորությունները» թեմայով դասախոսությամբ՝ ներկայացնելով ճգնաժամի արմատները, դրանց դրսևորումները, ինչպես նաև այն հաղթահարելու ելքերը:



Դասախոսության ավարտին Տիգրան Սարգսյանը պատասխանեց ուսանողների հարցերին, ունկնդրեց մեկ զեկուցում: Գիտաժողովին մասնակցում էին ՀՊՏՀ 100-ից ավելի ուսանողներ և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Լսվեց 30 զեկուցում՝ նվիրված Հայաստանի տնտեսության անցած քսան տարիների առանցքային ձեռքբերումներին: Գիտաժողովի վերջին օրը ռեկտոր Կորյուն Աթոյանը կրկին ուսանողների կողքին էր. նա, ՌԻՄ նախագահ Սևակ Խաչատրյանի հետ, հաղթողներին հանձնելով մրցանակները, խրախուսեց հետազոտական աշխատանքին նրանց ակտիվ մասնակցությունը:

Առանձին մասնագիտական բաժանմունքներում առաջին մրցանակի արժանացան հետևյալ աշխատանքներն ու հեղինակները. «ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի առանձնահատկությունները»՝ Բաղդասարյան Մարինե, «ՀՀ տնտեսության ֆինանսական հատվածի արդի վիճակը և զարգացման հեռանկարները»՝ Առաքելյան Հռիփսիմե, «Մարքեթինգի գործունեությունը ՀՀ-ում»՝ Ղազարյան Տաթևիկ, «ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և միջազգային տնտեսական հարաբերությունները»՝ Ալեքսանյան Շուշան:



Մարտի 13-ին «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ընկերությունը համալսարանում սկսեց աուդիտի դասընթացների շարք՝ նպատակ հետապնդելով ուսանողներին փոխանցել փորձառու մասնագետների տեսական ու գործնական գիտելիքներ:

Մարտի 28-ին տեղի ունեցավ ՀՊՏՀ գիտական խորհրդի նիստում ձայների մեծամասնությամբ ֆինանսական ֆակուլտետի ղեկան ընտրվեց ՀՊՏՀ հանրային ֆինանսների ամբիոնի դոցենտ Սերգեյ Սուքիասյանը, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի ղեկան՝ կորպորատիվ ֆինանսների ամբիոնի դոցենտ Աշոտ Մաթևոսյանը:



Մարտի 7-ին ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը և ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ Արման Սահակյանը ստորագրեցին համագործակցության պայմանագիր, որով առաջին անգամ Հայաստանում պետական գույքի կառավարումը՝ որպես մասնագիտություն, կդառնա բուհական կրթության բաղադրիչ: Մասնավորապես, կներդրվի «Պետական գույքի կառավարում» մագիստրոսական մասնագիտացումը:

Մարտի 17-ին ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում տեղի ունեցավ «Ձեռք ձեռքի հզորացնելով Եղեգնաձորի երիտասարդությանը» ծրագրի ամփոփիչ միջոցառումը, որին մասնակցում էին մասնաճյուղի ուսանողությունը, ծրագրի փորձագետ, կառավարման ֆակուլտետի ղեկան Էդգար Ղազարյանը, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրեն Սոս Խաչիկյանը, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի ծրագրի ղեկավար Նունե Ղազարխեցյանը, ծրագրի համակարգող Սամվել Նազարյանը:



Ապրիլի 13-ին ռեկտոր Կորյուն Աթոյանը և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյանը հանդիսավորությամբ կատարեցին ֆինանսական ֆակուլտետում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հովանավորությամբ հիմնադրով և ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած հարկային և մաքսային մասնագիտացված երեք լսարանների բացումը: Հիշեցնենք, որ 2011 թ. սեպտեմբերի 7-ին վավերացված ՀՊՏՀ-ՊԵԿ համագործակցության պայմանագրով նոր ուսումնական տարվանից ՀՊՏՀ-ում սկիզբ է դրվում աննախադեպ մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման:

Գիտակների հայկական ասոցիացիայի նախաձեռնությամբ և «Շիրակ» ֆուտբոլային ակումբի նախագահ Արման Սահակյանի հովանավորությամբ մարտի 10-11-ին Գյումրիում կայացած «Գյումրու գավաթ» խորագիրը կրող համահայկական ինտելեկտուալ մրցույթ փառատոնում, որին մասնակցում էին 25 թիմեր ՀՀ և ԼՂՀ քաղաքներից, ՀՊՏՀ «Index Pro» գիտակների թիմը «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղի արդյունքում դարձավ հաղթող և տուն վերադարձավ գավաթով ու պատվոգրով:



Մարտի 16-ին «Index Pro» գիտակների թիմի անդամները հյուրընկալվեցին ռեկտոր Կորյուն Աթոյանի աշխատասենյակում: Վերջինս հրավիրել էր նրանց՝ կիսելու հաղթանակի բերկրանքը, շնորհավորելու թիմի անդամներին և մտախոհաբանական մեծ ու աննախադեպ վերելքներ ինտելեկտուալ խաղերի մրցապայքարում: Բարեմաղթանքի խոսքեր հղելով ՀՊՏՀ-ական գիտակներին՝ ռեկտորը նրանց նվիրեց գրքեր: Ի պատասխան՝ գիտակները բուհի ղեկավարին ընծայեցին իրենց հաղթական գավաթը և պատվոգիրը՝ վստահեցնելով, որ առաջին կարևոր հաղթանակը սկիզբն է նորերի:

Մարտի 21-ին տեղի ունեցավ մարքեթինգի ամբիոնի՝ 2011-2012 թթ. կատարած աշխատանքների շնորհանդեսը, որին մասնակցում էին ռեկտոր Կորյուն Աթոյանը, պրոռեկտորները, ամբիոնի վարիչներ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ: Մարքեթինգի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արարատ Զաքարյանը տեղեկացրեց, որ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ջանքերով հրատարակվել են երեք ուսումնական ձեռնարկ, կրթական ու առարկայական ծրագրեր. Գագիկ Վարդանյանի «Գինը մարքեթինգային համալիրում», Ռուզան Հաջոյանի, Մարինե Նիկողոսյանի «Մարքեթինգը զբոսաշրջության ոլորտում», Նարեկ Ղուկասյանի «Քաղաքական մարքեթինգ» ուսումնական ձեռնարկները, «Մագիստրոսական կրթության «Մարքեթինգ» մասնագիտության կրթական ծրագրերի հայեցակարգերը և մասնագիտացման առարկայական ծրագրերը» և ««Մարքեթինգի հիմունքներ» դասընթացի ծրագիրը»:



Մարտի 30-ին ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը և ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը ստորագրեցին համագործակցության պայմանագիր, որով սկիզբ դրվեց «Տնտեսական գործունեության բնապահպանական փորձաքննություն» մասնագիտացմամբ մագիստրոսական ծրագրի համատեղ իրականացմանը:

«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), Կենսաթոշակային և աշխատաշուկայի բարեփոխումների ծրագրի, ՆԱՄՂԱԲ ՕԷՄԷՔՍ Արմենիայի և ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության հետ համատեղ նախաձեռնել էին դասախոսությունների շարք, որոնցից մեկը մարտի 13-ին անցկացվեց մեր բուհում: Բանախոսներն էին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ Ահարոն Զիլինգարյանը և ԱՄՆ ՄԶԳ կենսաթոշակային և աշխատանքային շուկայի բարեփոխումների ծրագրի տնօրեն Ռոզա Կիսպպեն: Նրանք անդրադարձան ՀՀ-ում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումներին:



Ապրիլի 11-ին ռեկտոր Կորյուն Աթոյանը բուհում հյուրընկալեց ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանին և «Փյունիկ» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Լևոն Սարգսյանին: Առիթը մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետում «Փյունիկ»-ի նվիրատվությամբ հիմնադրված և համակարգիչներով կահավորված լսարանի հանդիսավոր բացումն էր, ինչպես նաև հիմնադրամի և նախարարության միջև համագործակցության հուշագրի ստորագրումը:

«Ֆեյսբուք» սոցիալական ցանցում ՀՊՏՀ պաշտոնական էջի այցելուների թիվը հասել է 2000-ի սահմանը:

Մարտի 1-ին մեր ուսանողներին ներկայացավ Լոնդոնի առևտրի դպրոցը (London school of commerce), որի միջազգային ընդունելության բաժնի աշխատակից Լիլյա Հովհաննիսյանը ներկաներին տրամադրեց մանրամասն տեղեկատվություն ուսումնական ծրագրերի, հայ ուսանողների համար կիրառվող հատուկ զեղչերի (50 տոկոս), ընդունելության կարգի, բուհի կառուցվածքի, կեցության պայմանների վերաբերյալ:

Մարտի 19-ին մեկնարկեցին 13-րդ Հանրապետական ուսանողական մարզական խաղերը՝ նվիրված ՀՀ ԶՈՒ կազմավորման 20-ամյակին: Առաջինը մրցասպարեզ դուրս եկան վոլեյբոլի աղջիկների հավաքականները: ՀՊՏՀ վոլեյբոլի աղջիկների հավաքականը արժանացավ արծաթե մեդալի, տղաներինը՝ բրոնզե: Շախմատի մրցաշարերում ՀՊՏՀ աղջիկների հավաքականը գրավեց 2-րդ, տղաներինը՝ 6-րդ հորիզոնականը: ՀՊՏՀ ֆուտբոլիստները և թենիսիստուհիները դարձան չեմպիոն:



Ներկայացվող գործարար նախագծերն ընդգրկված են 2011 թվականի գործարար և մարքեթինգային գաղափարների ընտրանու մեջ: Դրանց մի մասն արդեն ոգեշնչել է ձեռներեցներին ու նախագծից վերածվել իրողության՝ ամեն մեկը հարմարավետ, ուրախ, առողջ ու հետաքրքրական դարձնելով մեր կյանքը յուրովի:

Հուսով ենք՝ այդ նախագծերին ծանոթությունը Ձեզ նույնպես կոգեշնչի և կմղի գործարար գաղափարների ու ձեռներեցության կամ կարթնացնի դրանցից օգտվելու ցանկություն:

ԿՅԱՆՔԻ ԿՈՉՎՈՂ ԳՈՐԾԱՐԱՐ ՆԱԽԱԳԾԵՐ ԸՆՏՐԱՆԻ



MedCottage. տարեցների, հիվանդների խնամքի կազմակերպում



Վիրջինիայի N 2 հոգածության կենտրոնը «MedCottage» կազմակերպության հետ համատեղ ստեղծել է բժշկական և կենցաղային խնամատարության այլընտրանքային միջոց: Անհրաժեշտ սարքավորումներով հագեցած MedCottage համալիրը կարող է տեղակայվել սեփական հողատարածության վրա, առանձնատնից ոչ հեռու: Այն հնարավորություն է ընձեռում լիարժեք պայմաններում կազմակերպելու տարեց, հիվանդ հարազատների խնամքը: Այսպես կոչված «տնակ բժշկական համալիրը» կենսական բոլոր կարիքները հոգացող մի տարածք է՝ անհրաժեշտ ժամանակակից հարմարություններով՝ էլեկտրաէներգիա, ջուր, տեխնոլոգիաներ, օդափոխության համակարգ, արտաքին աշխարհի հետ ձայնա- և տեսակապ, շարժական վերելակ: Վիրջինիայում MedCottage-ն արդեն կիրառվում է: N2 հոգածության կենտրոնի հավաստմամբ՝ ծառայությունը հասանելի է և արժե բուժքրոջը տնային խնամքի համար տրվող վարձավճարի կեսը:

Հնդկական առաքման ծառայությունն աշխատանքի է ընդունում միայն խուլերին

Հնդկաստանը համարվում է ամենամեծաթիվ խուլ բնակչություն ունեցող երկիրն աշխարհում, և սոցիալական այս ցուցանիշն անդրադառնում է աշխատունակ բնակչության 6%-ի վրա: Նպատակ ունենալով արտոնություններ ընձեռել այս մեկուսացած խմբին՝ Մումբայում առաքման ծառայություններ մատուցող «Mirakle Courier» ընկերությունը աշխատանքի է ընդունում միայն խուլերին: Ընկերությունն անձնական տվյալներից առավել կարևորում է աշխատողների վերապատրաստումը:



Նախկինում դրամատան ղեկավար Դրիշուվ Լակառայի հիմնադրած «Mirakle Courier»-ը շեշտադրում է, որ իրականացնում է ոչ թե բարեգործություն, այլ սոցիալական գործարարություն, որտեղ սոցիալական տարրը ներգրավված է առևտրային գործառնության մեջ: Ընկերությունը պլանավորում է ընդլայնել սահմանները Մամբայից դեպի այլ քաղաքներ ու երկրներ:

Բուսական մսի խանութն առաջարկում է մսային փոխարինիչներ

Հաագայում բուսական ծագման մսի խանութ է բացվել: Վաճառքում մսային փոխարինիչներ են: Արտադրող ընկերության գլխավոր նորարարությունն այն է, որ առաջարկում է սպիտակուցով հարուստ մթերք: Այն մշակել են Հոլանդիայի գիտնականներն ու ավագ խոհարարները: Բուսական մսի խանութի հաճախորդները պատրաստ են մսային փոխարինիչների համար վճարել այնքան, որքան կվճարեն բնական մսի համար: Այսօր միտում է նկատվում սննդակարգից միսը պակասեցնելու կամ առհասարակ հանելու, ուստի զարմանալի չի լինի, եթե շատ շուտով բուսական մսի խանութներ հայտնվեն աշխարհի քաղաքների կենտրոնական փողոցներում:

Կանանց շքեղ ներքնագեստներ՝ փոստային բաժանորդագրությամբ

«Ներքնագեստներ՝ փոստով»-ը («Panty by Post») կանադական ձեռնարկություն է, որն առաջարկում է կանանց ներքնագեստների հավաքածուի ամսական բաժանորդագրություն: Հաճախորդները կարող են ամօձամբ պատվիրել ներքնագեստներ կամ բաժանորդագրվել 2, 3, 6 կամ 12 ամսով: Պատկերացնո՞ւմ եք, յուրաքանչյուր ամիս գրավիչ փաթեթավորմամբ ձեզ են առաքվում ներքնագեստներ:



«Ֆիատ»-ը կոչ է անում պահպանել շրջակա միջավայրը



Պահպանելու համար շրջակա միջավայրը՝ «Ֆիատ»-ը հնարամտորեն ձգտում է ազդել սպառողների էկոգիտակցության վրա և իսպանացի սեփականատերերին առաջարկում է 500 էլեկտրական հեծանիվ: Վարձակալության համար գումար չի գանձվում, և հեծանիվներն ունեն 70 կմ ժամ արագություն: Ծառայությունը հեծանիվ պատրաստող «Trek» ընկերության հետ համագործակցության արդյունքում հասանելի է իսպանիայի տարբեր քաղաքներում: Արտադրողները հույս ունեն, որ դրանք կծառայեն որպես լիարժեք փոխադրամիջոց: Հարկ է նշել, որ նոր ապրանքանիշը դեռ անսովոր է սպառողների համար, քանի որ նորարարություն է, սակայն մեծ հեռանկարներ և համագործակցության հնարավորություններ է խոստանում: Ընկերությունն առաջարկում է նաև էկովարում (ecoDrive) ծառայությունը, որը սպառողներին կօգնի իրենց ավտոմեքենաները ավելի արդյունավետ շահագործել:

Եթե էլեկտրական հեծանիվները ճանաչում գտնեն իսպանիայում, ապա «Ֆիատ»-ը կընդլայնի իր գործունեությունը:

«Twitter»-ի միջոցով՝ թռիչք դեպի Մայամի

Հոլանդացի DJ-ները, ռեպերները և երեկույթի սիրահարները համոզում էին հոլանդական KLM ավիաընկերությանը լրացուցիչ չվերթ ավելացնել դեպի Մայամի: Ավիաընկերությունը չէր համաձայնում, որովհետև տոմսերի իրացումը դժվար իրագործելի էր: Ժամանցի սիրահարներին մնում էր միայն գրագով պայման կապել ավիաընկերության հետ՝ պնդելով որ հնարավոր է կազմակերպել տոմսերի վաճառք: Արդյունքում, նրանք հայտարարություն են գետեղում «Twitter» սոցիալական ցանցում: Գերազանցելով բոլոր սպասելիքները՝ հինգ ժամվա ընթացքում տոմսերն ամբողջությամբ պատվիրվում են: «Սա առաջին դեպքն է, երբ KLM-ը կազմակերպում է թռիչք «Twitter»-ի խնդրանքով: Սոցիալական լրատվամիջոցները էլ ավելի կարևոր են դառնում KLM-ի հաճախորդներին տեղեկատվություն և ծառայություններ մատուցելու գործում», -ասում է KLM-ի փոխնախագահ Մարտին վան դեր Ջին:





ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՓ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Տարածքների համաչափ զարգացումը համարվում է ՀՀ Կառավարության գերակա խնդիրներից մեկը, որը անրագրված է նաև Կառավարության ծրագրում: Պետք է նկատել, որ այդ նույն ծրագրում առաջնահերթություն է տրվում նաև կրթության և գիտության զարգացմանը՝ գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու նպատակով: Այսինքն՝ տարածքների համաչափ զարգացումը և գիտելիքահենք տնտեսությունը կարող ենք համադրել ու դիտարկել միասնական հարթության վրա, որի արդյունքում գերակայություն կստանա տարածքներում կրթության և գիտության զարգացումը: Այս տեսլականը առավել արդիական է հատկապես այժմ, ինչը պայմանավորված է հետևյալ առանձնահատկությամբ: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Հայաստանում աղքատությունը կազմում է մոտ 35% և գերակշռում է մարզերում: Աղքատության հետ փոխկապված տարբեր ցուցանիշների ուսումնասիրությունները վկայում են (և դրանք արտացոլված են բազմաթիվ պաշտոնական հրապարակումներում), որ աղքատ ընտանիքների մեծ մասում չկան բարձրագույն կրթություն ունեցողներ: Կարծում ենք, որ դա պայմանավորված է հիմնականում կրթության մատչելիությամբ: Աղքատության շենը կարող են հաղթահարել շատ ընտանիքներ, եթե նրանց համար բարձրագույն կրթությունը լինի մատչելի: Այսինքն՝ բարձրագույն կրթության զարգացումը մարզերում հնարավորություն կտա նվազեցնել մարզերի աղքատության ցուցանիշը, որը աղքատության ամբողջ ցուցանիշի մեջ ունի մեծ տեսակարար կշիռ: Այս համատեքստում պետք է քննարկել նաև գիտության զարգացման հնարավորությունները մարզերում, որովհետև բարձրագույն կրթության և գիտության այժմյան համակարգն ու չափորոշիչները արդյունավետություն կարող են ունենալ միայն դրանց միասնականության ապահովման միջոցով:

Այստեղ պետք է իրատես լինել և հստակ հարցադրում կատարել. արդյո՞ք հնարավոր է ապահովել մարզերում բարձրագույն կրթության ու գիտության զարգացում և ի՞նչ միջոցներով: Կարծում ենք, որ

դա հնարավոր է, և այդ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ է ներդնել գործողությունների համալիր մի ծրագիր, որը պետք է ներառի հետևյալ առաջնահերթությունները:

Առաջին հերթին, պետական քաղաքականությամբ պետք է անրագրել ՀՀ մարզերում բարձրագույն կրթության և գիտության տարածաշրջանային կենտրոնների ձևավորման ու զարգացման գերակայությունը: Այդպիսի նախադեպ մենք ունենք Դիլիջանի, Ջերմուկի և Գյումրու օրինակներով, որոնք ֆինանսական, զբոսաշրջային և տեխնոլոգիաների զարգացման ծրագրերի ներդրման տարածաշրջանային կենտրոններ են: Մարզերում բարձրագույն կրթության և գիտության տարածաշրջանային կենտրոնների ստեղծման գերակայությունը պետական քաղաքականությամբ անրագրելը համարելով ռազմավարական առաջնահերթություն՝ համապատասխան պետական կառույցների համար ապահովվում է անհրաժեշտ դաշտ մարտավարական քայլեր իրականացնելու տեսանկյունից: Մասնավորապես, պետական պատվերով և ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտական թեմաների տրամադրումը այդպիսի կենտրոններին, հնարավորություն կտա մայրաքաղաքում գերկենտրոնացված գիտական ներուժը ուղղորդելու դեպի մարզեր, ինչը միանգամայն դրական ազդեցություն կունենա մարզերի գիտակրթական համակարգի զարգացման վրա: Մարտավարական քայլերից կարելի է համարել նաև մարզերում բարձրագույն կրթության և գիտության ոլորտի շահառուներին (ուսանողներ և պրոֆեսորադասախոսական կազմ) տարաբնույթ սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկվելու հնարավորության տրամադրումը:

Երկրորդիվ կարևորում ենք հետևյալը՝ մարզերում գործող պետական բուհերի գործունեությունը ֆինանսատնտեսական ու կազմակերպական առումով ավելի արդյունավետ դարձնելու նպատակով կարևոր է միջազգային փորձում լայնորեն կիրառվող հեռավար ուսուցման համակարգի ներդրումը: Այդ համակարգի ներդրման համար պահանջվում է բավական մեծ աշխատանք, որը կապված է ուսուցման նոր մեթոդաբանության մշակման, ուսումնական ծրագրերի ու նյութերի վերանայման, համակարգչային ծրագրային փաթեթների ստեղծման և տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառման հետ: Այստեղ պետք է նկատել, որ այդ համակարգի ներդրման հետ կապված աշխատանքների իրականացումը խիստ հրատապ է, քանի որ հանրապետության բուհական համակարգն այժմ գտնվում է բարեփոխումների փուլում, որտեղ հստակեցվում են կրթական չափորոշիչները, իսկ հեռավար կրթական համակարգի (որի համար կա իրավական հիմք) չափորոշիչները տարբերվում են կրթական այլ համակարգերի չափորոշիչներից: Կրթական բարեփոխումների համաշխարհային փորձում կարևորվում է նաև շարունակական կրթության ապահովման հնարավորությունը, ինչը նույնպես նպատակահարմար է իրականացնել հեռավար ուսուցման համակարգի միջոցով:

Երրորդ դիտարկումն ու առաջարկությունը. տարածքների համաչափ զարգացման նպատակով արդյունավետ կարող է լինել նաև մարզերում իրենց գործունեությունն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ու պետական բուհերի միջև համագործակցության հնարավորությունների ընդլայնումը: Քանի որ պետությունն այժմ հնարավորություն չունի մեծածավալ ֆինանսական ներդրումներ կատարելու բարձրագույն կրթության և գիտության ոլորտում, իսկ դա անհրաժեշտ է աղքատության հաղթահարման տեսանկյունից, ապա կարծում ենք, որ իրատեսական տարբերակ է այնպիսի մեխանիզմի ստեղծումը, որի միջոցով հնարավորություն տրվի մասնավոր հատվածին խրախուսելու ներդրումների կատարումը մարզերի բարձրագույն կրթության և գիտության համակարգերում: Օրինակ՝ պետական բուհերին կից, պետության կողմից սահմանված չափորոշիչներով մասնավոր հետազոտական կենտրոնների ստեղծումը կարելի է դիտարկել որպես արտոնյալ պայմաններով ներդրում, որի դեպքում կզարգանա նաև պետական տարբեր ծրագրերով ամրագրված պետություն - մասնավոր հատված համագործակցությունը: Իհարկե, այս դեպքում ներդրում կատարողը պետք է վստահություն ունենա պետական քաղաքականության և ապագայում շահույթ ստանալու նկատմամբ:

Նշված գործընթացների իրականացումը եականորեն կնպաստի տարածքների համաչափ զարգացմանը, մարզերում բարձրագույն կրթության և գիտության խթանմանը, կրթության վրա կատարվող ծախսերի նվազեցմանը և աղքատության ցուցանիշի բարելավմանը: Սակայն դա պետք է կազմակերպել հստակ ընթացակարգերով, այնպես, որ բացասաբար չանդրադառնա կրթական որակի վրա: Այս տեսանկյունից կարևորվում են ոչ միայն մասնագիտական հմտությունները, այլև անձնական պատասխանատվությունը և պետական քաղաքականության նկատմամբ բարձր վստահությունը:

ՄԱՍ ԽԱՇԻԿՅԱՆ
ՀԴՏԴ Եղեգնածորի մասնաձյուղի
տնօրեն, դոցենտ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՐԱՀՈՍ

Մարտի 16-ին Փարիզում կինեմատոգրաֆիական համագործակցության դաշնագիր ստորագրվեց Հայաստանի ազգային կինոկենտրոնի և Ֆրանսիայի կինեմատոգրաֆիայի և անիմացիայի ազգային կինոկենտրոնի միջև, նախանշվեցին երկու կինոկենտրոնների հետագա գործունեության ուղղություններն ու առաջնահերթությունները:



Մարտի 19-ին Հունաստանի ազգային գրադարանի կենտրոնական սրահում հանդիսավորությամբ բացվեց «Հիշելով Վիլյամ Սարոյանին» ցուցահանդեսը: Այս առիթով ԱՄՆ-ից, Եվրոպայի տարբեր երկրներից՝ Ֆրանսիայից, Շվեդիայից, Գերմանիայից, Միջին Արևելքից՝ Իրանից ու Լիբանանից, ինչպես նաև Հայաստանից և Հունաստանից բերվել էին Սարոյանի գրքերի բնագրերն ու թարգմանությունները, հատվածներ՝ տեղական թերթերի անդրադարձերից, Սարոյանի լուսանկարներ և հատվածներ աշխատություններից:

Ցուցահանդեսը շարունակվեց մինչև ապրիլի 13-ը:

Մարտի 26-ին Կանադայի մայրաքաղաք Օտտավայի Ալգոնքինի կիրառական արվեստների և տեխնոլոգիայի քոլեջում կայացավ «Մշակույթների տոնահանդես» (Celebration of Cultures) ամենամյա միջոցառումը, որում այլ երկրների կողքին ներկայացված էր նաև Հայաստանի տաղավարը:



Տաղավարում ցուցադրվեցին հայ մշակույթի մասին պատմող նյութեր, զբոսաշրջային ծալագրեր: Հայկական տարազներ հագած երիտասարդները մատուցեցին հայկական ուտեսներ: Ավարտին ցուցադրվեց տեսաժապավեն Հայաստանի տեսարժան վայրերի մասին (The Land of Noah): Տաղավարը մեծ հետաքրքրություն առաջացրեց բազմաթիվ այցելուների մեջ:

Ապրիլի 23-ին Գրքի ու հեղինակային իրավունքի միջազգային օրը, Բուենոս Այրեսից գրքի համաշխարհային մայրաքաղաքի տիտղոսը փոխանցվեց Հայաստանին ու մինչև 2013 թվականը քաղաքամայր Երևանը կլինի գրքի, գրասիրության փառաբանման, գրքասերների համախմբման կենտրոն՝ լրացնելով, հարստացնելով ու շարունակելով Հայ գրատպության 500-ամյակի միջոցառումները: Մեկ տարի անց Երևանն իր կոչումը կփոխանցի Բանգկոկին:




ՀՊՏՀ

Մարտի 7-ին ՀՊՏՀ-ում տեղի ունեցավ մշակութային մի ուշագրավ միջոցառում: Իրենց գեղանկարչական աշխատանքներով ներկայացան չորրորդ կուրսեցիներ, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտության ուսանողուհի Անի Հովհաննիսյանն ու զբոսաշրջության կառավարում մասնագիտության ուսանողուհի Անուշ Հովակիմյանը:

Ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողության ժամանակ ներկաները՝ ռեկտոր Կորյուն Աթոյանը, կառավարման ֆակուլտետի դեկան Էդգար Ղազարյանը, ՀՊՏՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի գեղանկարի ամբիոնի պրոֆեսոր Սարգիս Թերզյանը, գովասանքի, բարեմաղթանքի ջերմ խոսքեր հղեցին շնորհալի աղջիկներին և մաղթեցին ստեղծագործական հաջողություններ: Հենց այս միջոցառման ընթացքում ռեկտորն առաջարկեց ստեղծել շնորհալիների ակումբներ: Առաջարկն ընդունվեց ոգևորությամբ, և այսօր արդեն բուհում իրենց գործունեությունն են ծավալում մի քանիսը:

«Տնտեսագետը» սիրով հյուրընկալեց շնորհալի ուսանողուհիներին, և նրանց հետ զրույցում ծնվեցին այս պատմությունները:

«Պցեսովում եմ, երբ նկարներս ուրախություն ու ծպխք են պարզեում ճարդկանքս»



Անի Հովհաննիսյանը շատերին զարմացրեց, երբ համալսարանականներից ներկայացավ իր գեղանկարչական աշխատանքներով. մինչ այդ նրան գիտեին որպես պարտաճանաչ, նպատակասլաց, իր գործն ու պարտականությունը լավ իմացող ուսանողի:

Պարզվում է՝ Անին նկարել սկսել է միայն վերջերս. «Գույների աշխարհը միշտ էլ գրավել է ինձ: Սակայն չէի համարձակվում մատիտ վերցնել ձեռքս: Մի օր դա էլ պատահեց...»,- ներկայացնելով իր պատմությունը՝ Անին վերհիշում է այն դժվարին փուլը, երբ ընկճվածությունը հաղթահարելու համար վերցրել է մատիտն ու սկսել նկարել:

Ու թեև տխուր ու ներհակ՝ նա սկսել է կյանք տալ իր լուսավոր մտքերին: «Իմ ստեղծագործություններն ուրախություն ու ժպիտ են պարզևում մարդկանց: Այս հանգամանքը ոգևորում է ինձ: Իսկ ընդհանրապես սիրում եմ նկարել այն, ինչն անհրական է: Մարդկանց մեջ էլ ձգտում եմ հայտնաբերել յուրահատուկ, բնութագրական գծեր, ստեղծել նրանց ծիծաղաշարժ, սակայն բնորոշ կերպարները ու դրանք հանձնել թղթին»,- պատմում է Անին:



Պարզվում է՝ նկարելը մեր ուսանողուհու միակ շնորհն ու նախասիրությունը չէ... Նա նաև լավ մարզիկ է, սպորտի վարպետության թեկնածու: Ասում է՝ սպորտն էլ է իր մեջ շատ բան փոխել, դաստիարակել է հաղթանակի հասնելու կամք, համառություն: Անին մեծ ոգևորությամբ է ներկայացնում նաև իր մարզական հաջողությունները. «Մեր համայնքում գործում էր «ԱՋԵՌԱ» (Աջափնյակի ջերմեռանդ աղջիկներ) թիմը, որի անդամ էի նաև ես: Մասնակցում էինք բազմաթիվ մրցաշարերի, զբաղեցնում էինք առաջին հորիզոնականներ: Հաղթել ենք Երևանի համայնքների թիմերի մրցաշարում, երեք տարի անընդմեջ նվաճել Երևանի բասկետբոլի առաջնության գավաթը»:




Ավելացնենք, որ 2007 թ. Երևանի առաջնությունում Անին ճանաչվել է լավագույն խաղացող, իսկ 2008-ին՝ Երևանի փոխանցիկ գավաթի մրցաշարում՝ լավագույն կենտրոնական խաղացող:



Անին այսօր էլ շարունակում է նկարել ու մարզվել, միաժամանակ, սովորում է գերազանց առաջադիմությամբ, սիրում է իր ընտրած մասնագիտությունը, քանի որ այն ստեղծագործելու լայն հնարավորություններ է տալիս. «Կառավարիչը կազմակերպությունը կարող է ղեկավարել իր ձևով: Օրինակ, ես հրամանները կտալի նկարագրողներով և դրանք կփակցնեի պատերին: Այսպես ավելի պատկերավոր ու հետաքրքրական կլինեի և կգրավեի աշխատակիցների ուշադրությունը»,- ասում է և վստահեցնում, որ այս բնագավառում ևս ասելիք ունի:



*Ղևեն հաջողված դիմանկարը՝
Տի ետք շեղբերում*



«Մի օր հայացքս սևեռեցի հայրիկիս դեմքին ու հասկացա, որ մտքում կերտում եմ նրա դիմանկարը: Վերջրեցի թուղթ ու մատիտ, սկսեցի նկարել: Երբ ավարտեցի՝ բոլորը շատ զարմացան... թղթից ասես մեզ էր նայում հայրս»,- իր նկարչական գործունեության սկիզբն է ներկայացնում Անուշ Հովակիմյանը:

Եվ այդ սկիզբն ընդամենը մեկ տարի առաջ էր: Իսկ հետո, ինչպես ինքն է ասում, հաջողված աշխատանքով շատ է ոգևորվել և սկսել է նկարել մտերիմ մարդկանց. **«Թեև իմ բնորդները աշխատանքի վերջնական արդյունքից գոհանում էին ու ոգևորվում, այնուհանդերձ, նրանց համար դժվար էր երկար ժամանակ նույն դիրքով նստելը: Անընդհատ դժգոհում էին, ուստի որոշեցի լուսանկարներից արտանկարել»,-** պատմում է Անուշը և շարունակում, որ իր համար շատ հետաքրքրական է սիրելի հերոսների, հայտնի ու ճանաչված մարդկանց դիմանկարներ կերտելը: Անհամբեր է նկարելիս՝ տեսնես կիսաջողվի՞ գտնել բնութագրական գծեր, բնավորության ու խառնվածքի առանձնահատկություններ, ճշգրտորեն թղթին հանձնել իր զգացածը... Մեծ հուզմունքով է նկարել իր դեկանի՝ Էդգար Ղազարյանի, ճանաչված երգիչներ Ադրիանո Չելենտանոյի, Ալեխանդրո Սանսի, Ալեսանդրո Սաֆինայի դիմանկարները: Ուրախության անասելի պահեր է ապրել, երբ դեկանը ոգևորվել և շնորհակալություն է հայտնել հաջողված դիմանկարի համար: Մեկ այլ դիմանկարի առիթով էլ Անուշն ուշագրավ ու իր համար շատ կարևոր դիպված է պատմում. **«Շատ եմ սիրում աշխարհահռչակ երգիչ Ալեսանդրո Սաֆինային: Գնացել էի նրա երևանյան համերգին՝ ինձ հետ վերցնելով ընդամենը մեկ ժամվա ընթացքում կերտած նրա դիմանկարը: Որոշել էի մի հարմար պահի նվիրել: Երբ դիմանկարը տվեցի երգչին, նա զարմացած նայեց ու բացականչեց. «Mama, mia»: Այնքան էի հուզվել, ողջ կյանքում կհիշեմ այդ օրը»:**




ՀԳՏԳ կառավարման ֆակուլտետում կազմակերպված ցուցահանդեսը նշանակալի ու զեղեցիկ իրադարձություն էր Անուշի կյանքում: Ինչպես ինքն է ասում՝ ներկայացված աշխատանքները կատարել է ընդամենը մեկ ամսում. շատ էր ուզում հասցնել և լավ ներկայանալ: Իր աշխատանքների մասին հնչած գնահատականները, դրվատանքի ու խրախուսանքի քերթ խոսքերը նոր լիցք են հաղորդել, ոգևորել ու հուզել են երիտասարդ ստեղծագործողին:

Անուշը շարունակում է ազատ պահերին նկարել, կատարելագործել գծանկարի տեխնիկան՝ դիմանկարի կատարման մեջ ձգտելով հասնել առավելագույնին:

Այս ամենով հանդերձ, ինչպես ինքն է ասում, նկարելն ընդամենը նրա նախասիրությունն է և իր կյանքում առանցքային տեղ չունի: Թեև նկարելիս հաճույք է ստանում, բայց կարող է նաև ամիսներով չնկարել, քանի որ ժամանակը չի բավականացնում: **«Ուզում եմ մագիստրատուրա ընդունվել ֆինանսական կառավարում մասնագիտությամբ, խորությամբ ուսումնասիրել այս բնագավառը, ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և որպես բարձրորակ մասնագետ օգտակար լինել մարդկանց»,-** ասում է Անուշն այն վճռականությամբ, որ ապագա գործունեությունն անպայման տնտեսագիտության հետ է կապելու: Իսկ նկարելու ի վերուստ տրված շնորհի մասին խորհրդավոր ժպիտով ակնարկում է. **«Գուցե ինչ-որ ժամանակ կոմերցիոն նպատակով օգտագործեմ»:**



ՌՈՒԶԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ



Մարդիկ պարտավորված են ապրում իրենց տրված աշխարհում, ես ստեղծում եմ այն աշխարհը, որտեղ նախընտրում եմ ապրել...

ԷՄԻԼ ԳԱԶԱՉ

«ԵՄ ԱՐՎԵՍՏԻ ՄՅՈՒԿԸ ԵՄ...»

... Ուշ ուշ են գալիս, բայց ոչ ուշացած, ծնվում են նրանք ճի՛շտ ժամանակին...

Եվ ծնվե՛ց... ժամանակի հավիտենականության մեջ ծնվեց մեր օրերի ամենախորհրդավոր, ամենահակասական, ամենամոտ և ամենահեռու հերոսը, ծնվեց ճի՛շտ ժամանակին... և ժամանակից առաջ ընկավ...

Էմիլ Գազազ (Էմանուել Ղազազյան). համաշխարհային արվեստում իր անփոխարինելի տեղն ու դերակատարությունն ունեցող աշխարհահռչակ հայազգի քանդակագործ և նկարիչ, որի ստեղծագործություններում իր ուրույն ներաշխարհն է, սեփական աչքերով տեսած դառը կյանքը, չարն ու բարին, սատանան ու հրեշտակը, իրականն ու անիրականը, այն ամենը, ինչը յուրօրինակ է, անմեկնելի, խորհրդավոր, առեղծվածային...

Էմանուել Ղազազյանը ծնվել է 1953 թ. հունվարի 14-ին Գյումրիում: Երեք տարեկան հասակում մանկապարտեզում փոքրիկ Էմանուելը կերտում է իր առաջին քանդակը՝ «Երեք արջերը»: Այս քանդակի մասին մանկապարտեզի աշխատակիցների նախաձեռնությամբ տեղական թերթում տպագրվում է «Վառ է մանկան երևակայությունը» խորագիրը կրող հոդվածը. մինչ օրս այդ հոդվածը իր արվեստանոցի պատին է, իսկ առաջին քանդակի մասին մանկական հիշողություններն՝ իր սրտում...

Յոթ տարեկանից արվեստի տեղական դպրոցում Էմանուելը սկսել է ուսումնասիրել քանդակագործություն, իսկ 12 տարեկանից՝ հաճախել է Լեոնիականի Մերկուրովի անվան արվեստի դպրոցը: Երևան տեղափոխվելուց հետո շարունակել է ուսումը Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում (1968-1972 թթ.), որից հետո ընդունվել է 1978 թ. հաջողությամբ ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: 1980-ին Էմանուել Ղազազյանը տեղափոխվել է ԱՄՆ (Լոս Անջելես, Կալիֆորնիա), որտեղ էլ ապրում և ստեղծագործում է մինչ այժմ:

Հանճարեղ արվեստագետի համար հեշտ չի եղել կյանքն օտար ափերում... դժվար էր հատկապես սկիզբը... սակայն իր մեջ ուժ, կամք ու կորով գտնելով, նա անվարան զնացել է իր երազանքի հետևից՝ անմնացորդ նվիրվելով քանդակագործությանն ու գեղանկարչությանը: Այսօր արդեն Էմիլ Գազազի ստեղծագործությունները կարելի է գտնել աշխարհի բազմաթիվ թանգարաններում ու ցուցասրահներում: Տարանդաշատ արվեստագետը, իր անկրկնելի գործերով ներկայանալով ոչ միայն ԱՄՆ-ում, այլև Ամերիկա աշխարհամասում և Կանադայում, Եվրոպայում և Ասիայում, մշտապես վաստակել է արվեստասերների հիացմունքն ու բարձր գնահատականը: Պատահական չէ, որ 2003 թ. Ֆլորենցիայի Բինեալեն Էմիլ Գազազին արժանացրել է «Լորենցո Մեդիչի» շքանշանի, իսկ 2007-ին և 2009-ին՝ առավել հեղինակավոր «Լորենցո իլ Մագնիֆիկո» (Մեդիչի) առաջին կարգի մրցանակի՝ քանդակագործության ասպարեզում ունեցած մեծ նվաճումների համար:

Էմիլ Գազազի ստեղծագործություններում անառարկելիորեն պահպանվում են Հայաստանի ամենակոլորիտային քաղաքներից մեկի՝ Գյումրու հարազատ մթնոլորտը, գույներն ու



երանգները, որոնք նա մեծ վարպետությամբ կարողանում է միահյուսել Լուս Անջելեսի ժամանակակից ու բազմերանգ միջավայրի հետ: Գյումրին արտացոլված է Գազազի գրեթե բոլոր ստեղծագործություններում, իսկ նրա ինքնանկարների մեծամասնությունն անվանված է՝ «Գյումրեցին» (The Man from Gyumri): Իր հուշերում միշտ Գյումրին է, իր տունը, փողոցը, հարևանները, իր մանկությունը...

Իր իսկ խոստովանությամբ՝ արվեստի բնագավառում հայտնվելու համար էմիլը պարտական է մորը, որն աշխատելով Գյումրու թատրոնում որպես քարտուղար-մեքենագրուհի՝ վաղ տարիքից տղային ծանոթացրել է թատրոնին, դերասաններին և նրանց կերտած կերպարներին, բեմի գույներին և լույսերին, սովորեցրել հասկանալ դրանց իմաստն ու էությունը: Կուլիսներից Գազազը միշտ իր աշխարհն է տեսել բեմում, իսկ բեմի յուրահատուկ հոտը, ինչպես ինքն է խոստովանում, մինչ օրս պահպանվել է հիշողություններում: Եվ գուցե հենց այդտեղ էլ՝ կուլիսներում ծնվել է արվեստագետի այն անասհման ու վառ երևակայությունը, որով նա արարում է յուղաներկ կտավներ, ձուլում բրոնզե քանդակներ, կերտում տարատեսակ ստեղծագործություններ, որոնք լի են յուրօրինակ դրամատիզմով և գունեղ պատկերայնությամբ, խորհրդավորությամբ և առեղծվածայնությամբ:

Էմիլ Գազազի արարումների ամենամեծ գնահատականը արվեստի գիտականների ջերմ ու անկեղծ խոսքերն են: Արվեստաբան Շահեն Խաչատրյանն ասում է, որ Էմիլի ստեղծագործությունները խիստ զգացական են և, հիշեցնելով անցյալի պատմական դրվագներն ու դեմքերը, նոր խոսք են ասում, միաժամանակ՝ կապվում օրվա մտահոգություններին:

Կալիֆորնիայի գեղարվեստի համալսարանի արվեստի և դիզայնի ֆակուլտետի դեկան Ջո Լուիսի կարծիքով՝ «Գազազի թեմաները զուգորդումն են զգայական խորհրդապաշտության և գրգռիչ ինքնադիտողական վերլուծության: Գերակայում են գեղեցկությունը, սերը և արիությունը: Նա երկու աշխարհների՝ Արևելքի և Արևմուտքի մշակույթների ստեղծագործ փիլիսոփայությունների անզուգական համակարգողն է»:

Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի հիմնադիր, վաստակավոր արվեստաբան, լուսահոգի Զենրիկ Իզիթյանն էլ մի առիթով ասել է. «Յաճախ են հարցնում Էմիլին, թե, ի վերջո, ո՞վ է նա, արվեստի որ տեսակն է նախընտրում, և նա շատ հանգիստ պատասխանում է. «Ես հավասարապես ըմբռնվում եմ տեսողական արվեստի բոլոր տեսակները: Դա նման է, որ մարդուն հարցնեն՝ նա օդը, ջուրը, թե հողն է նախընտրում: Ես նկարիչ եմ, երբ նկարում եմ, գծանկարիչ եմ՝ երբ գծում եմ, և քանդակագործ՝ երբ քանդակում եմ»:

Արվեստագետի կինը՝ «Գեղարվեստի Զայրյան Զովանու» հիմնադիր տնօրեն և Էմիլ Գազազի պրոդյուսեր Սանե Զայրյանը, ով հանձն է առել ներկայացնելու մեծն արվեստագետի գործերը համաշխարհային շուկայում, գրում է. «Էմիլ Գազազը խորհում է զգացմունքներով, զգում՝ մտքով, երևակայականը մատուցում վրձնի խոսքով ու քանդակում բրոնզե պրեմներ... Նրա արվեստը այն ուրույն տեսլականի արդյունքն է, որը, հատելով համաշխարհային արվեստի սահմանները, չի սահմանափակվում վերածննդյան դարաշրջանի կամ արդի արագ զարգացող գեղարվեստական արտահայտչամիջոցներով, այլ յուրօրինակ և ուրույն ձեռագրով դիպուկ ներթափանցում է զուտ մարդասիրության սիրտն ու հոգին...»:

Սանե Զայրյանը, պատմում է, որ ամուսինը հատկապես բժախնդիր է Զայաստանում կազմակերպվող ցուցահանդեսների նկատմամբ. «Աշխարհի տարբեր երկրներում նրա ցուցահանդեսները ես եմ կազմակերպում, և երբեք որևէ խնդիր չի առաջանում, սակայն Զայաստանի նկատմամբ Էմիլ Գազազը հատուկ վերաբերմունք ունի, յուրաքանչյուր նկարի շրջանակ պատրաստելիս կամ որևէ աննշան փոփոխության դեպքում պարտադիր լուսանկարում, ուղարկում եմ իրեն, որ հավանություն տա»:

Չոր ցուցահանդեսի առթիվ հրատարակված ալբոմում արվեստագետի դուստրը՝ Սաթեն, փորձել է պարզաբանել, թե որտեղից են գալիս, ինչպես են ծնվում Գազազի կերտած կերպարները. «Դրանք ստիպում են ձեզ դիտել և հավատալ այնպիսի բաների գոյությանը, որոնց մասին երբեք չենք էլ մտածել կամ երևակայել: Դրանք իրենց ներսում գտնվող փոքրիկ թռչունի ձայնին են արձագանքում, հետևում: Նրանք պատրաստ են իրենց աշխարհիկ կյանքը զոհաբերելու հանուն ճշմարտության: Ես չգիտեմ, թե ինչու Պիկասոն, օրինակ, պարում է իր ներքնագգեստով կամ ի՞նչն էր, որ, ի վերջո, կտրեց վան Գոգի սիրտը, բայց հաստատ գիտեմ, թե ինչու է հայրս՝ Էմիլ Գազազը, ներքուստ այրվում և չի հանգստանում: Որքան հիշում եմ՝ նա ոչ մի օր ցած չի դրել վրձինը, հատիչը կամ ներկապնակը: Երբեմն մտածում եմ, թե արդյո՞ք ինչ-որ բան նրան հետևում է: Նրա ներսում գտնվող փոքրիկ թռչունը մշտապես է արթուն, թե՞ դա ինչ-որ խելագարության նման մի բան է: Եվ եթե այդ խելագարությունը ճշմարտության բացահայտմանն է ծառայում, ապա մենք, կարծում եմ, պետք է թույլատրենք, որ այդ խելագարը պարի:

... Իր գործերը Աստծո գոյությունն են փառաբանում: Նա պայքարում է կեղծ արվեստի, անփառունակ սիրո դեմ: Պատերազմը դեռ չի ավարտված, և եթե մենք վարագույրի հետևից կամացուկ նայենք, ապա կտեսնենք Էմիլին՝ խոնարհորեն աշխատելիս և իր պատգամը քանդակելիս կամ նկարելիս: Պատգամ, որ իր հոգու ճյուղերին թառած փոքրիկ թռչունն է հուշում, և դա սիրո ճշմարտությունն է»:

Համաշխարհային ճանաչում ձեռք բերած և բազմաթիվ երկրներում ցուցահանդեսներով ներկայացած գյումրեցի



արվեստագետը երազանք ունի՝ ուզում է երևանը դարձնել Ֆլորենցիա՝ բարձրաճաշակ քանդակներով լի քաղաք, թանգարան՝ բաց երկնքի տակ:

Տարիներ առաջ տրված մի հարցազրույցում, երբ էմիլ Գազազին խնդրել են մանրամասնել, թե ինչպես է ծագել Հայաստանում իր թանգարաններով ներկայանալու գաղափարը, նա պատասխանել է. «Ախր, այդ հարցերը պետք է Մանեին ուղղեք, ոչ թե ինձ. ես այդ գործերում չկամ: Ես արվեստի ստրուկն եմ ու արարելուց բացի ինձ ուրիշ ոչինչ չի հետաքրքրում: Մանեն էլ արվեստի ու քիզնեսի ստրուկն է: Մենք սահմանագիծ ունենք, ու ոչ մի դեպքում չենք խախտում սահմանը, ես միայն ստեղծագործում եմ, իսկ նա մնացյալն է իրագործում...»:

Հետևելով մեծն արվեստագետի «խորհրդին»՝ մենք որոշեցինք հենց այդպես էլ վարվել և մեզ հետաքրքրող հարցերն ուղղել համաշխարհային շուկայում էմիլ Գազազի ստեղծագործությունների բացառիկ ներկայացուցիչ Մանե Հայրյանին: Արվեստագետի կինը ԱՄՆ-ից սիրով համաձայնեց պատասխանել «Տնտեսագետի» հարցերին:

-Մանե՛, Հայաստան կատարած Ձեր վերջին այցելությունից երեք տարի է անցել: Ի՞նչ նոր աշխատանքներով և ուշագրավ իրողություններով է հարստացել արվեստագետի ստեղծագործական կյանքն այդ ժամանակահատվածում:

- 2009-ի աշնանը ՀԲԸՄ հվ. Կալիֆորնիայի շրջանային հանձնաժողովի կազմակերպած մեծարման երեկոյի ընթացքում էմիլ Գազազը պարզևատրվեց «Սահակ Պարթև-Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, որն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից նրան հանձնեց Հայաստանյաց եկեղեցու հս. Ամերիկայի արևմտյան թեմի առաջնորդ Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանը: Այնուհետև Գազազը պարզևատրվեց «Մովսես Խորենացի» շքանշանով: Իսկ 2010 թ. հոկտեմբերի 10-ին ծնվեց մեր որդին՝ կրտսեր էմիլը, որի ծնունդով փոխվեցին հոր աշխարհի գույները...

Չնայած համաշխարհային տնտեսական ճգնաժամին, Գազազի ստեղծագործական կյանքում ոչ մի ճգնաժամային փոփոխություն չնկատվեց. քրտնաջան և անսպառ աշխատանքները շարունակվում էին առանց դադարի: 2009-2012 թթ. ընկած ժամանակահատվածում Գազազի ցուցահանդեսների անվերջանալի շղթան ընդհատվեց 2012 թ. փետրվարի վերջին Լոս Անջելեսում կազմակերպված ժամանակակից արվեստների փառահեղ ցուցահանդեսից հետո, որտեղ նրա գործերը համարվեցին «The Highlight of the Show»: Հաջորդելու է Հայաստանի դեսպանատան կազմակերպած ցուցահանդեսը՝ մայիսին: Այս անգամ կցուցադրվեն նրա վերջին երեք տարիների (2009-2012 թթ.) գործերը:

- Հայաստանում ե՞րբ կբացվի էմիլ Գազազի անհատական ցուցահանդեսը:

- Հայաստանում ցուցադրություններ կազմակերպելու առաջարկները շատ են, սակայն ոչ մի հստակ որոշում կամ ծրագիր չկա մինչ օրս: Գազազին, իհարկե, ոչ մի ցուցահանդես չի գերում աշխարհի և ոչ մի երկրում: Իր փառահեղ ցուցահանդեսներին, որտեղ միայն իր գործերը դիտելու նպատակով է գնում արվեստասեր հասարակայնության մեծամասնությունը, նա անգամ ներկա չի գտնվում: Փոխարենը մտովի ամեն վայրկյան իր հայրենիքում է, իր ժողովրդի հետ, լուռ քայլում է երևանի գիշերային փողոցներով՝ «Իմ տունն ինձ է կանչում» երազով:

- Երեք տարի առաջ տրված հարցազրույցում «Ո՞րն է Ձեր կյանքի ամենամեծ ձեռքբերումը» հարցին էմիլ Գազազը պատասխանել էր՝ «Մանեն...»: Այսօր եթե հարցը կրկնվեր, ի՞նչ կպատասխաներ էմիլ Գազազը...

- Մեր հրաշքը՝ փոքրիկ էմիլը ... Օրվա մեջ պատահում է երբեմն նույնիսկ երեք անգամ արվեստանոցից գալիս հասնում է տուն, որ համբուրի ձագուկին ու էլի վերադառնա արվեստանոց՝ աշխատելու: «Էներգիա սպառվել է, լիցքավորման կարիք ունեն» ասելով համբույրներով ողողում է փոքրիկին ու «Պահ, պահ, ես ինչքան էներգիա ստացա» ասելով ժպիտը դեմքին նորից գնում արարելու...

- Մանե՛, էմիլ Գազազն ունի՞ չիրականացած երազանքներ:

-էմիլը վաղեմի մի երազանք ունի՝ ապրել և ստեղծագործել իր հայրենի հողում: Երկրաշարժից հետո կորցնելով հայրական տունը՝ էմիլի նվիրական երազանքն է Գյումրու հին տներից մեկը դարձնել իր տուն-թանգարանը: Հուսով եմ՝ մի օր նրա այս երազանքն էլ իրականություն կդառնա...



ԼԻԼԻԹ ԴԱԴԱՅԱՆ
մարքեթինգի ամբիոնի ասիստենտ

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՋՈՐԱՑՆԻ ՈՉ ՄԻԱՅՆ ՍՊՈՐՏԸ

Ստորև ներկայացնում ենք ՀԱՕԿ-ի «Արդարացի խաղ» կոմիտեի դիմում-կոչը, որը ներառում է վերոնշյալ մանիֆեստի դրույթները:

Միջազգային օլիմպիական կոմիտեն մեծ նշանակություն է տալիս «Արդարացի խաղի» սկզբունքների պահպանմանն ու տարածմանը՝ ամեն տարի մրցանակներ շնորհելով արժանավորներին: Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեին կից 1997 թ. ստեղծվեց «Արդարացի խաղի» կոմիտեն, որի առաջին նախագահը Աշոտ Մելիք-Շահնազարովն էր: Ներկայումս հանձնախմբի աշխատանքները ղեկավարում է միջազգային գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը, փոխնախագահն է ԳՊՏԳ ֆիզդաստիարակության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լևոն Սամվելյանը: Նշենք, որ նա կանգնած է եղել «Արդարացի խաղ» կոմիտեի ստեղծման ակունքներում և մեծ ավանդ է ունեցել հատկապես երիտասարդության շրջանում այդ գաղափարների տարածման գործում: Լևոն Սամվելյանը հեղինակ է «Արդարացի խաղը բոլորի համար» մենագրության (2001 թ.), «Սպորտը և արդարացի խաղը» ուսումնական ձեռնարկի (2006 թ.):

«Մեր նպատակն է սպորտում պահպանել բարոյական արժեքները: Դա վերաբերում է մարզիկներին, մարզիչներին, մրցավարներին, մեկնաբաններին, նույնիսկ մարզասերներին ու երկրների ղեկավարներին: Բարոյական արժեքների պահպանումը մարզաշխարհը գերծկպահի բախումներից, ատելությունից, թշնամանքից: Մարզական մեկնաբանի մեկ անզգույշ խոսքը, մրցավարի թեկուզ ոչ դիտավորյալ, բայց անարդար որոշումը կարող են ճակատագրական լինել, մինչդեռ սպորտը պետք է համախմբի, սիրո և եղբայրության դրոշի տակ մեկտեղի մարդկության բարձր ձգտումները, գաղափարները»,- «Տնտեսագետի» հետ զրույցում նշեց Լևոն Սամվելյանը՝ ավելացնելով, որ «Արդարացի խաղ» միջազգային կոմիտեն 2011 թ. հռչակել է մանիֆեստ, որի դրույթները հասցեագրված են ոչ միայն մարզաշխարհի ներկայացուցիչներին: Լևոն Սամվելյանը հայտնեց, որ ՀԱՕԿ-ի «Արդարացի խաղ» կոմիտեն իր խնդիրն է համարում հրապարակայնացնել այս դրույթները՝ ուղարկվելով բոլոր մարզածների ֆեդերացիաներ, մարզադպրոցներ, բուհեր ու դպրոցներ՝ որպես կոչնակ արդար մրցակցության, ազնիվ գործելաոճի:

Հարգելի ընկե՛ր: Գաղտնիք չէ, որ սպորտում գնալով ավելանում են օրինախախտումները, որոնց պատճառով էլ արժեզրկվում են սպորտի բարոյական արժեքները: Միանալով «Արդարացի խաղ» միջազգային կոմիտեի 2011 թ. հռչակած մանիֆեստի դրույթներին և կոչին՝ ասում ենք. Ձեր և մեր բոլորի համար չկա սպորտ առանց արդարացի խաղի, մենք նույնպես հայտնում ենք մեր հաստատակամությունը և խորապես համոզված ենք, որ առանց արդարացի խաղի աշխարհում չի կարող պահպանվել և ոչինչ:

1. Մենք հավատում ենք՝ սպորտը ներառում է մարզախաղեր, որոնք մարդիկ ընտրում են կամովի: Սպորտը բոլորի համար հաճույք է և առողջություն, նաև մրցակցություն, պայքար ինքդ քեզ հետ և մրցակցի, այն իմաստավորվում է, երբ միասնացնում է ու միավորում մարդկանց, տարբեր ազգերին և ժողովուրդներին:
2. Մենք հավատում ենք՝ սպորտի մեջ «Արդարացի խաղը» հավատարմության և համերաշխության երաշխիքն է: Առանց վարանելու պետք է ասել, որ այն յուրաքանչյուր մարդու խղճի արտահայտությունն է, նրա բարոյական նկարագիրը: Այն հանդուրժողականության և համբերատարության հիմնական խթանիչ ուժն է և ազդակը:
3. Մենք հավատում ենք, որ սպորտը կտրականապես պետք է մերժի բռնությունը, սուտը և խաբեությունը: Դրանք պետք է մերժվեն բոլորի կողմից միասնականորեն՝ ողջ աշխարհում, բոլոր ազգերի և ժողովուրդների կողմից, անկախ կրոնական և ռասսայական պատկանելությունից:
4. Մենք հավատում ենք՝ ազրեսիան չի կարող խրախուսվել: Մրցակիցները թշնամիներ չեն, այլ ընկերներ են, սոցիալական երևույթ և արժեք՝ նույն հասարակության մեջ: Սպորտային մրցակցության ավարտից հետո պարտավորները նույնքան կարևոր դեր ունեն, որքան հաղթողները: Այստեղ պետք է հիշել մեծն Պլատոնի խոսքը. «Չկա ավելի մեծ հաղթանակ, քան հաղթանակը հենց քո նկատմամբ»:
5. Նախընտրելի է ավելի մեծ ուշադրություն դարձնել սպորտի և նրա արժեքների վրա, քան լուր արդյունքների, որոնք ինչպես միշտ, ժամանակավոր են ու անցողիկ: Կարևորը մարդկանց հարաբերություններն են և սպորտի հոգևոր արժեքները, դա կատեգորիա է:
6. Մենք հավատում ենք՝ «Արդարացի խաղը» կդառնա 21-րդ դարի խորհրդանիշ: Այն պահանջում է ավելի մեծ ուշադրություն, շարունակական ջանք և համոզմունք:
7. Մենք հավատում ենք, որ դպրոցականները և երիտասարդները սրտանց պայքարում են «Արդարացի խաղի» սկզբունքները և կանոնները կյանքի կոչելու համար:
8. Մենք հավատում ենք՝ արդար մրցակցությունը պետք է դառնա նպատակ ոչ միայն մարզիկների և մարզիչների համար, այլև կենսաձև բոլոր մարդկանց համար՝ անկախ աշխատանքի բնույթից և զբաղվածությունից:
9. Մենք հավատում ենք՝ «Արդարացի խաղը» անփոխարինելի դեղամիջոց է ողջ աշխարհում: Այն պետք է ճանաչվի բոլորի կողմից, խրախուսվի և տարածվի որպես հասարակական երևույթ և գերագույն միջոց:

ՀԱՕԿ-ի «Արդարացի խաղ» կոմիտեն հույս է հայտնում, որ վերոնշյալ դրույթները կճանաչվեն Ձեր կողմից և տարածում կստանան ոչ միայն սպորտում, այլև կենցաղում՝ տանը, դպրոցում, աշխատանքում, այնտեղ, որտեղ գերակշռում են կորպորատիվ հարաբերությունները, ընկերասիրությունը և բարի կամեցողությունը:

Հարգարժան համաքաղաքացիներ, սիրե՛ք միմյանց, պահպանե՛ք մարդասիրական գաղափարները:

**ՀՊՏՀ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ՝ ՀՀ ԶՈՒ
ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻՆ
ՆԿԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 13-ՐԴ ՄԱՐԶԱԿԱՆ
ԽԱՂԵՐԻ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿԻՑ**



**2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՊՏՀ 10
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ**

ՀՊՏՀ ֆիզդաստիարակության ամբիոնի որոշ մամբ՝ 2011 թ. տարբեր մարզաձևերում և առաջնություններում ցուցաբերած մարզական հաջողությունների համար համալսարանի տասը լավագույն մարզիկներ են ճանաչվել.

Հովհաննես Արզումանյան՝

ՀՀ բուհական արագ շախմատի չեմպիոն (ֆինանսական ֆակուլտետ, 4-րդ կուրս),

Լուսինե Թորոսյան՝

շախմատի երիտասարդական հանրապետական առաջնության արծաթե մեդալակիր (ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ, 4-րդ կուրս),

Լիանա Սաղոյան՝

սեղանի թենիսի հանրապետական ուսանողական խաղերի չեմպիոն (մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ, մագիստրատուրա, 2-րդ կուրս),

Անի Ատուրյան՝

սեղանի թենիսի հանրապետական ուսանողական խաղերի չեմպիոն (կառավարման ֆակուլտետ, 4-րդ կուրս),

Շողեր Անտոնյան՝

սեղանի թենիսի հանրապետական ուսանողական խաղերի չեմպիոն (տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ),

Խաչիկ Ներկարարյան՝

սեղանի թենիսի հանրապետական ուսանողական խաղերի և ՀՀ չեմպիոն (ֆինանսական ֆակուլտետ, մագիստրատուրա, 2-րդ կուրս),

Արմեն Ֆիշյան՝

ֆուտբոլի ուսանողական հանրապետական խաղերի 2-րդ մրցանակակիր, ՀՀ ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբի մասնակից (կառավարման ֆակուլտետ, 4-րդ կուրս),

Դավիթ Գրիգորյան՝

ֆուտբոլի ուսանողական հանրապետական խաղերի 2-րդ մրցանակակիր, ՀՀ ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբի մասնակից (մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ, մագիստրատուրա, 1-ին կուրս),

Համլետ Տոնոյան՝

ձեռքի գնդակի ուսանողական հանրապետական խաղերի 2-րդ մրցանակակիր (մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ, 4-րդ կուրս),

Արամ Մելքոնյան՝

ՀՀ վոլեյբոլի հավաքականի անդամ, ՀՀ չեմպիոն (ֆինանսական ֆակուլտետ, 3-րդ կուրս):